



**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄ**

2023 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՀ ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1 Հայտարարագրման գործընթացի կանոնակարգում

2.2 Հայտարարագրերի ստուգում և վերլուծություն

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1 Հանրային պաշտոն գրաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

3.2 Հանրային ծառայողների և հանրային պաշտոն գրաղեցնող անձանց կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում նվերներ ստանալու սահմանափակումների ինստիտուտի բարելավում

3.3 Հանրային պաշտոն գրաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախումը, անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումները

IV. ԿՈՒՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

4.2 Անհամատեղելիության պահանջների խախտման և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ

4.3 Վարույթների արդյունքում կայացված վարչական ակտերի (բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների) բողոքարկումը

V. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

VII. ԿՈՒՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը և կառավարումը հանրային հատվածում

VIII. ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը

8.2 Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ նախատեսվող կրթական

ծրագրերի իրականացման հնարավորությունները

8.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

IX. ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՄԵԴԻԱ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

9.1 Հանձնաժողովի ուսումնասիրած դիմում-գրությունները և մամուլի
հրապարակումները

X. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

XI. ԱՄՓՈՓՈՒՄ



1. ՀՀ ՀԱՎԱԿՈՒՌՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոռուպցիայի կանխարգելումը հանդիսանում է ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության գերակա ոլորտներից մեկը և իր ամրագրումն է ստացել ինչպես միջազգային հարաբերություններից ստանձնած մի շարք պարտավորություններում, այնպես էլ ներպետական քաղաքականության փաստաթղթերում:

2019 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության N 1332-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը, որտեղ կոռուպցիայի կանխարգելման նպատակով համապատասխան ինստիտուցիոնալ համակարգի կայացումը դիտարկվում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական հենասյուններից և առանցքներից մեկը: Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջազգային պարտավորությունների տեսանկյունից ՀՀ կառավարությունը պարտավորություններ է ստանձնել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում, Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած 2006 թ. գործողությունների ծրագրում, Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2015-2018թթ, և 2019-2022 թթ. գործողությունների ծրագրում և այլն:

2022 թվականին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) իր գործունեության մեջ կարևորել է ինստիտուցիոնալ կայացումը, այն է՝ գործունեության նպատակների, խնդիրների և իրականացման ծրագրի սահմանումը, կառավարման ներքին ընթացակարգերի և կանոնակարգումների սահմանումը: Օրենսդրական փոփոխությունների համատեքստում մշակվել և գործածության մեջ են դրվել շահերի բախման և

անհամատեղելիության հայեցակարգերը, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, նախագծվել են ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները՝ հետապնդելով Հանձնաժողովի գործունեության երկարաժամկետ ռազմավարության մշակման նպատակ:

Ջուզահեռաբար, կատարվել են նաև օրենքից բխող գործառույթային մասնագիտական պարտավորություններ՝ հայտարարագրերի հավաքագրում և վերլուծություն, որոշակի պատշոնների հավակնորդ թեկնածուների բարեվարքության ուսումնասիրություններ, ինչպես նաև իրականացվել են տարբեր վարչական վարույթներ:

2022-2024 թվականների համար Հանձնաժողովը նախանշել է յոթ հիմնական թիրախներ՝

1. հայտարարագրերի վերլուծության և հնարավոր խախտումների հայտնաբերման մեխանիզմների արդյունավետության բարձրացում.

2. պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման, անհամատեղելիության, վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումների նվազեցում.

3. պետական պաշտոնների նշանակման ենթակա անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության օրենսդրական և գործնական հնարավորությունների ընդլայնում և կատարելագործում.

4. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրանց կառավարման համակարգի ներդրում.

5. կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության մեխանիզմների կատարելագործում.

6. կոռուպցիայի կանխարգելման և դրա հիմնական թիրախների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում և կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ապահովում.

7. Հանձնաժողովի միջազգային համագործակցության խթանում:



II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

2.1 Հայտարարագրման գործընթացի կանոնակարգում

Հանձնաժողովի առանցքային գործառույթներից են հայտարարագրման գործընթացի կանոնակարգումը, հայտարարագրերի ստուգումն ու վերլուծությունը: Հայտարարագրման գործընթացը միտված է ապահովելու հայտարարատու պաշտոնատար անձանց հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, զսպելու կոռուպցիոն հնարավոր ռիսկերը, առաջացնելու պաշտոնատար անձանց վարքագծի փոփոխություն:

ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՐԱՆՑՈՒՄ

Հանձնաժողովը պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել և Համակարգ է մուտքագրել թվով 1085 ռեեստր պաշտոնների՝ 6532 փոփոխությունների վերաբերյալ: Ստացված ռեեստրներում առկա տվյալների համաձայն՝ ստացված փոփոխությունները վերաբերել են՝ 3237-ը պաշտոնի ստանձնմանը, 3295-ը՝ պաշտոնի դադարեցմանը: Ընդ որում՝ 322 պաշտոնատար անձինք պաշտոնը ստանձնել և պաշտոնավարումը դադարեցրել են 2022 թվականին:

Հանձնաժողովի կողմից ստացված ռեեստրների մասով առկա են մի շարք խնդիրներ, որոնց թվում են՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից դրանց ներկայացման ժամկետների և կարգի խախտումները, իրավական ակտերի բացակայությունը, ձևաթղթի լրացման, ներկայացված տվյալների անհամապատասխանությունը: Նշված խնդիրները նվազեցվել են Հանձնաժողովի կողմից պարբերաբար իրականացված իրազեկման միջոցառումների արդյունքում: Այդ համատեքստում՝ ռեեստրներով ստացված 1256 փոփոխությունները վերաբերել են նաև նախորդ տարիներին, որոնցից 599-ը՝ պաշտոնի ստանձնմանը, 657-ը՝ պաշտոնի դադարեցմանը:

Ռեեստրներով ստացված պաշտոնների փոփոխությունների մուտքագրման արդյունքում տարեվերջի դրությամբ համակարգում գրանցված պաշտոնատար անձանց թիվը կազմել է շուրջ 6000:

Հանձնաժողովը նախատեսում է պաշտոնատար անձանց պաշտոնների փոփոխությունների գրանցման վերաբերյալ խնդիրները կարգավորել հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի ներդրմամբ՝ տվյալների ինքնաշխատ եղանակով փոխանցման միջոցով:

ԻՐԱԶԵԿՍԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայտարարատուների հետ տարվող աշխատանքները կանոնակարգելու, համակարգելու նպատակով Հանձնաժողովի առաջարկով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակվել են հայտարարագրման գործընթացի խորհրդատուներ, որոնց հետ Հանձնաժողովը նախաձեռնել է «Հայտարարագրման գործընթացը» խորագրով աշխատանքային քննարկումներ: Քննարկումների ընթացքում Հանձնաժողովի կողմից ներկայացվել են հայտարարագրման գործընթացի հետ կապված բոլոր օրենսդրական կարգավորումները, փոփոխությունները, ընթացակարգերը, տարեկան հայտարարագրի ձևանմուշի օրինակով ներկայացվել են հայտարարագրերի լրացման կարգը, առանձնահատկությունները, հայտարարագրեր չներկայացնելու դեպքում՝ վարչական պատասխանատվությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հնչեցված բոլոր հարցադրումներին և առաջարկներին:

Հաշվի առնելով որոշ հայտարարատուների՝ վերոնշյալ աշխատանքային քննարկումներին հեռավորության պատճառով անձամբ մասնակցել չկարողանալու հանգամանքը՝ Հանձնաժողովը միաժամանակ կազմակերպել է նաև առցանց աշխատանքային քննարկում մարզերի և գերատեսչությունների հայտարարատուների համար:

Հայտարարատուներին հայտարարագրման գործընթացում շարունակական աջակցություն ցուցաբերելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի փոփոխություններով հայտարարատուները 2021 թվականի տարեկան հայտարարագրերում առաջին անգամ են տվյալներ ներկայացնում իրենց ծախսերի, փաստացի տնօրինվող գույքի վերաբերյալ, Հանձնաժողովի նախաձեռնությամբ և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ «Հայաստանի բարեվարքություն»

ծրագրի շրջանակներում ստեղծվել են հայտարարագիր լրացնելու աջակցության վեբաբերյալ թվով 11 տեսահոլովակներ:

Միաժամանակ, շարունակական է եղել Հանձնաժողովի կողմից հեռախոսազանգի և էլեկտրոնային փոստի միջոցով ինչպես հայտարարատուներին, այնպես էլ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նշանակված խորհրդատուներին հայտարարագրման գործընթացի վեբաբերյալ աջակցության տրամադրումը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐ

Իրականացված միջոցառումների արդյունքում Հանձնաժողով է ներկայացվել 15598 հայտարարագիր, այդ թվում՝

<i>Ներկայացված հայտարարագրերի տեսակ</i>	<i>Ներկայացված հայտարարագրերի քանակ</i>
Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագիր	5722
Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր	1094
Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագիր	1147
Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագիր	5879
Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա	895

**դրությամբ առկա գույքի և եկամուտների
հայտարարագիր**


**Հայտարարատու պաշտոնատար անձի
ընտանիքի անդամի՝ հայտարարատու
պաշտոնատար անձի՝ պաշտոնեական
պարտականությունները դադարեցնելու օրվա
դրությամբ առկա գույքի, եկամուտների և
ծախսերի հայտարարագիր**

861

Ընդամենը

15598

**ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ
ՏԵՍԱԿՆԵՐԻ**




Կալանավայրում գտնվելու հանգամանքով պայմանավորված՝ հայտարարագիրն էլեկտրոնային տարբերակով հանձնել չկարողանալու

պատճառով ներկայացված դիմումի հիման վրա ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով Հանձնաժողով է ներկայացվել 2 հայտարարագիր:

ՈՒՂՂՄԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ

Իրազեկման միջոցառումների շրջանակներում հայտարարատուների իրավագիտակցության բարձրացման արդյունքում ավելացել է նախկինում ներկայացված հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ Հանձնաժողով ներկայացված դիմումների թվաքանակը: Հանձնաժողովը ստացել է հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 317 դիմում, որից 269-ը բավարարվել է, 13-ը՝ մերժվել, իսկ 35-ը գտնվում է ուսումնասիրության փուլում:

Ուղղման դիմումների քանակական ցուցանիշներն՝ ըստ արդյունքների



Հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 317 դիմումներից 226-ը ստացվել են հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից, այդ թվում՝ 8-ը կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների կողմից, 91-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից:

Հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումները վերաբերել են տարբեր ժամանակահատվածներում ներկայացված տարեկան, պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերում տեխնիկական և կամ բովանդակային սխալ կամ բացթողնված տվյալների փոփոխությանը կամ ավելացմանը, մասնավորապես՝

հիփոթեքային վարկավորմամբ գնման իրավունքի ձեռք բերման գործարքների, բաժնային կամ համատեղ սեփականությամբ գույքային իրավունքի, եկամուտների, արժեթղթերի, հավատարմագրային կառավարման հանձնված կազմակերպությունների, տրված և ստացված փոխառությունների, կատարված ծախսերի, դրամական միջոցների, կուսակցություններին անդամակցելու և այլ տվյալների փոփոխությանը կամ ավելացմանը:

Հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 13 դիմումները, քանի որ դրանցում նշված տվյալ(ներ)ի անհամապատասխանությունն այլ կերպ բացահայտված է եղել: Նշված դիմումների մերժման համար հիմք են հանդիսացել՝

✓ Գլխավոր դատախազության տրամադրած տեղեկությունն առ այն, որ տվյալ անձանց կողմից ներկայացված հայտարարագրերը հանդիսանում են քրեական գործով ապացույց,

✓ Հանձնաժողովի կողմից իրականացված բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության շրջանակներում անհամապատասխանությունների նախապես հայտնաբերումը,

✓ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներն ու գործերի քննության մեջ լինելը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգը ստեղծվել է ավելի քան տասը տարի առաջ: Հայտարարատուների թվի աճման, հայտարարագրերում ներկայացվող տեղեկությունների ընդլայնմանը զուգընթաց գործող համակարգը աշխատել է գերձանրաբեռնված ռեժիմով և քանի որ թվային տեխնոլոգիաների արագընթաց աճին զուգահեռ տեխնիկական հնարավորություն չունեի պատշաճ կերպով ապահովելու հայտարարագրման գործընթացի բնականոն կազմակերպումը, հաշվետվողականության ու թափանցիկության պատշաճ ապահովումը, Հանձնաժողովը ձեռնամուխ է եղել հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի ստեղծմանը, ինչը հնարավոր է դարձել իրագործել Կառավարության աջակցությամբ և Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ: Հայտարարագրման գործընթացը մեծամասամբ վերահսկվել է մեխանիկական աշխատանքի միջոցով, ինչը լրացուցիչ ռեսուրսների կարիք, մեխանիկական հավանական սխալների ռիսկ է առաջացրել: Հայտարարագրերի վերլուծությունը ևս իրականացվել է պահանջվող տվյալները մեխանիկական

եղանակով կիսաավտոմատացված ծրագրեր մուտքագրելու, համադրելու, հաշվարկելու և վերլուծելու միջոցով:

Վերհանելով գործող էլեկտրոնային համակարգում առկա խնդիրները, առկա մարտահրավերները չեզոքացնելու, հայտարարագրերի լրացումն ու ներկայացումը առավել դյուրին դարձնելու, մարդկային գործոնը հնարավորինս բացառելու, հայտարարագրերի ստուգումն ու վերլուծությունն ավտոմատացնելու, հաշվետվողականությունն ու թափանցիկությունը պատշաճ մակարդակով ապահովելու նպատակով՝ Հանձնաժողովը հայտարարագրման թվային նոր հարթակի համար մշակել և հաստատել է տեխնիկական առաջադրանքը, որը բացի որակյալ տվյալների հավաքագրումից, ունենալու է բարդ վերլուծական և հաշվետվողական հնարավորություններ, ինչպես նաև կապվելու է Կառավարության փոխգործելիության հարթակի հետ և ծառայելու է Հանձնաժողովի բիզնես գործընթացներին: Այս տեսանկյունից Հանձնաժողովը գրեթե մեկ տարվա ընթացքում ուսումնասիրել է արդեն գոյություն ունեցող նմանատիպ համակարգերը դրանց ֆիզիկական, ինչպես նաև տեխնիկական հնարավորությունների տեսանկյունից. թե ինչպե՞ս են գործող համակարգերը արդյունավետ ապահովում տվյալների հավաքագրումը, ինչպե՞ս է տեղի ունենում այդ տվյալների մթերումը, ի՞նչ սկզբունքով է տեղի ունենում տվյալների մշակումը, ի՞նչ սկզբունքով են ստացվում հաշվետվությունների և տեղեկությունների արդյունքները և, առհասարակ, ինչպե՞ս է ապահովվում պետության կողմից մարդու վերաբերյալ հավաքագրված տվյալների անվտանգությունը և անհատական տվյալների պաշտպանությունը: Համակարգը, որը նախագծվել է, որպես տեխնիկական առաջադրանք, իրենից ներկայացնում և հիմնվում է հիմնականում ժամանակակից տեխնոլոգիաների կողմից տրված հնարավորությունների, մասնավորապես՝ ալգորիթմերի միջոցով ավտոմատացված կերպով որոշումների կայացման և երբեմն նաև արհեստական բանականության օգտագործման միջոցով, որոնք պետությանը հուշում են հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին: Այս ամենը հաշվի առնելով՝ կազմված տեխնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացվել է Կառավարությանը, որի հայտարարած գնման մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմզ» ընկերությունը:

Շուրջ մեկ տարի Հանձնաժողովը «Սիներջի ինթերնեյշնլ սիսթեմզ» ընկերության հետ շարունակական աշխատանքներ է տարել հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի նախագծումը, կառուցումը և գործարկումը պատշաճ կազմակերպելու համար, որում ներգրավված են եղել նաև բոլոր այն պետական գերատեսչությունները, որոնցից հնարավոր է եղել ստանալ

հայտարարագրման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար վերաբերելի բոլոր տվյալները: Այդ նպատակով հունիս ամսին Հանձնաժողովի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի ֆինանսական աջակցությամբ կազմակերպվել է բարձր մակարդակով աշխատաժողով, որին մասնակցություն են ունեցել պետական կառավարման համակարգի մոտ 30 մարմնի և ոլորտային կազմակերպությունների ավելի քան 60 ներկայացուցիչներ և միջազգային փորձագետներ, ներկայացրել իրենց կողմից վարվող տվյալների շտեմարանները, վերհանել հնարավոր խնդիրներն ու ներկայացրել հնարավորությունները: Աշխատաժողովի ամփոփման արդյունքում Հանձնաժողովը զուգահեռաբար սկսել է գերատեսչություններում առկա շտեմարաններին հասանելիության ապահովման աշխատանքները:

Թվային տեխնոլոգիաների ինտեգրման և հատուկ մշակված ալգորիթմների կիրառման արդյունքում հնարավորություն է ստեղծվելու ինչպես հայտարարագրման, այնպես էլ հայտարարագրերի վերլուծության գործընթացը առավել արդյունավետ դարձնել, ապահովելու հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, հնարավորինս բացառելու մարդկային գործոնով պայմանավորված՝ աշխատանքների իրականացումը: Նախատեսվում է հայտարարատուի կողմից ներկայացված՝ նախորդ տարեկան հայտարարագրերի տարեվերջին հայտարարագրված տվյալներն ինքնաշխատ եղանակով արտացոլել հաջորդ տարեկան հայտարարագրերի տարեսկզբին առկա տվյալներում, փոխգործելիության հարթակի ինտեգրման միջոցով համապատասխան գերատեսչությունների շտեմարաններից ինքնաշխատ եղանակով բեռնել հայտարարագրման ենթակա տեղեկությունները, որոնց ապահովման արդյունքում հայտարարագրերը մեծամասամբ կլրացվեն ինքնաշխատ եղանակով՝ դրանով հայտարարատուի համար հնարավորություն ստեղծելով խնայելու ժամանակը ինչպես հայտարարագրի լրացման, այնպես էլ տվյալների հավաքագրման համար: Հայտարարագրերի առավել որակյալ վերլուծությանը օժանդակելու են ռիսկային ցուցիչների հիման վրա մշակված ալգորիթմները, որոնց արդյունքում համակարգը հնարավորինս զերծ է լինելու մարդկային գործոնով պայմանավորված ընտրողական մոտեցումներից, բացառվելու են մեխանիկական հնարավոր սխալները:

2.2 Հայտարարագրերի ստուգում և վերլուծություն

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է հայտարարագրերի ստուգումն ու վերլուծությունը:

Հանձնաժողովն իրականացրել է 1703 հայտարարագրերի ստուգում, ըստ այդմ՝ հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետներում չներկայացրած 1403 հայտարարատուները գրավոր ծանուցվել են հայտարարագրերը 30-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, որի արդյունքում ներկայացվել են 1306 հայտարարագրեր, իսկ ծանուցմամբ նշված ժամկետում հայտարարագրերը չներկայացրած 97 հայտարարատուների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:

Հայտարարագրերի ներկայացման ժամկետների վերլուծությունից պարզվել է, որ չներկայացված հայտարարագրերի գերակշիռ մասը՝ 75/25 տոկոսային հարաբերակցությամբ, կազմում են համայնքների հայտարարատուները: Նշված խնդրի լուծման նպատակով, որպես իրազեկման միջոցառումների իրականացման թիրախային ուղղություն, 2023 թվականի համար առաջնահերթությունը տրվել է համայնքապետարանների հայտարարատուներին:

Հայտարարագրերի վերլուծությունն իրականացվում է Հանձնաժողովի որոշմամբ՝ ռիսկային ցուցանիշների, հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա:

Հայտարարագրերի վերլուծության առանցքային նպատակը պաշտոնատար անձանց գույքային դրության հաշվետվողականության ու թափանցիկության ապահովումն է, կոռուպցիոն հնարավոր ռիսկերի վերհանումն ու զսպումը, պաշտոնատար անձանց վարքագծի փոփոխությունը:

Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջում և ստանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային

պատմություն, գույքի փաստացի տիրապետումը, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելն ստուգելու նպատակով դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանում անհրաժեշտ տեղեկություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրման գործող էլեկտրոնային համակարգը չունի վերլուծության որևէ հնարավորություն և որ հավաքագրված տվյալների որակը միշտ չէ, որ թույլ է տալիս տվյալների ավտոմատ վերլուծություն կատարել, Հանձնաժողովը փորձագետի աջակցությամբ ստեղծել է MS Excel ծրագրի վրա հիմնված միջանկյալ վերլուծական գործիք, որը մշակվել է գույքի և եկամուտների հայտարարագրերում առկա բաժինների հիման վրա և ընդգրկում է ֆինանսական վերլուծության բոլոր ասպեկտները, որոնք պետք է ուսումնասիրության մաս կազմեն: Գործիքը ներառում է որոշակի ռիսկային ցուցանիշներ և թույլ է տալիս գնահատել պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների ընդհանուր ֆինանսական հոսքերը, հայտարարագրված տվյալների ռիսկայնությունը:

Հանձնաժողովը հայտարարագրերի վերլուծության ընթացքում ստացված տվյալները համադրում է հայտարարատու անձանց կողմից ներկայացված հայտարարագրերում հայտարարագրված տվյալների հետ, իրականացվում է առկա տեղեկությունների համալիր վերլուծություն, մասնավորապես՝ Հանձնաժողովը հաշվարկում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների՝ հայտարարագրման ենթակա գույքի ձեռքբերումից տարբերվող նպատակներով կատարված ձեռքբերումների տարեկան հաշվարկային մեծությունը՝ ընթացիկ տարեկան ծախսերը, յուրաքանչյուր տարվա համար: Այնուհետև կազմվում է համապատասխան արձանագրություն, որում նշվում են բոլոր այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել վերլուծությունն իրականացնելու համար, ինչպես նաև այն անհամապատասխանությունները, որոնք հայտնաբերվել են վերլուծության արդյունքում: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովի կասկածները փարատելու նպատակով վերլուծության արդյունքում 88 պաշտոնատար անձից և նրանց ընտանիքի 96 անդամներից հայցվել և ստացվել են պարզաբանումներ 84 պաշտոնատար անձանցից և նրանց ընտանիքի 78 անդամներից: Միևնույն ժամանակ, նշված գործընթացը հնարավորություն է տալիս հայտարարատուներին՝ ներկայացնելու

պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները, ինչպես նաև առկայության դեպքում դրանք հիմնավորող նյութերը:

Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա շարունակել է դատավորների հայտարարագրերի վերլուծությունները, որի շրջանակներում վերլուծվել են 125 դատավորների հայտարարագրեր:

Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 02-Լ որոշմամբ սահմանվել են ռիսկային համարվող այն պետական պաշտոնները, որոնք ունեն պետության համար որոշումների կայացման և լիազորությունների լայն շրջանակ: Համաձայն նշված որոշման՝ նախատեսվել է վերլուծել ցանկում ներառված պետական պաշտոն զբաղեցնող 95 անձանց և նրանց ընտանիքի անդամների՝ 2021 թվականի տարեկան, ինչպես նաև 2022 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը: Այս շրջանակներում Հանձնաժողովն իրականացրել է 15 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն, որը շարունակվելու է, և արդյունքներն ամփոփվելու են 2023 թվականին:

Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող՝ անձանց գրավոր դիմումների հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է մեկ պաշտոնատար անձի հայտարարագրերի վերլուծություն:


Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա իրականացվել է 17 պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն:

Բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման շրջանակներում իրականացվել է 98 հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն:


Վերլուծված հայտարարագրերի ընդհանուր թիվը կազմել է 3044, այդ թվում՝

Վերլուծված հայտարարագրերի տեսակն՝ ըստ հայտարարագիրը ներկայացնողների	Վերլուծված հայտարարագրերի քանակը
Հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրեր	1292
Հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների հայտարարագրեր	1752
Ընդամենը	3044

Վերլուծված հայտարարագրերի քանակական ցուցանիշներն՝ ըստ հայտարարագիր ներկայացնողների



Հայտարարագրերի վերլուծություն իրականացված պաշտոնատար անձանց թվաքանակն՝ ըստ պաշտոնների



Հայտարարագրերի վերլուծության արդյունքում առանձնացվել են հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ հիմնական միտումները՝

- ✓ Ընտանիքի անդամների և մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց թերգրանցում,
- ✓ Հայտարարագրման ենթակա տվյալների թերգրանցում,
- ✓ Հայտարարատուին պատկանող գույքի հայտարարագրման բացակայություն,
- ✓ Գույքի օտարումից ստացված եկամտի հայտարարագրման բացակայություն,
- ✓ Հանձնված և վերադարձված փոխառությունների թերի կամ սխալ հայտարարագրում,
- ✓ Նախորդ տարեվերջին և հաջորդ տարեկազմին հայտարարագրված դրամական միջոցների մնացորդների անհամապատասխանություն,
- ✓ Բանկային հաշիվների մնացորդների անհամապատասխանություն,
- ✓ Հայտարարագրված եկամուտների անհամապատասխանություն,
- ✓ Առևտրային, ոչ առևտրային կազմակերպություններին պաշտոնատար անձի մասնակցության և ներկայացվածության, բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու, կուսակցություններին

անդամակցելու վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրման բացակայություն,

✓ Առևտրային կազմակերպություններին մասնակցության և ներկայացվածության վերաբերյալ պաշտոնատար անձի ընտանիքի անդամներին վերաբերելի հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրման բացակայություն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կանխիկ գումարների դեպքում կար հնուց եկած վատ վարքագիծ. անձինք պաշտոն ստանձնելիս իրենց առաջին հայտարարագրում ներկայացնում էին խոշոր գումար, որն իրականում չունեին, այն մտադրությամբ, որ հետագայում որոշակի կոռուպցիոն մեխանիզմներով այդ գումարն ունենալուց հետո կօրինականացնեն արդեն իսկ հայտարարագրած գումարները: Խոշոր կանխիկ գումարի հայտարարագրումը, դրանցով կատարվող գործարքները դիսկ են պարունակում, սովորաբար ենթադրում են ստվերային եկամուտներ, համապատասխան ստվերային ծախսեր: Կանխիկ գումարների հետ կապված ռիսկերից մեկն էլ այն է, երբ պաշտոնատար անձը մի քանի տարի կանխիկ գումարներ է հայտարարագրում և դրանք որոշակի ոչ մեծ փոփոխություններով առկա են նաև վերջին ներկայացված հայտարարագրերում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ըստ հայտարարագրված տվյալների՝ այս տարիների ընթացքում պաշտոնատար անձը կամ ընտանիքի անդամը վարկեր է վերցրել: Կրկին հարցեր են առաջանում, թե խոշոր կանխիկ դրամական միջոցներ հայտարարագրելու պարագայում որքանո՞վ է ողջամիտ, որ մարդը այդքան գումար ունենալով՝ վարկային բեռի տակ կմտնի, որն իր համար տոկոսների տեսքով հավելյալ պարտավորություն է առաջացնում:

2020-2021 թվականների հայտարարագրված կանխիկ գումարների համեմատական վերլուծությունները ցույց են տվել, որ, ըստ էության, այդ առումով էական փոփոխություններ չեն նկատվում:

	15-50 մլն	50-100 մլն	100 մլն և ավելի
2020	750	160	70
2021	737	134	71

Պաշտոնատար անձանց հաշվետվողականության համար Հանձնաժողովը խոշոր կանխիկ դրամական միջոցների առկայությունը դիտարկում է՝ որպես ռիսկային գործոն՝ հայտարարագրերի համալիր վերլուծության իրականացման

համար, վերոգրյալից ելնելով՝ հայտարարատուներին առաջարկելով դրամական միջոցները տնօրինել անկանխիկ եղանակով, ինչն ավելի թափանցիկ և հաշվետու կդարձնի պաշտոնատար անձանց գործունեությունը:



III. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ՉԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Կոռուպցիայի կանխարգելման համատեքստում առանցքային նշանակություն ունի հանրային ծառայողի բարեվարքության նորմերին համապատասխանող հանրային կերպարի ձևավորումը:

2018 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքով ներդրվել է բարեվարքության համակարգ, որը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնները (այդ թվում՝ նվերներ ընդունելու սահմանափակումները), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումները և շահերի բախումը:

Չնայած նորմերի առկայությանը, փաստացի դրանց ապահովումը գրեթե հնարավոր չի եղել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով տվյալ դրույթների կիրառումը փաստացի պայմանավորված է եղել Հանձնաժողովի ստեղծման հանգամանքով:

Ներկայում՝ հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի ներդրումը վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ իբրև կոռուպցիայի կանխարգելման մանդատով օժտված միակ պետական մարմնի:

Հանձնաժողովը կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված առավել թիրախավորված և արմատական առաջընթաց ապահովելու համար առաջնային խնդիր է համարում հանրության կողմից կոռուպցիոն բնույթի վարքագծի և գործողությունների մերժումը, կոռուպցիայից զերծ հանրային ծառայության ձևավորումը: Այս նպատակին հասնելու համար ամենաարդյունավետ գործիքներից է հանրային ծառայողի օրինավոր և բարեխիղճ կերպարի ձևավորումը՝ հաշվետվողականության, թափանցիկության և բարեվարքության ապահովումը, ինչպես նաև հանրության շրջանում հանրային ծառայողի վարքագծի կանոնների և բարեվարքության համակարգի մնացած տարրերի վերաբերյալ տեղեկությունների հասանելիության ապահովումը:

Հանրային ծառայությունում բարեվարքության համակարգի ներդրումը և զարգացումը ապահովելու, բարեվարք հանրային ծառայությունն առարկայացնելու համար անհրաժեշտ նախապայման է բարեվարքության համակարգի շարունակական բարելավումը, որը հիմնված է ինչպես օրենսդրական

կարգավորումների, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում վեր հանված խնդիրների հիման վրա նոր բարեփոխումների իրականացմամբ:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին, պրակտիկան ցույց է տվել, որ նորմերի նյութականացման ընթացքում առաջանում են այնպիսի խնդիրներ և վեր են հանվում այնպիսի բացեր, որոնք որոշ դեպքերում խոչընդոտում, որոշ դեպքերում էլ անհնար են դարձնում բարեվարքության համակարգի՝ իբրև գործուն մեխանիզմի, կիրառումը:

3.1 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանումը

2022 թվականի հունիսի 17-ին, Հանձնաժողովի կողմից Տիպային կանոնների սահմանմամբ, ըստ էության, մեկնարկել է վարքագծի կանոնների միասնական համակարգի առարկայացումը: Տիպային կանոնների սահմանմամբ Հանձնաժողովը նպատակ է հետապնդել ապահովել հանրային ծառայողների բարեվարք և կանխատեսելի վարքագիծը, բարեվարքության վերաբերյալ հանրային ծառայողների ընկալման միասնականությունը, նպաստել կոռուպցիայի նկատմամբ զգոնության ու անհանդուրժողականության ամրապնդմանը և վերջնարդյունքում՝ բարձրացնել հանրային ծառայության նկատմամբ հանրային վստահությունը:

Տիպային կանոնների նախագիծը մշակվել է Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետի, ինչպես նաև տեղական փորձագետների հետ համատեղ աշխատանքի արդյունքում: Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրոպայի խորհրդի նախարարական կոմիտեի կողմից հաստատված՝ Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները, ՄԹ Թրանսփաերենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի Գլոբալ հակակոռուպցիոն ուղեցույցը, միջազգային այլ վերաբերելի փաստաթղթեր, տարբեր երկրների ներպետական իրավական ակտեր: Ուշադրություն է դարձվել նաև ՀՀ պետական տարբեր մարմինների կողմից արդեն իսկ մշակված և գործող ներքին կանոնագրքերին և դրանցում ներառված կարգավորումներին:

Տիպային կանոնները բխում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից և

մշակված են այդ սկզբունքների տրամաբանությամբ: Նախագծի առանձին գլուխներն արտացոլում են վարքագծի որոշակի սկզբունքին վերաբերելի կանոններ, ինչպես՝ օրինականությանը, հանրային շահին հավատարմությանը, բարեկրթության և այլն:

Տիպային կանոններում ներառված են կանոններ հանրային ծառայողների և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար:

Տիպային կանոնները ներառում են ինչպես վարքագծի պարտադիր, այնպես էլ խրախուսելի կանոններ: Կանոնների պարտադիր բաղադրիչը (պարտադիր կանոններ) որոշակի վարքագծի հետևելու պարտադիր կանոնների համախումբ է: Կանոնների խրախուսելի բաղադրիչն (խրախուսելի կանոններ) օրինակելի չափանիշների շարք է, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է գերազանցությունը հանրային ծառայության համակարգում:

Պարտադիր և խրախուսելի կանոնների տարանջատմամբ փորձ է արվել ոչ միայն սահմանել հանրային ծառայողների վարքագծին ներկայացվող պարտադիր նվազագույն պահանջները, այլև ցույց տալ հանրային ծառայության որակի բարձրացմանը միտված (խրախուսելի) վարքագծի կարևորությունը: Տիպային կանոններում անդրադարձ է արվել նաև հանրային լրատվամիջոցներով/սոցիալական ցանցերով հաղորդակցության, կոռուպցիոն բնույթի դեպքերի և խախտումների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու և մի շարք այլ հարցերի:

Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում) սահմանվող պարտադիր կանոններին չհետևելու համար հանրային ծառայողը կարող է ենթարկվել օրենքով սահմանված պատասխանատվության, սակայն խրախուսելի կանոններին չհետևելու համար հանրային ծառայողը չի կարող պատասխանատվության ենթարկվել, այլ դա սեփական վարքագծի համապատասխանեցումն է խրախուսելի նորմերին:

Նախագիծն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է հանրային քննարկման՝ հավաքագրելու հնարավորինս լայն շրջանակների կարծիքներն ու առաջարկությունները: Այն ուղարկվել է կարծիքի 72 շահագրգիռ պետական մարմինների, տեղադրվել իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում: Առանձին քննարկումներ են տեղի ունեցել հասարակական կազմակերպությունների, փաստաբանների պալատի, գիտակրթական շրջանակի, գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ:

Տիպային կանոնները սահմանելու մասին որոշումն օրենքով սահմանված կարգով հրապարակված է Իրավական տեղեկատվական համակարգում և

Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Տիպային կանոնները հասանելի են հայերեն և անգլերեն տարբերակներով:

Նախագծի պաշտոնական շրջանառմանը և թիրախային խմբերի հետ հանրային քննարկումներին նախորդել է բարձր մակարդակի համաժողով՝ 2022 թվականի փետրվարի 24-ին՝ նվիրված բարեվարքությանը և կոռուպցիայի կանխարգելմանը: Համաժողովին մասնակցել են Հանձնաժողովի անդամները, ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը, ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է վարքագծի տիպային կանոնների նախագիծը, հավաքագրվել են նախագծի առնչությամբ բարձրացված հարցերը և մասնակիցների դիտարկումները, որոնք ևս հիմք են հանդիսացել նախագծի լրամշակման/կատարելագործման համար:

Նախագծի հաստատումից հետո՝ 2022 թվականի հուլիսի 4-ին, Հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի համատեղ նախաձեռնությամբ և տեղի է ունեցել Տիպային կանոնների պաշտոնական շնորհանդեսը՝ Հայաստանի հանրային կառույցների, քաղաքացիական հասարակության և միջազգային դոնոր կազմակերպությունների ավելի քան 60 բարձրաստիճան ներկայացուցիչների համար:

Տիպային կանոնների գործնական կիրառումը պարզեցնելու նպատակով Հանձնաժողովը նախաձեռնել է դրա մեկնաբանությունների/բացատրական ձեռնարկի մշակման աշխատանքներ: Մեկնաբանությունների ձեռնարկում պարզաբանվում է վարքագծի առանձին կանոնների բովանդակությունը և ներկայացվում են պրակտիկ օրինակներ՝ կանոնների հնարավոր կիրառման դեպքերի վերաբերյալ: Մեկնաբանությունների նախագիծը մշակման փուլում է և ենթակա կլինի հաստատման 2023 թվականի առաջին կիսամյակում:

Ոլորտային կանոնագրքերի մշակման աջակցությունը

Հանձնաժողովի կողմից հաստատված Տիպային կանոնները, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար: Մասնավորապես՝ հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացը պարզեցնելու նպատակով, Հանձնաժողովը 2022 թվականի երկրորդ կիսամյակում, ԱՄՆ ՄԶԳ ծրագրի իր գործընկերների հետ մշակել է **Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի** և հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ներքին իրազեկման պլանի նախագծերը: Ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) հաստատելու մասին Հանձնաժողովի որոշման նախագիծն ուղարկվել է կարծիքի 56 շահագրգիռ պետական մարմինների և ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն՝ իրավական փորձաքննության:

Ուղեցույցի նպատակն է մեթոդական աջակցություն տրամադրել պետական կառավարման մարմիններին՝ ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման գործընթացում: Այն առավելապես գործնական ձեռնարկ է՝ բաղկացած երկու մասից, և ներկայացնում է ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում և կիրարկման ընթացքում անհրաժեշտ/ձեռնարկվելիք ներինստիտուցիոնալ քայլերը, կանոնագրքերի կարգավորման ենթական հարցերի շրջանակը, կառուցվածքը և այլ հարցեր: Ուղեցույցում հատուկ ուշադրություն է դարձվում կանոնագրքերի մշակման ընթացքում ներառական մոտեցման ապահովմանը, ինչպես նաև կանոնագրքերի ընդունումից հետո՝ բարեվարքության համակարգի վերաբերյալ աշխատակիցների կարողությունների շարունակական զարգացմանը և վերապատրաստումներին:

Տիպային կանոնների քննարկման փուլում և դրա հաստատումից հետո շահագրգիռ մարմինների հետ Հանձնաժողովի ունեցած երկխոսությունը վկայում է, որ վարքագծի կանոնագրքերի մշակման և ներդրման հարցում կա իրազեկվածության կամ տեղեկատվության պակաս և ուղղորդման անհրաժեշտություն, ուստի Ուղեցույցում փորձ է արվել նաև մշակող մարմինների համար կանխատեսելի դարձնել իրենցից ակնկալվող գործառույթները և ներառել այն հարցերի պատասխանները, որոնք առավել հաճախ ուղղվել են Հանձնաժողովին: Ուղեցույցի վերաբերյալ առաջարկություններն արդեն իսկ հավաքագրվել և ամփոփվել են, ստացվել է իրավական փորձաքննության եզրակացությունը:

Ուղեցույցի հաստատումից հետո Տիպային կանոնների հիման վրա մշակված ոլորտային կանոնագրքերի ներդրումը թույլ կտա հանրային ծառայության տարբեր տեսակների հետ առնչվելիս ձևավորել հանրային ծառայողների վարքագծին առաջադրվող համանման պահանջներ և ապահովել կանոնների մեկնաբանման միատեսակությունը: Ուղեցույցի մշակման ընթացքում վեր են հանվել նաև որոշ խնդիրներ:

Մասնավորապես, վերաբերելի օրենսդրական կարգավորումները չեն ապահովում բավարար ճկունություն ուղեցույցի կիրառման համար և վերջինս իմպերատիվ կիրառման ակտ չէ, ինչը մեծացնում է ոլորտային կանոնագրքերի՝ տիպային կանոններից շեղումներով հաստատման հավանականությունը: Մինչդեռ, կարևոր է շեշտել, որ նման շեղումները կարող են էապես խաթարել բարեվարքության համակարգի միասնականությունը:

Պեղական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի մշակումը

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների հաստատման և ոլորտային կանոնագրքերի մշակման տրամաբանական շարունակությունը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների ներմուծումն է: Բարեվարքության համակարգի մաս կազմող պահանջները և սահմանափակումները վերաբերելի են հանրային ծառայողներին և **հանրային պաշտոն զբաղեցնող** անձանց, հետևապես, բարեվարքության համակարգի կայացման ճանապարհին հաջորդ կարևորագույն քայլը պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքով սահմանված շրջանակի համար վարքագծի կանոնագրքի հաստատումն է:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է **պետական պաշտոն զբաղեցնող անձանց** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց **վարքագծի կանոնագիրքը** (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Թեև Կանոնագրքի մշակման աշխատանքները Հանձնաժողովում մեկնարկել են 2022 թվականից առաջ, հաշվետու տարվա երկրորդ կիսամյակում միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ կատարվել է Կանոնագրքի նախագծի համապատասխանեցում հաստատված Տիպային կանոններին և նախագծի լրամշակում: Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել նաև Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետի մշակած առաջարկները:

Ի տարբերություն հանրային ծառայողների համար նախատեսված Տիպային կանոնների՝ քննարկվելիք կանոնագիրքն առաջարկվող կանոնների/պահանջների տեսանկյունից ավելի խիստ է և ներառում է նաև առանձին կանոններ ղեկավար գործառույթ ունեցող անձանց համար՝ իրենց ենթակաների հետ հարաբերություններում: Կանոնագրքով սահմանված պարտադիր կանոններին

չհետևելը կարող է հանգեցնել օրենքով սահմանված պատասխանատվության: Այն առանցքային կարևորություն ունի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կամայական վարքագծի բացառման, բարձր մակարդակի կոռուպցիայի (high level corruption) զսպման և հանրային վստահության ամրապնդման տեսանկյունից:

Կանոնագրքի հաստատումը նախատեսվում է 2023 թվականի առաջին կիսամյակում:

Այսպես, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, դրանց մեկնաբանությունների, վարքագծի ոլորտային կանոնագրքերի, պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի ներդրման պայմաններում բարեվարքության համակարգը պատրաստ կլինի գործնական կիրառման:

3.2 Հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում նվերներ ստանալու սահմանափակումների ինստիտուտի բարելավում

2018 թվականին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը, որի 5-րդ գլուխը ամբողջովին նվիրված է բարեվարքության համակարգին: Հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները ներառվել են բարեվարքության համակարգի մեջ և որպես բարեվարքության համակարգի բաղադրիչ հանդիսացել են հանրային ծառայությունում թափանցիկության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի կառավարման գործիքներից մեկը: Այլ խնդիր է, որ այս մասով օրենսդրական ձևակերպումները ունեցել են լուրջ բացթողումներ, չեն մշակվել պրակտիկայում կիրառելի ընթացակարգեր՝ նվերների հաշվառման և հանձնման համար: Այդ իսկ պատճառով 2021 թվականին Հանձնաժողովը և Արդարադատության նախարարությունը ԵԽ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացրել են օրենսդրության համակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն՝ վեր հանելով կարգավորումներում առկա բոլոր բացերը:

Օրինակ՝ պատշաճ ձևակերպված չեն եղել «Նվեր», «Հյուրասիրություն», «Թույլատրելի նվեր» եզրույթները, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով ամրագրված՝ նվերների հաշվառման և հանձնման համար հիմք հանդիսացող Կառավարության կողմից սահմանված կարգը չի գործել: Հանրային ծառայության տարբեր տեսակների համար տարբերակված մոտեցում է

իրականացվել, ինչի հետևանքով խաթարվել է միասնական քաղաքականության իրականացումը:

Հաշվի առնելով վերը նշված խնդիրները և այն հանգամանքը, որ Հանձնաժողովը հանդիսանում է բարեվարքության համակարգի նկատմամբ վերահսկողական/կատարելագործման գործառույթ ունեցող մարմին, 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին մշակել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացրել «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով սահմանվել էին «Նվեր», «Հյուրասիրություն», «Թույլատրելի նվեր» եզրույթները, դրանց հաշվառման և հանձնման կարգը, օրենքով սահմանված պահանջները խախտելու դեպքում՝ պատասխանատվության միջոցները: Նախագծով նվերների ընդունման արգելքի գործառնական կիրառելիության նկատմամբ սահմանվել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերահսկողական լիազորությունն՝ իբրև վերահսկող լիազոր մարմին: Հանձնաժողովին էր վերապահվելու հանրային պաշտոն գբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելու գործառույթը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը:

Բացի այդ՝ Նախագծով հստակ սահմանված էին ինչպես հաշվառման ենթակա նվերների արժեքային սահմանաչափերը, այնպես էլ փոխկապակցված անձանց շրջանակը: Առաջարկվում էր օրենքով սահմանված պահանջների խախտումների համար կարգապահական պատասխանատվության փոխարեն սահմանել վարչական պատասխանատվություն:

2022 թվականին դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովի կողմից ««Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունմամբ¹, արձանագրվել է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննելու և լուծելու է նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր: Օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, ռեեստրի վարման կարգերը, ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Օրենքի անցումային դրույթներով սահմանվել է,

¹ Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172230>:

որ նշված փաստաթղթերը պետք է մշակվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում (2023 թ.): Հարկ է նաև ընդգծել, որ փոփոխված կարգավորումները գործելու են օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

Օրենքի ընդունմամբ հնարավոր է դարձել իրականացնել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական լիազորությունների իրականացման ընթացքում ստացած նվերների վերահսկողություն: Բացի այդ, սահմանվել է կենտրոնական մարմին, որը կիրականացնի պատշաճ և միասնական քաղաքականություն նվերների ընդունման արգելքի իրավական նորմերի կիրառման ոլորտում: Օրենքով հաստատված կարևոր կարգավորումներից է նաև նվերների թվայնացված ռեեստրի ստեղծումը, որը կապահովի նվերների հաշվառման, դրանց գնահատման, ինչպես նաև տեղեկատվության հրապարակման ավտոմատացված լուծումներ, ինչպես նաև կապահովի համակարգի փոխգործելիությունը հայտարարագրերի թվային համակարգի հետ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից ներկայացված օրենքի նախագիծը Ազգային ժողովի կողմից ընդունվել է ոչ ամբողջական. իրականացվել է լրամշակում, որի արդյունքում փոփոխվել են ինչպես հաշվառման ենթակա նվերների արժեքային սահմանը, չհաշվառվող թույլատրելի նվերների տրման պարբերականությունը, այնպես էլ ավելացվել է օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները չհաշվառելու վերաբերյալ դրույթը:

Այսպես, Նախագծի 5-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի 30-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դրույթները խմբագրվել և լրացվել են: Հանձնաժողովի կողմից ներկայացված տարբերակում օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել էր. «**Քսան հազար** Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ **մեկ տարվա ընթացքում պարբերական (երեք եւ ավելի)** բնույթ կրող դեպքերի», սակայն կարգավորումը հաստատվել է հետևյալ տարբերակով. «**Քառասուն հազար** Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից **վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի)** բնույթ կրող դեպքերի»:

Բացի այդ, 30-րդ հոդվածի 2-րդ մասից հետո լրացվել է նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Օտարերկրյա պետությունների, միջազգային

կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները հաշվառման ենթակա չեն:»:

Հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծի 7-րդ հոդվածով առաջարկված՝ օրենքի 33-րդ հոդվածում փոփոխություն կատարելու վերաբերյալ դրույթները ևս խմբագրվել են: Մասնավորապես, օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով սահմանվել էր փոխկապակցված անձանց շրջանակը, այն է՝ « 1) պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, **պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները**», որը խմբագրվել և ընդունվել է հետևյալ բովանդակությամբ՝ «1) պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը.»:

3.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախումը, անհամապետելիության պահանջները և այլ սահմանափակումները

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առկա են շահերի բախման նորմեր պարունակող մի շարք օրենսդրական ակտեր, որոնք պարունակում են շահերի բախումը կանխարգելող, սահմանափակող կամ շահերի բախման իրավիճակները կարգավորող նորմեր, սակայն դրանց ձևակերպումները ոչ միշտ են հստակ ու նույնական, ինչը խոչընդոտում է շահերի բախման միօրինակ ընկալումն ու հետագա կարգավորումը:

Հարկ է նշել, որ Օրենսդիրը շահերի բախման դեպքի առկայությունը պայմանավորել է միայն հանրային ծառայողի լիազորությունների շրջանակներում որևէ գործողության կատարմամբ կամ որոշման ընդունմամբ, սակայն օբյեկտիվ իրականության մեջ հատկապես ազդեցությունների և լիազորությունների ավելի լայն շրջանակ ունեցող անձանց պարագայում առկա է այնպիսի իրավիճակ, երբ օգտագործում են իրենց ազդեցությունը իրենց կամ իրենց հետ փոխկապակցված անձանց գույքային դրությունը բարելավելու նպատակով: Եվ թեև վերջիններս իրենց լիազորությունների շրջանակներում որևէ գործողություն չեն կատարում և որևէ որոշում չեն ընդունում, սակայն փաստացի ազդեցություն են ունենում այլ

անձանց կողմից իրենց լիազորությունների շրջանակներում ընդունվող որոշումների վրա և նույնիսկ պահպանում են իրենց ազդեցությունը պաշտոնական լիազորությունները դադարեցնելուց հետո: Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է շահերի բախման ինստիտուտը կարգավորելիս հիմք ընդունել նաև անձի ունեցած անուղղակի ազդեցությունը կոնկրետ գործընթացի վրա: Ասվածը տեսանելի է օրինակ հանրային գնումների գործընթացում:

Խոսքն այստեղ միջավայրի, մարդկանց ընկալման, ընդհանուր մշակույթի և հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից դրսևորվող վարքագծի մասին է, այսինքն՝ անպայման չէ, որ կոնկրետ պաշտոն զբաղեցնող անձը դիմի, օրինակ, գնումների համար որոշում կայացնող մարմնին կամ անձին: Այն փաստը, որ գնումների վերաբերյալ որոշում ընդունող անձը կամ մարմինն արդեն գիտի, որ կոնկրետ գնումների համար մրցույթի մասնակիցը տվյալ պաշտոնատար անձի հետ առնչություն ունեցող ընկերությունն է, ինքնին հակվում է վերջինիս օգտին որոշում կայացնելու: Հարկ է ուշադրություն դարձնել շահերի բախման իրավիճակում կնքված գործարքների, ընդունված որոշումների կամ կատարված գործողությունների հետևանքների վերաբերյալ կարգավորումների բացակայությանն՝ իրավական համակարգում:

Օրենսդրական կարգավորումներում առկա բացթողումներ մասին վկայում է նաև ՏՀՀԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի զեկույցը: Զեկույցում, մասնավորապես շեշտվում է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքը շահերի բախման կանխարգելման և կառավարման պարտականությունները վերապահում է անձամբ պետական պաշտոնյային, նրա ղեկավարին և Հանձնաժողովին, ինչպես նաև տարանջատում է անմիջական ղեկավար ունեցող հանրային պաշտոնյաներին վերադաս չունեցողներից: Օրենքը շահերի բախման իրավիճակները լուծելու մեթոդների շատ նեղ շրջանակ է առաջարկում: Մյուս կարևորագույն խնդիրը, որին պետք է անդրադառնալ ըստ զեկույցի «շահերի բախման» սահմանումն է: «հանրային ծառայության մասին» օրենքում շահերի բախման սահմանումը չի ներառում ակնհայտ (apparent) կամ հավանական շահերը, շահերը սահմանափակվում են գույքային դրությամբ: Փոխկապակցված անձանց շրջանակը սահմանափակ է:

Շահերի բախման սահմանման հետ կապված անդրադարձ է արվել նաև Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից՝ հանրային ծառայությունում շահերի բախումը կարգավորող օրենսդրության վերլուծության զեկույցի շրջանակներում:

Ինչ վերաբերում է **անհամատեղելիության պահանջներին**, ապա դրանց վերաբերյալ ձևակերպումները և մոտեցումները նույնպես **միանշանակ չեն**:

«Հանրային ծառայության մասին» օրենքում հանրային ծառայողների համար սահմանված ընդհանուր կարգավորման համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սույն կանոնից բացառություն է սահմանվում համայնքի ավագանու անդամներ համար:

Այլ տեսակի գործունեությամբ զբաղվելու և այլ պարտավորություններ ունենալու պարագայում, երբ առաջանում է նաև մասնավոր շահ, ձևավորվում է մի այնպիսի իրավիճակ, երբ անձը պետք է ընտրություն կատարի և նախապատվություն տա իր անձնական շահին կամ հանրային շահին: Եթե այլ իրավարահարաբերություններում նման երկակի պարտավորությունների առկայությունը խնդիրներ գուցե չի առաջացնում, ապա պետական պաշտոն զբաղեցնող անձանց պարագայում այն դառնում է վճռորոշ: Հանրային շահին ծառայող իր պարտավորությունների իրականացման ցանկացած համատեղելիություն կարող է հանգեցնել պաշտոնատար անձի կողմից զբաղեցրած պաշտոնի հիմքով տրված լիազորությունների չարաշահման ռիսկի:

Այլ պաշտոններ զբաղեցնելու կամ այլ տեսակի գործունեությամբ զբաղվելու արգելքը հիմնականում հետապնդում է հետևյալ նպատակները.

- օժանդակել իշխանությունների տարանջատման և հավասարակշռման (փոխզսպման) սկզբունքի պահպանմանը,
- չեզոքացնել և կանխել մասնավոր գործունեությունից կամ պետական պաշտոնից բխող ազդեցությունը պաշտոնետական հիմնական գործառույթի և դերի իրականացման վրա: Այլ կերպ՝ պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից որոշումների կայացման անաչառության վրա ցանկացած հնարավոր ազդեցություն, ներառյալ նաև՝ առկա այլ շահի կամ այլ պարտավորությամբ պայմանավորված ճնշումները և անհարկի այլ ազդեցությունները,
- կանխարգելել պետական պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի այնպիսի դրսևորումը, երբ մասնավոր շահը հնարավոր կլինի գերադասել հանրային շահից,
- կանխել քաղաքականության և բիզնեսի սերտաճման միտումները և նման սերտաճման միջոցով՝ իշխանության վրա ճնշումների և անհարկի այլ ազդեցությունների դրսևորումը:

Անհամատեղելիության կանոնների անարդյունավետ կիրառման հետևանքով աստիճանաբար զարգանում է այնպիսի միտում, որ ձևավորվում են ֆինանսական մեծ կարողություն ունեցող անձնական (կորպորատիվ) շահեր

սպասարկող գործարարներ (գործարարների խմբեր) և հովանավորչական ցանցեր, որոնց գործունեությունը դուրս է գալիս գործարարության սահմաններից և սերտաճում է քաղաքական գործունեության հետ: Այս պատճառով է, որ պաշտոնատար անձանց առաջադրվող հիմնական ելակետային կանոնը պետական պաշտոնին զուգահեռ համատեղելիությամբ այլ պաշտոն զբաղեցնելու կամ այլ գործունեությամբ զբաղվելու արգելքն է:

Հանձնաժողովը, որպես կանխարգելիչ գործառույթ իրականացնող մարմին, կարևորվում է ոչ միայն օրենքի ձևական պահանջների կատարման պահպանումը, այլ այն երևույթներն ու վարքագծի դրսևորումների գնահատումը, ինչպես շահերի բախման, այնպես էլ անհամատեղելիության պահանջների պահպանման, այլ սահմանափակումների և բուն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի վարքագծի համատեքստում:

Ի տարբերություն շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ խնդիրներին, **այլ սահմանափակումների** մեկնաբանման վերաբերյալ Հանձնաժողովի ստացած դիմումները դեռևս այն ծավալի չեն, որ թույլ տան հստակ արձանագրել դրույթների հետ կապված բացթողումները: Այդուհանդերձ, անհրաժեշտ է հստակեցնել օրինակ՝ հետաշխատանքային սահմանափակումները կամ «անմիջական ենթակայությամբ գործելու» հասկացությունը, բնորոշել դրա շրջանակը/սահմանները և ընդհանրապես քննարկել նշված սահմանափակման վերաբերելիությունը մասնավոր և պետական հատվածին:

Հետաշխատանքային սահմանափակումներն, ըստ էության նախատեսված են պետականից մասնավոր ոլորտ հանրային ծառայողների անցումը կառավարելու համար:

Որպես խնդիր արձանագրվել է նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվություն չկիրառելու հարցը:

Այսպես, վարքագծի կանոնների, շահերի բախման և այլ սահմանափակումների խախտման համար օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվությունը կիրառելի չէ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, ինչի արդյունքում նշված պաշտոնատար անձանց կողմից համապատասխան խախտման դեպքերը որևէ իրավական հետևանք չեն առաջացնում, ուստի և չեն սահմանափակում որևէ կերպ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց զերծ մնալու նմանատիպ խախտումներից:

Գնահատելով վերը թվարկված խնդիրները, Հանձնաժողովը մասնակցել է 2022 թվականի մայիսից մեկնարկված, Արդարադատության նախարարության

առաջարկած, «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթի քննարկմանը՝ հայեցակարգում մանրամասն վերհանվել են առկա խնդիրները և տրվել համակարգի կատարելագործմանն ուղղված պրակտիկ առաջարկներ, որի հիման վրա միջազգային փորձագետների կողմից մշակել է առաջարկությունների փաթեթ, որն էլ հիմք է հանդիսացել օրենսդրական փոփոխությունների համար:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում վերանայվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման հոդվածները՝ դրանք մոտարկելով միջազգային պրակտիկայում ընդունված և Հայաստանի գնահատման զեկույցներով առաջարկված չափորոշիչներին (benchmark):

Փոփոխություններով², մասնավորապես վերանայվել են շահերի բախման սահմանումը, փոխկապակցված անձանց շրջանակը, ներմուծվել է վարչական պատասխանատվություն՝ շահերի բախման իրավիճակներում օրենքով սահմանված պահանջները չկատարելու, մասնավորապես շահերի բախման իրավիճակի մասին չհայտնելու համար, ընդլայնվել վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար շահերի բախման իրավիճակում հաղորդում ներկայացնելու կարգը, իսկ անհամատեղելիության պահանջների հոդվածի շրջանակներում՝ զգալիորեն վերացվել են հավատարմագրային կառավարման ինստիտուտի անկատարությունները՝ դարձնելով այն ավելի վերահսկելի:

Մասնավորապես՝ սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերելու առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ): Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնը ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո մեկ ամսվա ընթացքում այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Հավատարմագրային կառավարման ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում կայացած չէ, ուստի դրա գործնական կիրառելիությունն ու արդյունավետությունը շահերի բախումը կանխարգելելու առումով խիստ անարդյունավետ է: Նախկին կարգավորումներով որպես հավատարմագրային

² Տե՛ս՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172230>

կառավարիչ կարող էին հանդես գալ ինչպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունը, ինչից հետևում էր, որ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը կարող էր կառավարել նրա մերձավոր ազգականը կամ փոխկապակցված անձը, որի պարագայում հանրային ծառայողի չեզոքությունն ու կառավարչի վրա վերջինիս ազդեցության բացառումը դառնում էր անվերահսկելի: Հավատարմագրային կառավարչին ներկայացվող հստակ պահանջներ առկա չէին:

Օրենսդրական նոր կարգավորումների արդյունքում փորձ է արվել բացառել բաժնեմասերը փոխկապակցված անձանց կառավարմանը հանձնելու պրակտիկան և կանխել հանրային կամ հանրային ծառայության պաշտոններում պաշտոնավարման և ձեռնարկատիրական գործունեության համատեղումը: Այնուամենայնիվ, այս կարգավորումները ևս ամբողջովին չեն չեզոքացնում ձեռներեցության/բիզնես-գործունեության և քաղաքականության սերտաճման ռիսկը և հիմնականում կրում են ձևական բնույթ, եթե նույնիսկ բաժնեմասերը հանձնվում են հավատարմագրային կառավարման և կցվում են պայմանագրերը, միևնույն է պաշտոնատար անձի ազդեցությունը գրեթե չի չեզոքանում:

Հետևապես, 2023 թվականին Հանձնաժողովը հանդես կգա նշված ռիսկերի կառավարմանը և նվազեցմանը միտված նոր առաջարկներով:

Միաժամանակ, բարեվարքության համակարգի խնդիրների և բացթողումների վերհանումը և դրանց նկատմամբ զգայուն քաղաքականություն վարելը ոչ միայն Հանձնաժողովի առջև դրված խնդիր է, այլ նաև պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում:

Այսպես՝ օրինակ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի Հանրապետության գնահատման 4-րդ փուլի միջանկյալ զեկույցով (հաստատված 2021 թվականի սեպտեմբերի 21-22-ին) առաջարկվել է միջոցներ ձեռնարկել՝ կանխելու պատգամավորների՝ առևտրային կազմակերպություններում պաշտոններ զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ դրա շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցումը:

Ի ապահովումն Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների և սույն հանձնարարականի կատարման՝ Հանձնաժողովը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրացման շրջանակներում հաշվետու տարում իրականացրել է Ազգային ժողովի պատգամավորների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ազգային ժողովի բոլոր 107 պատգամավորների՝ 2021 թվականի շահերի հայտարարագրերը, հայտարարագրված տվյալները համադրվել/համեմատվել են ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, Պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների համակարգի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրների տվյալների հետ: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ պատգամավորների գրեթե մեկ երրորդը (33 պատգամավոր) նախքան պաշտոնավարումը որևէ կերպ մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել առևտրային կազմակերպություններում: Սա, իհարկե, չի նշանակում, որ բոլոր նշված դեպքերում վերջիններիս կողմից փաստացի խախտվել են Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները, այդուհանդերձ, Հանձնաժողովի գնահատմամբ այս ցուցանիշը խիստ մտահոգիչ է ձեռնարկատիրական գործունեության և իշխանության սերտաճման ռիսկերի տեսանկյունից:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը գրավոր հարցումներ է կատարել պատգամավորներին և համապատասխան պետական մարմիններ՝ վերստուգելու ստացված տվյալները և ստանալու պարզաբանումներ դրանց վերաբերյալ: Անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգման ընթացքում արձանագրված խախտումների (անհամատեղելիության պահանջի խախտում) հիմքով ԱԺ 6 պատգամավորների նկատմամբ Հանձնաժողովում հարուցվել են վարույթներ: 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ վարույթները գտնվել են ընթացքի մեջ: Հանձնաժողովը 2023 թվականին 5 պատգամավորի նկատմամբ հարուցված վարույթի արդյունքում ընդունել է խախտման բացակայության վերաբերյալ եզրակացություն, իսկ 1 պատգամավորի նկատմամբ հարուցված վարույթը դեռևս գտնվում է ընթացքի մեջ: Վարույթների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է սույն հաղորդման համապատասխան գլխում:

Արձանագրված առերևույթ խախտումների մեծ մասը վերաբերել են առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերի չհայտարարագրման, իսկ հայտարարագրված բաժնեմասերի դեպքում՝ դրանց՝ օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու դեպքերին:

Թեև ԳՐԵԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետության գնահատման 4-րդ փուլի միջանկյալ զեկույցով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պատգամավորների և պատգամավորական գործունեության շրջանակներում

անհամատեղելիության պահանջների պահպանման անհրաժեշտությանը, հարկ է նշել, որ ուսումնասիրությունները չեն կարող սահմանափակվել օրենսդրի գործունեությամբ. դրանք պետք է ներառեն իշխանության մյուս ճյուղերը և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մյուս կատեգորիաները ևս: Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովը 2023 թվականին հանդես կգա նոր նախաձեռնությամբ՝ իշխանության տարբեր ճյուղերում և հանրային իշխանության մարմիններում մշտադիտարկումների իրականացման վերաբերյալ:



IV. ԿՈՌՈՒԴՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունեն Հանձնաժողովին օրենքով վերապահված՝ առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունները, ինչպես նաև կոնկրետ գործերով դրանց իրացման արդյունքում կայացված որոշումներն ու եզրակացությունները:

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հարուցում է հետևյալ վարույթները՝

- վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ.

- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթ.

- «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի կողմից հարուցվող կարգապահական վարույթ:

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակում քննվող և լուծվող կոնկրետ գործերի վերաբերյալ վարույթներով իրականացնում է *արտաքին ներգործություն ունեցող վարչարարություն*, որի շրջանակում, մարմինն առաջնորդվում է վարչարարության հիմնարար սկզբունքներով, ինչպես նաև փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում ապահովելու, վարույթի մասնակիցներին գործին նյութերին ծանոթանալու, լավաճ լինելու իրավունքների իրացման հնարավորության ապահովման, արդարացի և ողջամիտ ժամկետում գործերի քննությունն իրականացնելու անհրաժեշտությամբ:

Հանձնաժողովը կոնկրետ գործերով համակարգային առումով մեկնաբանում է օրենսդրական կարգավորումների բովանդակային նշանակությունը, այս առնչությամբ, մասնավորապես, գործում առկա հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերը *վերլուծության են*

ենթարկվում օրենքի ծեփական և բովանդակային տեսանկյունից՝ կիրառվող նորմի և դրանով հետապնդվող նպատակի միջև անհրաժեշտ հարաբերակցությունը պահպանելու նպատակով: Վարույթների արդյունքում պաշտոնատար անձանց նկատմամբ Հանձնաժողովի կողմից ընդունվող որոշումներով և եզրակացություններով հաստատվում են կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից կատարված խախտումների առկայությունը կամ բացակայությունը հիմնավորող փաստեր: Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչարարությունը գործնական առումով զսպող նշանակություն ունի պաշտոնատար անձանց կոռուպցիոն բնույթի հնարավոր հակահրավակական վարքագծի կանխարգելման նպատակով:

Այսպես, 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 118 հայտարարագրմանն առնչվող, թվով 15 կարգապահական, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների՝ թվով 9 և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի վերաբերյալ թվով 2 վարույթներ (մեկ վարույթը ներառում է ինչպես անհամատեղելիության, այնպես էլ իրավիճակային շահերի բախման դեպք՝ ընդամենը համապատասխան վարույթ թվով 10):

4.1 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել է հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ 118 վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու խախտումների հիմքով հարուցվել է 97 վարույթ, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի, այն է՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով՝ 20 վարույթ, իսկ 1-ը՝ Հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի (169.28-րդ

հողվածի 3-րդ մաս) խախտման և հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքերով:

Մասնավորապես, հաշվետու տարվա ընթացքում իրականացված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներից 15-ը հարուցվել է դատավորների նկատմամբ, 3-ը՝ Ազգային ժողովի պատգամավորների (սուբյեկտներից 2-ը վարույթի հարուցման պահին եղել են նախկին պատգամավոր), 1-ը՝ նախարարի նկատմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ հարուցված 118 վարույթից կարճվել են 107-ը, իսկ վարչական տույժ է կիրառվել 11 վարույթի արդյունքում, որոնցից 10-ի դեպքում կիրառվել է վարչական տուգանք՝ 200 000 ՀՀ դրամի չափով (8-ը հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով, 2-ը՝ հայտարարագիր չներկայացնելու), 1-ի դեպքում՝ նախազգուշացում վարչական տույժը՝ հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման հիմքով:

Հայտարարագրերը չներկայացնելու խախտումների կապակցությամբ իրականացված վարույթների արդյունքում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը կարճվել են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին կոնկրետ վարույթները: Նշված գործերով Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել են կայացված որոշումները՝ արձանագրելով, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, այս առնչությամբ էական է համարվել խախտման (արարքի) որակական կողմն այն առումով՝ արդյոք այն ունի նվազ նշանակություն, թե՛ ոչ: Նշվածով պայմանավորված՝ մինչև գործի քննության օրը հայտարարագիրը ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, չի խաթարվում:

Խախտման (արարքի) որակական կողմի, ինչպես նաև նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էության գնահատմամբ Հանձնաժողովի կողմից վարչարարություն է իրականացվել նաև հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու խախտումների կապակցությամբ:

Հանձնաժողովի կողմից նշված վարույթներում արարքը հանրային վտանգավորության տեսակետից նվազ նշանակություն ունեցող է որակվել,

մասնավորապես, հաշվի առնելով այն, որ հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացված տվյալը՝ դրամական միջոցի չափը, չի գերազանցել պաշտոնատար անձի պաշտոնական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը: Մեկ այլ գործով, օրինակ, Հանձնաժողովն էական հանգամանք է դիտարկել նաև այն, որ հայտարարատուի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից յուրաքանչյուրի մնացորդի չափը չի գերազանցել 200 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հանձնաժողովի կողմից 2021 թվականին հարուցված՝ հաշվետու ժամանակահատվածում տույժի կիրառումից հետո 30 օրյա ժամկետը լրացած թվով չորս, ինչպես նաև 2022 թվականին հարուցված մեկ վարչական իրավախախտումների գործերի վերաբերյալ վարույթների նյութերը, վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագրերը Հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու ենթադրյալ հանցագործության դեպքերի առթիվ 2022 թվականի ընթացքում ներկայացվել են **ՀՀ գլխավոր դատախազություն:**

Կարգապահական վարույթներ

2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից հարուցվել է 15 կարգապահական վարույթ: Նշված վարույթները հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 6.1-րդ մասի ուժով՝ ՀՀ Վարչական դատարանի, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների նկատմամբ:

Նշված կարգապահական վարույթները հարուցվել են այդ պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ հայտարարագրման ենթակա տվյալներին առնչվող առերևույթ խախտումների հիմքով հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների հարուցմանը զուգահեռ:

Հարուցված կարգապահական վարույթների արդյունքում Հանձնաժողովը կայացրել է վարույթը կարճելու մասին 14 որոշում, որոնցից 10-ի պարագայում դատավորների կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ գույքի, եկամուտների և շահերի իրենց հայտարարագիր չներկայացնելու կոնկրետ արարքը հանրային վտանգավորության տեսակետից նվազ նշանակությամբ պայմանավորված՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայության, 2-ի պարագայում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթում հաստատված փաստերի հիման վրա իրավախախտման դեպքի

բացակայության, 1-ի պարագայում՝ արարքում՝ իրավախախտման կազմի (մեղքի) բացակայության հիմքերով, ևս 1-ի պարագայում՝ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով:

Կարգապահական վարույթներում կոնկրետ արարքը որակելիս Հանձնաժողովն անդրադարձել է նաև միջազգային-իրավական փաստաթղթերում առկա վերլուծություններին՝ մասնավորապես, վկայակոչելով Վենետիկի հանձնաժողովի այն դիրքորոշումը, ըստ որի՝ ֆինանսական միջոցների, գույքի և այլ շահերի հայտարարագրման պարտավորության չկատարումը պետք է առաջացնի այնպիսի պատասխանատվություն, որը կարող է ծառայել կոռուպցիան զսպելու նպատակին: Բացառություն կարող է կիրառվել հայտարարագրում մանր և ոչ դիտավորյալ բացթողումներ ունենալու համար: (Վենետիկի հանձնաժողով CDL-AD(2015)042, 21 դեկտեմբերի, 2015 կարծիք No. 825/2015):

Կարճման որոշումներով եզրափակված կարգապահական վարույթներում առկա փաստական տվյալները գնահատելով՝ Հանձնաժողովն իր կողմից կայացված եզրահանգումներում, հատկապես, ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ հայտարարատու անձի կողմից օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա, մինչդեռ, հայտարարատու անձի կողմից չներկայացված տվյալները չեն հանգեցնում պետական պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության ապահովման, խախտումների հայտնաբերման, հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման իրավական հնարավորության բացակայության, ինչպես նաև արտացոլում են պաշտոնատար անձի իրական գույքային դրությունը, այս առումով հայտարարագրման ենթակա տվյալները չներկայացնելու արարքը չի հանգեցնում նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը, հետևաբար նաև՝ դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտման: Այսպես, հարուցված մի շարք կարգապահական վարույթների պարագայում, օրինակ, Հանձնաժողովն էական է համարել այն, որ գործում առկա փաստական տվյալներով հիմնավորված՝ հայտարարագրի կոնկրետ բաժնում ոչ ամբողջական կամ սխալ ներկայացված տվյալները համակցության մեջ դիտարկելով այլ բաժիններում ներկայացված տվյալների հետ (օր՝ Հայտարարագրի «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվող տվյալները) հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալներ, որոնք բավարար են պաշտոնատար անձի շահերի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, այլ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվում է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային

դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվում պաշտպանվող հանրային շահը:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը կայացրել է վարույթը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայությամբ կարճելու որոշում՝ հիմք ընդունելով այն, որ դատավորն իր հայտարարագրում չէր ներառել սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ տվյալները, սակայն վերջինս տվյալ անշարժ գույքի համասեփականատեր էր դարձել ընտանիքի անդամի կարգավիճակով դեռևս անչափահաս տարիքում՝ օրենքի ուժով: Բացի այդ, տվյալ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման գործընթացում չէր ունեցել մասնակցություն: Նշվածով պայմանավորված՝ սուբյեկտի արարքում զանցակազմի պարտադիր տարր հանդիսացող մեղքը չէր կարող համարվել հաստատված, ինչը կոնկրետ վարույթում բացառել է հակաիրավական արարքի կատարումը:

2022 թվականի ընթացքում հարուցված կարգապահական վարույթներից մեկ գործով Հանձնաժողովը հաստատված է համարել, որ առկա է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտում, որը, մասնավորապես, դրսևորվել է պաշտոնատար անձի հայտարարագրում առևտրային կազմակերպությունից ստացված վարձակալության դիմաց վճարված գումարի (եկամտի) վերաբերյալ տվյալներ չներկայացնելու արարքում:

Նշվածի կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակում բացակայում է հնարավորությունը՝ իրական և ամբողջական պատկերացում կազմելու հայտարարատու պաշտոնատար անձի իրական գույքային դրության վերաբերյալ: Մինչդեռ, նշված գործի վարույթը կարճվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետով սահմանված իրավանորմի ուժով՝ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով:

Մեկ այլ գործով Հանձնաժողովն արձանագրել է դատավորի վարքագծի կանոնի՝ նյութական բաղադրիչի իմաստով բովանդակային խախտում, մասնավորապես հայտարարագրում ներկայացված են եղել ոչ ամբողջական տվյալներ՝ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող մի շարք անշարժ գույքերի, դրամական միջոցի մնացորդի, ինչպես նաև իր հետ համատեղ բնակվող չափահաս անձի առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակության վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու առումով: Արդյունքում, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական

օրենքի 148-րդ հոդվածով սահմանված կարգով, Բարձրագույն դատական խորհրդին **միջնորդություն է** ներկայացրել կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Հանձնաժողովի՝ վերոնշյալ միջնորդության քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդն իր կողմից կայացված որոշմամբ կարճել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը՝ դատավորի լիազորությունները դադարած լինելու հիմքով:

4.2 Անհամատեղելիության պահանջների խախտման և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ

2022 թվականի ընթացքում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել են թվով 10 վարույթներ, որոնցից 8 վարույթը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, 1-ը անհամատեղելիության պահանջների և իրավիճակային շահերի բախման առերևույթ խախտման, իսկ 1-ը՝ իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքերով:

Նշված վարույթները հարուցվել են Ազգային ժողովի պատգամավորների, համայնքի ղեկավարի, մարզպետի և Երևանի քաղաքապետի տեղակալի պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ:

Իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի առթիվ Շիրակի մարզպետի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել անձի՝ Հանձնաժողովին հասցեագրված գրավոր դիմումը, որով դիմումատուն հայտնել է, որ մարզպետը դրսևորել է կամայական վարքագիծ՝ իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը նշանակելով պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Երևանի քաղաքապետի տեղակալի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը, որում տեղ գտած նյութի համաձայն՝ պաշտոնատար անձը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նախագահ: Նշվել է նաև, որ այն հանդիսանում է ՀՀ կառավարության ներքո գործող ընկերություն, որի գործունեությունը միտված է խոշորագույն ներդրողների և գործընկերների հետ համատեղ լայնածավալ նախագծերի իրականացմանը:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Ազգային ժողովի պատգամավորների նկատմամբ թվով վեց վարույթները հարուցվել են Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Նախառնության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության 2022 թվականի աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների շրջանակում իրականացված պատգամավորների 2021 թվականի տարեկան շահերի հայտարարագրերի ստուգմամբ հայտնաբերված առերևույթ խախտումները, որոնք հիմնականում առնչվում են առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ տվյալները հայտարարագրերում ներկայացված չլինելու դեպքերին:

Հաջորդիվ, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով համայնքի ղեկավարի նպատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարկումը, որում տեղ գտած նյութում, մասնավորապես, ներկայացվել են տվյալներ համայնքի ղեկավարի բաժնամասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ (որի կառավարումը, ինչպես նաև բաժնեմասը հետագայում հանձնել էր վերջինիս կնոջը), նույն համայնքի կարիքների համար իրականացված գնումների գործընթացի արդյունքում 537 միլիոն ՀՀ դրամի չափով պայմանագրեր կնքելու մասին: Տվյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից ձեռք բերված նյութերի ուսումնասիրմամբ գնումների գործընթացում արձանագրվել են գնումների անցկացման կարգի խախտումներ, իսկ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ուսումնասիրմամբ Հանձնաժողովի մոտ ձևավորվել է հիմնավոր կասկած դրանց կեղծ լինելու առումով: Տվյալ վարույթը կասեցվել է Հանձնաժողովի որոշմամբ, իսկ վարույթի նյութերը ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն: 2022 թվականի ընթացքում հարուցված վերոնշյալ մյուս վարույթները հաշվետու տարվա ընթացքում դեռևս գտնվել են քննության փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված 10 համապատասխան վարույթներից եզրափակվել է մեկ վարույթ, որը հարուցվել է մարզպետի տեղակալի նկատմամբ: Նշված վարույթի հարուցման համար հիմք է հանդիսացել կուսակցությունների դաշինքի ղեկավարի՝ Հանձնաժողովին հասցեագրված դիմումը: Դիմումատուն հայտնել էր, որ մարզպետի տեղակալը, միաժամանակ զբաղեցնում է համայնքի ավագանու անդամի պաշտոնը, որը անհամատեղելի է վերջինիս զբաղեցրած պաշտոնի հետ: Հարուցված վարույթի

ընթացքում, Հանձնաժողովը, մատնանշված երկու հանրային պաշտոնները միաժամանակ զբաղեցնելու վերաբերյալ ձեռք բերված փաստական տվյալների համադրման և իրավական նորմերի պահանջների բովանդակային վերլուծության արդյունքում 2022 թվականի սեպտեմբերի 20-ին իր կողմից կայացված եզրակացությամբ արձանագրել է, որ հանրային պաշտոնների շարքում պետական վարչական պաշտոն հանդիսացող մարզպետի տեղակալի պաշտոնը անհամատեղելի է համայնքային քաղաքական պաշտոն հանդիսացող համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ, հետևաբար մարզպետի տեղակալի կողմից չի պահպանվել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ այլ մարմնում իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքի պահանջը:

4.3 Վարույթների արդյունքում կայացված վարչական ակտերի (բարեվարքության վերաբերյալ խորհրդարվական եզրակացությունների) բողոքարկումը

2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում բողոքարկվել է մեկ վարչական ակտ, որը Հանձնաժողովը կայացրել է հայտարարագրմանն առնչվող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված գործի քննության արդյունքում: Տվյալ գործով վարչական պատասխանատվության է ենթարկվել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձը (համայնքի ավագանու անդամը) նույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խախտում թույլ տալու, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիրը չներկայացնելու համար: Վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով, գործը գտնվում է ՀՀ վարչական դատարանի վարույթում:

Հաշվետու ժամանակահատվածին նախորդող տարում Վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախկին դատավորը դիմում էր ներկայացրել Սահմանադրական դատարան: Դիմումատուն, մասնավորապես, գտնում էր, որ ինչպես Հանձնաժողովի՝ 2021 թվականին իր նկատմամբ կայացված եզրակացությամբ, այնպես էլ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ իր նկատմամբ կիրառված «Հանրային ծառայության մասին» օրենքի՝

անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ դրույթները հակասում են Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Գագիկ Խանդանյանի անհատական դիմումի ընդունելիության վերաբերյալ» թիվ ՍԴԴԿՈ-91³ որոշմամբ դիմումն ընդունվել էր քննության, որի արդյունքում, Սահմանադրական դատարանի թիվ ՍԴԱՈ-6 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կարճվել է:

Նշված որոշմամբ Սարմանադրական դատարանը, մասնավորապես արձանագրել է, որ դիմողի նկատմամբ կիրառվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, 159-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը և 2.1-ին մասը, որոնք դիմողի կողմից, սակայն, չեն վիճարկվել: Տվյալ գործով Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև այն, որ դիմողի նկատմամբ կիրառված անհամատեղելիության պահանջը նախատեսված է Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և չի հանդիսանում Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասության իմաստով «անհամատեղելիության լրացուցիչ պահանջ»: Տվյալ պարագայում դատավորի՝ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու արգելքը, ի տարբերություն «պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում» **պաշտոն զբաղեցնելու արգելքի, գործում է որպես բացարձակ արգելք:**

Տվյալ գործի վարույթով Սահմանադրական դատարանը եկել է այն եզրահանգման, որ դիմողի՝ որպես դատավորի, Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասության իմաստով առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու հիմքով լիազորությունները դադարեցնելիս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը վերջինիս նկատմամբ չի կիրառվել: Մասնավորապես, նշված արձանագրումներով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը կարճել է գործի վարույթը:

Հաշվետու ժամանակահատվածում առաջին անգամ թեկնածուների կողմից ՀՀ վարչական դատարան թվով 7 հայցեր են ներկայացվել Հանձնաժողովի բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման արդյունքներով կայացվող խորհրդատվական եզրակացությունները վիճարկելու նպատակով: Հատկանշական է նաև այն, որ նշված հայցերը առիթ են հադիսացել մասանագիտացված դատարանի համար համակարգային առումով վերլուծության

³ Տե՛ս՝ https://www.concourt.am/decision/decisions/620219360fc6a_sddkv-91.pdf

ենթարկելու Հանձնաժողովին վերապահված՝ ինչպես բարեվարքության ուսումնասիրությունների, այնպես էլ կոնկրետ փաստական հիմքերով առերևույթ խախտումների (դեպքերի) հիման վրա հարուցվող և վարույթային կարգով քննվող գործերի բովանդակային սահմանները: Այս առումով ՀՀ Վարչական դատարանն առանցքային է համարել բացահայտել Հանձնաժողովի կողմից ընդունվող բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների իրավաբանականության տարրերը և այս համատեքստում իրավական դիրքորոշում արտահայտել այն մասին, որ բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունն օրենքի ուժով իրականացվող գործընթաց է՝ ի տարբերություն Հանձնաժողովի կողմից իրականացվող կոնկրետ վարույթների որոնք հարուցվում են կոնկրետ խախտումների կամ փաստերի բացահայտման համար, այսինքն՝ դրանք հետապնդում են որոշակի փաստերի հաստատման կամ հերքման նպատակ:

Հաջորդիվ, դատարանը փաստագրել է նաև, որ բարեվարքության վերաբերյալ եզրակացությունն ունի խորհրդատվական բնույթ և բովանդակություն. «ինչն ըստ էության նշանակում է, որ այն Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների ընտրության, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում որոշում կայացնող սուբյեկտների համար չի կրում որևէ պարտադիր բնույթ, այլ զուտ հանդիսանում է Հանձնաժողովի կողմից տվյալ անձի բարեվարքության շրջանակներում իրականացված ուսումնասիրության վերաբերյալ ամփոփ տեղեկատվության ներկայացում»:

Այսպիսով, մասնագիտացված դատարանն էական հանգամանք է գնահատել այն, որ Հանձնաժողովի կողմից իրականացվող բարեվարքության ուսումնասիրությունները չեն կրում վարույթային բնույթ, դրանք իրականացվում են Օրենքով սահմանված այնպիսի ընթացակարգով, որի շրջանակներում բացառապես համադրվում և ամփոփվում են տարբեր աղբյուրներից ստացված և թեկնածուի կողմից բարեվարքության հարցաթերթիկում ներկայացված տվյալները: Ի տարբերություն վարույթային ընթացակարգերի՝ օրենքով սահմանված բարեվարքության ուսումնասիրությունների նման ընթացակարգը չի պարտավորեցնում վարչական մարմնին ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն՝ հաստատելով կոնկրետ գործով փաստական հանգամանքներ, ինչը պարտադիր վարչարարության բաղադրիչ է վարչական մարմնի կողմից իրականացվող վարույթների պարագայում:

Նման պայմաններում ՀՀ Վարչական դատարանը թվով 6 վարչական գործով եզրահանգել է, որ ներկայացված հայցերը ենթակա չեն դատարանում

քննության, ինչն իրավական հիմք է հանդիսանում գործի վարույթը կարճելու համար: Նշված դատական ակտերի դեմ բերվել է մեկ վերաքննիչ բողոք, որն ընդունվել է վարույթ և գտնվում է վերաքննության փուլում, իսկ ընդհանուր թվով ներկայացված 7 հայցերից մեկի պարագայում հարուցված վարչական գործի վարույթը կարճվել է՝ հայցից հրաժարվելու հիմքով:




V. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Պետության կողմից որդեգրված հակակոռուպցիոն քաղաքականության, ինչպես նաև Հանձնաժողովին վերապահված կանխարգելման մանդատի իրականացման տեսանկյունից Հանձնաժողովի առանցքային գործառույթներից է համարվում պետական պաշտոնների հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում իրավասում մարմին համապատասխան խորհրդատվական եզրակացության տրամադրումը: Նշված գործընթացի շարունակական և արդյունավետ իրականացման արդյունքում հնարավոր կլինի հասնել պետական պաշտոններում հավակնող անձանց բարեվարք կերպարի ձևավորմանը, հետևողական պայքար մղելու պետական համակարգում կոռուպցիայի, հովանավորչության, անձնական կապերով առաջնորդվելով որոշումներ կայացնելու և մի շարք այլ արատավոր գործընթացների և երևույթների դեմ:


Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է 512 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

Ներկայացված 512 եզրակացություններից 278-ը եղել են դրական, 64-ը՝ բացասական, 163-ը՝ դրական վերապահումով: 7 անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել, որից 4 եզրակացության չտրամադրման պատճառ են հանդիսացել թերի լրացված հարցաթերթիկներն, ինչն անհնարին է դարձրել թեկնածուի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների գույքային դրության գնահատումը, իսկ 3 եզրակացության չտրամադրման պատճառ՝ Հանձնաժողովի 4 անդամների ձայների հավասար բաշխվածությունը:



Ներկայացված եզրակացությունները վերաբերել են՝


- 114-ը՝ դատավորների թեկնածուների հավակնորդներին.
- 57-ը՝ Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 66-ը՝ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 7-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուներին.
- 2-ը՝ Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուներին.
- 136-ը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 31-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազներին.
- 1-ը՝ Գլխավոր դատախազի թեկնածուին.
- 4-ը՝ Գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուներին.
- 50-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց.
- 42-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող անձանց:



Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 114 եզրակացություններից 71-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 14 թեկնածուներ, իսկ պաշտոնում նշանակվել են 4-ը:

Եզրակացություններից 12-ը եղել են բացասական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 3 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել է 1-ը, իսկ 1 թեկնածու հանվել է համապատասխան ցուցակից՝ իր դիմումի հիման վրա:

Եզրակացություններից 31-ը եղել են դրական վերապահումով, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 9-ը թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 4-ը, իսկ 3 թեկնածուներ հանվել են համապատասխան ցուցակից Հանրապետության նախագահի առարկությունների հիմքով՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:




Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների համապատասխան ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց (թեկնածուների) վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 57 եզրակացություններից 29-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 9 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 3-ը, իսկ 1 թեկնածու հանվել է ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

Եզրակացություններից 9-ը եղել են բացասական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 2 թեկնածուներ, որից հետո հանվել են ցուցակից ՀՀ նախագահի առարկությունների հիմքով՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

Եզրակացություններից 19-ը եղել են դրական՝ վերապահումով, որոնցից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 4 թեկնածուներ, որից հետո 3 թեկնածուներ հանվել են ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուներ




Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 67 եզրակացություններից 33-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 25 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 4-ը, իսկ 7 թեկնածուներ հանվել են ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

Եզրակացություններից 13-ը եղել են բացասական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 8 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 2-ը, իսկ 1 թեկնածու հանվել է ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

Եզրակացություններից 20-ը եղել են դրական վերապահումով, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 15 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 4-ը, իսկ 1 թեկնածու հանվել է ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:


1 թեկնածուի վերաբերյալ բարեվարքության եզրակացություն չի ներկայացվել, քանի որ Հանձնաժողովի 4 անդամների ձայները բաշխվել են հավասար՝ 2-ն ընդդեմ 2-ի: Նշված թեկնածուն ընդգրկվել է ցուցակում և նշանակվել պաշտոնում:



Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 2 եզրակացություններն էլ եղել են դրական՝ վերապահումով: 2 թեկնածուներն էլ նշանակվել են համապատասխան պաշտոնում:

Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 7 եզրակացություններից 1-ը եղել է դրական, ու թեկնածուն նշանակվել է պաշտոնում: 2 եզրակացություն եղել է բացասական, որոնցից 1 թեկնածուն նշանակվել է պաշտոնում, և 3-ը՝ դրական վերապահումով, որոնցից 1 թեկնածուն նշանակվել է պաշտոնում:

1 թեկնածուի վերաբերյալ բարեվարքության եզրակացություն չի ներկայացվել, քանի որ Հանձնաժողովի 4 անդամների ձայները բաշխվել են հավասար՝ 2-ն ընդդեմ 2-ի: Նշված թեկնածուն նշանակվել է պաշտոնում:




Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության 136 եզրակացություններից 73-ը եղել են դրական, որոնցից ցուցակում ընդգրկվել են 16 թեկնածուներ, իսկ պաշտոնում նշանակվել են 10-ը:

Եզրակացություններից 16-ը եղել են բացասական, որոնցից ցուցակում ընդգրկվել ու պաշտոնում նշանակվել են 2 թեկնածուներ:

Եզրակացություններից 43-ը եղել են դրական վերապահումով, որից ցուցակում ընդգրկվել են 14 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 11-ը, իսկ 1 թեկնածու հանվել է ցուցակից:

4 անձի վերաբերյալ բարեվարքության եզրակացություն չի ներկայացվել, քանի որ վերջիններիս կողմից հարցաթերթիկները լրացվել են թերի, ինչն անհնարին է դարձրել թեկնածուի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների գույքային դրության գնահատումը:


Նշված 4 թեկնածուներից 1-ն ընդգրկվել է ցուցակում:




Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 31 եզրակացություններից 19-ը եղել են դրական, որ որոնցից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել և պաշտոնում նշանակվել են 17 թեկնածու:

Եզրակացություններից 3-ը եղել են բացասական, որոնցից ցուցակում ընդգրկվել են 3-ը, իսկ պաշտոնում նշանակվել են 2 թեկնածու:

Եզրակացություններից 9-ը եղել են դրական՝ վերապահումով, որոնցից ցուցակում ընդգրկվել և պաշտոնում նշանակվել են 8 թեկնածու:



Գլխավոր դատախազի թեկնածուի և Գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված 5 եզրակացություններից 1-ը եղել է դրական ու թեկնածուն նշանակվել է համապատասխան պաշտոնում, 2-ը՝ դրական վերապահումով, որոնցից երկու թեկնածուներն էլ նշանակվել են համապատասխան պաշտոններում, իսկ 2-ը բացասական, որոնցից համապատասխան պաշտոնում նշանակում չի եղել:




Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համարել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 43 եզրակացություններից 22-ը եղել են դրական, ու թեկնածուներից 19-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել համապատասխան պաշտոններում:

Եզրակացություններից 5-ը եղել են բացասական: Թեկնածուներից 1-ն ընդգրկվել է ցուցակում ու նշանակվել համապատասխան պաշտոնում:

Եզրակացություններից 15-ը եղել են դրական՝ վերապահումով: Թեկնածուներից 11-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել համապատասխան պաշտոններում:


1 թեկնածուի վերաբերյալ բարեվարքության եզրակացություն չի ներկայացվել, քանի որ Հանձնաժողովի 4 անդամների ձայները բաշխվել են հավասար՝ 2-ն ընդդեմ 2-ի: Նշված թեկնածուն նշանակվել է պաշտոնում:



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 50 եզրակացություններից 29-ը եղել են դրական: Թեկնածուներից 9-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել են պաշտոնում:

Եզրակացություններից 2-ը եղել են բացասական: Թեկնածուներից ոչ ոք չի ընդգրկվել ցուցակում:

19 եզրակացություն եղել է դրական՝ վերապահումով, ու թեկնածուներից 5-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել պաշտոնում:



Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից թեկնածուների բարեվարքության վերաբերյալ **դրական** եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրությունների արդյունքում վերջիններիս բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոնների վերաբերյալ տեղեկություններ Հանձնաժողովը ձեռք չի բերել: Միաժամանակ գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները մեծամասամբ ազդեցություն չեն ունեցել թեկնածուների բարեվարքության գնահատականի վրա այն դեպքերում, երբ, հաշվի առնելով դրանց քանակը և բնույթը, Հանձնաժողովը դրանք չի դիտարկել որպես բացասական գործոն կամ խախտումների մեծ մասը եղել է տեխնիկական բնույթի և (կամ) վերաբերել է թեկնածուների ընտանիքի անդամներին, ինչպես նաև այն դեպքերում, երբ թեկնածուների կողմից ներկայացված պարզաբանումները և տրամադրված լրացուցիչ փաստաթղթերը փարատել են Հանձնաժողովի մոտ թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների գույքային դրության արժանահավատության առնչությամբ մտահոգություններն ու ռիսկերը:

Հարկ է նաև նշել թեկնածուների կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև դրա վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալ չներկայացնելը գնահատվել են յուրաքանչյուր դեպքով առանձին՝ հաշվի առնելով դրանց քանակը, բնույթը և վաղեմության ժամկետներ:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ **դրական վերապահումով** եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ՝

- բարեվարքության հարցաթերթիկում և հայտարարագրերում ներկայացված տվյալների, ինչպես նաև Հանձնաժողովին հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների համադրման

արդյունքներով դուրս են բերվել թեկնածուների գույքային դրության վերաբերյալ որոշակի անհամապատասխանություններ, որոնք թեև առանձին-առանձին որպես բացասական գործոն չեն դիտարկվել, սակայն իրենց համակցության մեջ ձևավորել են թեկնածուի և նրա ընտանիքի անդամի գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն և դիսկ: Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ արձանագրված գույքային անհամապատասխանությունների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, բայց նաև բավարար չեն եղել բացասական գնահատականի ձևավորման համար՝ Հանձնաժողովը դրանք նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն:

- թեկնածուները ենթարկված են եղել վարչական կամ կարգապահական պատասխանատվության: Յուրաքանչյուր դեպքի համար Հանձնաժողովն ուսումնասիրել է դրանց քանակը և բնույթը, նշանակված կարգապահական տույժի ժամկետները՝ ինչից ելնելով նշված հանգամանքները Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն: Միաժամանակ, բարեվարքության գնահատականի կազմման համար Հանձնաժողովը վարչական իրավախախտումների՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների քանակը և դրանց բնույթը, դիտարկել է բարեվարքության վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների վերաբերյալ տեղեկությունների համադրմամբ:

- թեկնածուների աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի առնչությամբ առկա տեղեկությունները, դրանց վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների քանակը և բնույթը, ինչպես նաև դրանց վերաբերյալ անկողմնակալ դիտորդի հնարավոր ընկալումները Հանձնաժողովի մոտ ձևավորել են թեկնածուների անկախության, անաչառության և ապաքաղաքական լինելու պահանջների ապահովման խոցելիության առնչությամբ որոշակի դիսկեր:

Թեկնածուների աշխատանքային գործունեության շրջանակներում դրսևորած վարքագծի առնչությամբ Հանձնաժողովը նաև գնահատել է վերջիններիս կողմից կայացված որոշումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման դեպքերին՝ անդրադառնալով նաև դրանց առնչությամբ անկողմնակալ դիտորդի տեսանկյունից հնարավոր ընկալումներին և զանգվածային լրատվության միջոցներում դրանց վերաբերյալ առկա հրապարակումներին:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ **բացասական** եզրակացություններ ներկայացվել են հիմնականում այն դեպքերում, երբ՝

- թեկնածուների և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերում ու բարեվարքության հարցաթերթիկում ներկայացվել են էական նշանակություն ունեցող՝ թեկնածուի գույքային դրության վերաբերյալ ոչ ամբողջական տվյալներ, իսկ առանձին դեպքերում ներկայացված տվյալները պաշտոնական այլ աղբյուրներից ստացված տվյալներով չեն հաստատվել, ինչի արդյունքում դուրս են բերվել գույքային դրության առնչությամբ անհամապատասխանություններ, որոնք ձևավորել են վերջիններիս գույքի ծագման աղբյուրների կամ եկամուտների օրինականության վերաբերյալ անարժանահավատություն: Այն դեպքերում, երբ առկա անհամապատասխանությունները, մասնավորապես՝ գույքի ծագման աղբյուրների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, ձևավորելով գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն և ռիսկ, Հանձնաժողովը դրանք գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոն: Թեկնածուների ընտանիքի անդամների գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի մտահոգություններն առավել ընդգծվել են այն համատեքստում, երբ վերջիններիս ընտանիքի անդամները տարիներ շարունակ զբաղեցրել են հիմնականում պետական պաշտոններ: Թեկնածուների հետ համատեղ բնակվող անձանց՝ հիմնականում ամուսինների և ծնողների, հայտարարագրեր չներկայացնելու փաստը Հանձնաժողովը նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում օրենքով սահմանված կարգով բոլոր հայտարարագրերը ներկայացնելու ուժով Հանձնաժողովը զրկված չի եղել թեկնածուների և նրանց ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն կատարելու հնարավորությունից.

- թեկնածուների՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը և դրանց վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելը, հատկապես հաշվի առնելով կարգապահական տույժերի քանակը, խախտման բնույթը, տույժի խիստ տեսակը, ինչպես նաև կարգապահական տույժերը վերջին տարիներին կիրառված լինելու հանգամանքները, Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն.

- թեկնածուների աշխատանքային գործունեության շրջանակներում դրսևորած վարքագծի առնչությամբ Հանձնաժողովը նաև գնահատել է վերջիններիս կողմից կայացված որոշումներով Մարդու իրավունքների

ելրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման դեպքի հանգամանքները:

Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում տրամադրված որոշ եզրակացությունների արդյունքներով Հանձնաժողովն արձանագրել է, որ առկա են թեկնածուների բանկային հաշիվների մուտքերի-ելքերի և ստացած եկամուտների միջև էական տարբերություններ, որոնք մեծամասամբ պայմանավորված են եղել թեկնածուների կողմից խաղաղույթներ կատարելու և շահումով խաղերի արդյունքում նույն բանկային հաշիվներով գումար ստանալու հանգամանքով:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ մյուս բոլոր խնդիրները, մասնավորապես՝ թեկնածուների կողմից բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելը, թեկնածուներին համապատասխան պաշտոններում նշանակելու դեպքում շահերի բախման հնարավոր իրավիճակները և այլն, Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրել և դիտարկել է թեկնածուների վերաբերյալ արձանագրված այլ անհամապատասխանությունների հետ համադրությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում հանցագործության առերևույթ հատկանիշների առկայության հիմքով 12 անձի վերաբերյալ համապատասխան հաղորդումներ են ներկայացվել Գլխավոր դատախազություն

Կոռուպցիայի կանխարգելման մանդատի շրջանակներում, հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունների արդյունքները, 28 թեկնածու (ընդհանուր 39 անձ՝ այդ թվում ընտանիքի անդամներ) դիմել է Հանձնաժողովին՝ բարեվարքության ուսումնասիրության իրականացման գործընթացում հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանություններն ուղղելու նպատակով:

Միաժամանակ, Հանձնաժողովը գործընթացի կատարելագործման, ինչպես նաև հանրային հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով, օրենսդրական նախագիծ է շրջանառել, համաձայն որի՝ նախատեսվում է եզրակացության եզրափակիչ մասերը դարձնել հրապարակային: Դրանով Հանձնաժողովը նպատակ է հետապնդում իր գործողություններում առավել թափանցիկ լինել հանրության առջև՝ ավելի բարձրացնելով իրավասու մարմինների և ուսումնասիրության գործընթացի հանրային հաշվետվողականությունը: Գործընթացի թափանցիկությանն ու հանրային հաշվետվողականության բարձրացմանը կիսթանի նաև այն, որ իրավասու մարմնի կողմից բացասական կամ դրական վերապահումով եզրակացությունների դեպքում թեկնածուների նշանակման որոշումը լինի պատճառաբանված ու

հրապարակային: Բացի այդ, Հանձնաժողովն առաջիկայում ցանկանում է ընդլայնել բարեվարքության ուսումնասիրություն անցնող պետական պաշտոնների ցանկը, մասնավորապես՝ ներառելով նաև նշանակովի քաղաքական պաշտոնները՝ որպես անկողմնակալ դիտորդի տեսանկյունից առավել ռիսկային պաշտոն:



VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՋՍՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի հունվարի 1-ից կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթը՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգման լիազորությունը ներառյալ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունից փոխանցվել է Հանձնաժողովին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու արդյունքում օրենքը լրացվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը» վերտառությամբ նոր՝ 40.1-ին հոդվածով, ինչպես նաև սահմանվել, որ Հանձնաժողովը պետք է հաստատի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները, կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևը և դրա լրացման կարգը, ինչպես նաև կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից ներկայացվող՝ գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրի, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ձևանմուշները, համապատասխան փոփոխություններ կատարի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի 04-Ն համատեղ որոշման մեջ:

Հանձնաժողովի նոր լիազորությունների և գործառույթների սահմանումը պահանջում էր վերը նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի մշակում, ուստի 2022 թվականի հունիս ամսից սկսած հասարակական կազմակերպությունների, աուդիտորական կազմակերպությունների, կուսակցությունների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց հետ իրականացված հանրային լայն քննարկումների արդյունքում Հանձնաժողովի

կողմից մշակվել և ընդունվել են հետևյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝

ա) [«Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին»](#) 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշում, որով սահմանվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով ձևավորվող մրցութային հանձնաժողովի կազմավորման կարգը և գործառույթները, մրցութին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող նվազագույն պահանջները, մրցութին մասնակցելու սահմանափակումները, մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը և ժամկետները, մրցութային առաջարկների բացման, գնահատման կարգը և գնահատման մեթոդաբանությունը, աուդիտորական կազմակերպության վերջնական ընտրության կարգը, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները և աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգին ուղղված այլ կարգավորումներ.

բ) [«Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին»](#) 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշում, որով սահմանվել են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը.

գ) [«Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին»](#) 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշում, որով կարգավորվել են կուսակցության տարեկան հաշվետվության ձևի, կուսակցությունների կողմից տարեկան հաշվետվության լրացման և հրապարակման հետ կապված հարաբերությունները, Հանձնաժողով ներկայացնելու ընթացակարգերը, ինչպես նաև սահմանվել է կուսակցության տարեկան հաշվետվության՝ հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը.

դ) [«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»](#) 2022 թվականի հուլիսի 29-ի N 05-Ն որոշում, որով սահմանվել են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում

փոփոխություն կատարելու կարգը, ինչպես նաև հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ

Կուսակցությունների հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրման գործընթացն ապահովելու նպատակով մշակվել է ձևաթուղթ, դրա լրացման ուղեցույց և տրամադրվել կուսակցություններին՝ հայտարարատու պաշտոնատար անձանց վերաբերյալ պահանջվող տեղեկություններն ստանալու համար, սակայն ՀՀ-ում գրանցված և գործող կուսակցություններից միայն 73-ի կողմից են ստացվել պահանջված տեղեկությունները, որոնք պարունակել են մոտ 560 հայտարարատուների վերաբերյալ տվյալներ, ինչը մուտքագրվել է հայտարարագրման էլեկտրոնային համակարգ:

Կուսակցություններից ստացված՝ հայտարարատուների տվյալները համադրվել են իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության բազայում առկա տվյալների հետ, անհամապատասխանություններ հայտնաբերման դեպքում՝ ծանուցումներ են ուղարկվել կուսակցություններին՝ առաջարկելով կատարել համապատասխան ճշգրտումներ:

ԱՌՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աուդիտի կազմակերպման նպատակով մշակվել է անհրաժեշտ տեղեկությունների ներկայացման ձևաչափ, այն ուղարկվել է կուսակցություններին՝ անհրաժեշտ տեղեկություններն ստանալու նպատակով:

55 կուսակցություններից ստացվել են աուդիտի կազմակերպման նպատակով անհրաժեշտ տեղեկությունները, ինչի հիման վրա պարզվել է 2022 թվականին աուդիտի ենթակա կուսակցությունների ցանկը և 2021 թվականի ընթացքում պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների ցանկի հետ մեկտեղ կազմվել է մեկ ընդհանուր ցանկ, ըստ որի՝ 2022 թվականին աուդիտի ենթակա կուսակցությունները թիվը կազմել է 11:

Աուդիտորական ծառայությունների պայմանագրերի գների որոշման համար աուդիտորական կազմակերպություններին են ներկայացվել պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների վերաբերելի տվյալները՝ գնային առաջարկներ ներկայացնելու համար:

Աուդիտորական կազմակերպություններից ստացված գնային առաջարկների հիման վրա, փորձագետի ներգրավմամբ և սահմանված մեթոդաբանությամբ, որոշվել է աուդիտի ենթակա յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի՝ աուդիտորական ծառայությունների պայմանագրի արժեքը և Հանձնաժողովի կայքում հրապարակվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթ, ինչի վերաբերյալ համապատասխան գրություն է ուղարկվել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին՝ բոլոր աուդիտորական կազմակերպություններին իրազեկելու նպատակով:

2022 թվականի հուլիսի 8-ին տեղի է ունեցել աուդիտորական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկների բացման նիստը:

Մրցութային առաջարկներ են ներկայացվել 6 աուդիտորական կազմակերպությունների կողմից: Գնահատման փուլի արդյունքում վիճակահանության փուլ են անցել 4 աուդիտորական կազմակերպություններ՝

Վերջնական հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպություններին առաջարկվել է կնքել պայմանագրեր՝ համապատասխան կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտն իրականացնելու համար:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀԶ ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց և 11 կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտն իրականացնելը բաժին է ընկել վերջնական հաղթող ճանաչված 2 աուդիտորական կազմակերպություններին՝ «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին և «Թրասթ Աուդիտ» ՍՊԸ-ին:

ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2022 թվականի օգոստոսի 1-ին Հանձնաժողովը աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպությունների հետ: 2022 թվականի օգոստոսի 30-ին և սեպտեմբերի 7-ին «ԹՄ աուդիտ» ՓԲ ընկերությունը Հանձնաժողովին հասցեագրված գրություններով խնդրել է «Բարգավաճ Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգել՝ միաժամանակ տեղեկացնելով, որ նշված կուսակցությունների կողմից դեռևս չեն ներկայացվել ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ: Այդ հանգամանքներով պայմանավորված՝ աուդիտորական եզրակացությունների տրամադրման գործընթացը փաստացի

ավարտին է հասցվել 2022 թվականի հոկտեմբերի 15-ին և Հանձնաժողով է ներկայացվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների 11 աուդիտորական եզրակացություն, ինչից հետո մեկնարկել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացը:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄ

Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 03-L որոշմամբ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման նպատակով լրացուցիչ տվյալների, տեղեկատվության, փաստաթղթերի ստացման անհրաժեշտությունից ելնելով կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել է 60 օրով: Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում պարզվել է, որ Սահմանադրական օրենքի կիրառելիության հետ կապված առկա են որոշակի անհամապատասխանություններ, կիրառվող հասկացությունների ոչ հստակություն, կիրառման ենթակա հարցերում՝ օրենսդրական բաց, ինչպես նաև իրավական որոշակիության հետ կապված խնդիրներ, որոնք վեր են հանվել Հանձնաժողովի կողմից և ներկայացվել ինչպես ԱԺ-ի (այդ թվում՝ ԱԺ խմբակցությունների, պետական-իրավական մշտական հանձնաժողովի), Վարչապետի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Արդարադատության նախարարության, Ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի, այնպես էլ կուսակցությունների, աուդիտորական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների քննարկմանը:

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՕ-456-Ն սահմանադրական օրենքի կիրառման արդյունքում կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորումը 2022 թվականի համար տրամադրվել է ամբողջությամբ՝ առանց Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պահանջների ապահովման:



VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՉՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը և կառավարումը հանրային հատվածում

Հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի կառավարման կառուցակարգերի մշակումն ու գործարկումը պայմանավորված է ոչ միայն ներպետական անհրաժեշտությամբ, այլ նաև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների կատարման, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման պահանջով: ՏՀԶԿ-ն Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցում, շեշտադրում է, որ հակակոռուպցիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը պետք է մշակվեն ավելի մեծ թվով շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, հիմնված լինեն կարիքների ու ռիսկի գնահատման վրա և ներառեն հավակնոտ միջոցառումներ, որոնք կթիրախավորեն փաստացի կոռուպցիոն ռիսկերը, կոռուպցիայի նկատմամբ խոցելի առանցքային այն ոլորտները, որտեղ բարեփոխումներն առաջնահերթ են: Բացի այդ, զեկույցում առաջարկվում է խթանել պետական մարմիններում ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերը՝ ռիսկի գնահատումների հիման վրա:

Հայաստանի Հանրապետությունում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում (որպես հեռանկարային զարգացման ուղենիշ՝ նաև մասնավոր ոլորտում) կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման միասնական համակարգի ներդնումը հանդիսանում է համակարգային կոռուպցիայի չեզոքացման կարևորագույն մեխանիզմներից մեկը: Այն ուղղված է հակակոռուպցիոն ոլորտի զարգացման, կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և կառավարման միասնական քաղաքականության մշակմանը, այնպիսի կառուցակարգերի կիրառմանը, որոնք կառավարելի

կդարձնեն կոռուպցիոն ռիսկերի առաջացումը և բարեվարք միջավայր կստեղծեն ողջ հանրային կառավարման համակարգում:

Հանրային հատվածի մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեխանիզմների առկայությունը կարևոր է հանրային բարեվարքության ցանկացած ռազմավարության համար: Արդյունավետ ռիսկերի կառավարման քաղաքականություններն ու գործընթացները նվազեցնում են հանրային հատվածի մարմինների խոցելիությունը կոռուպցիայի նկատմամբ՝ միաժամանակ ապահովելով, որ պետությունը գործի օպտիմալ՝ ի օգուտ քաղաքացիների: Ռիսկերի կառավարումը ներառում է կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման և դրանց արձագանքման մի շարք միջոցառումներ: Այդ գործընթացները ներառում են քաղաքականություն, պրակտիկա և ընթացակարգեր, որոնք առաջնորդում են ղեկավարությանը և անձնակազմին կատարել իրենց դերը բարեվարքության պահպանման գործում՝ համարժեք գնահատելով ռիսկերը և զարգացնելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ կոռուպցիայի դեմ պայքարն առավել նպատակային իրականացնելու համար կարևորվել է ինստիտուցիոնալ հենքի ստեղծումն ու զարգացումը և **ընդգծվել է միասնական մեթոդաբանության հիման վրա կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացման անհրաժեշտությունը:**

2019-2022 թվականների հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրով նախատեսվել էր մշակել պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններում **կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանություն, որը պետք է հաստատվեր Հանձնաժողովի կողմից:** Մեթոդաբանության հիման վրա պետական կառավարման համակարգի բոլոր մարմիններում պետք է իրականացվեին ռիսկերի համապարփակ գնահատումներ, որոնց արդյունքների հիման վրա նախատեսվում էր մշակել ոլորտային հակակոռուպցիոն գործողությունների ծրագրեր՝ ներառելով նախկինում ընդունված ծրագրերով սահմանված, բայց դեռևս չիրականացված գործողությունները: Չնայած դրան, բացակայում էր Հանձնաժողովի կողմից մեթոդաբանության մշակման լիազորության օրենսդրական ամրագրումը:

ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 24-ի N 1351-Ն որոշմամբ փոփոխության ենթարկվեց ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագիրը, որով ՀՀ պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումը վերապահվում

էր Հանձնաժողովին: Ծրագրում կատարված փոփոխությանը հաջորդեց լիազորող նորմի օրենսդրական ամրագրման նպատակով Հանձնաժողովի կողմից ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի⁴ մշակումը, որով մեթոդաբանության մշակման լիազորությունը վերապահվում է Հանձնաժողովին:

Ներկայացված գործընթացներին զուգահեռ 2022 թվականին Հանձնաժողովը մեկնարկել է կոռուպցիոն ռիսկերի գնահատմանն առնչվող հայեցակարգային փաստաթղթի և գնահատման մեթոդաբանության մշակման շուրջ աշխատանքը: Հանձնաժողովի կողմից մշակվել և 2022 թվականի հուլիսի 15-ին շրջանառվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ), որն առավել խորքային անդրադարձ է կատարում կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգին և ներկայացնում Հանձնաժողովի՝ որպես ոլորտային մասնագիտացված մարմնի, առաջարկներն ու դիրքորոշումը: Հայեցակարգի նախագիծը շրջանառության արդյունքում խնդրահարույց գնահատվեց մեթոդաբանության մշակման համար լիազորող նորմի բացակայության տեսանկյունից: Այս փուլում փաստաթուղթը լրամշակվել է և առաջիկայում կրկին կներկայացվի Արդարադատության նախարարություն:

Հայեցակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական մասնակցությամբ ձեռնարկություններում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը, վերլուծությանը և ռիսկերի կառավարման համակարգի ներդրմանն ու զարգացմանն ուղղված գործունեության համակարգման ուղեցույց և կոռուպցիոն ռիսկերի կառավարման հիմունքները ներառող պաշտոնական մոտեցումների համախումբ է: Այն ուղղված է հակակոռուպցիոն ոլորտի զարգացման, կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության և ռիսկերի զսպման միասնական քաղաքականության մշակմանը: Այն, ըստ էության, լրացնում է հակակոռուպցիոն ռազմավարության մեջ ամրագրված նպատակներն ու խնդիրները և առավել մանրամասն է անդրադառնում կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի տարրերին: Հայեցակարգով նախատեսված համապարփակ մոդելի ձևավորումը հնարավոր է եղել Հանձնաժողովի գործունեության ընթացքում իրականացված խորքային ուսումնասիրությունների, միջազգային փորձի վերլուծության, փորձագիտական խմբերի հետ քննարկումների և համատեղ աշխատանքի արդյունքում:

⁴ Նախագիծը 2023 թվականի փետրվարի 6-ին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Ներկայում գտնվում է լրամշակման փուլում:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման առաջարկվող համակարգը հնարավորություն կտա առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնել հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ, սահմանել և կիրառել այնպիսի կառուցակարգեր, որոնք պետք է ոչ միայն կառավարելի դարձնեն կոռուպցիոն ռիսկերի առաջացումը, այլև բարեվարք միջավայր ստեղծեն ողջ հանրային կառավարման համակարգում:

Հայեցակարգն առաջարկում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի հետևյալ կառուցվածքը՝

1) տարեկան ներքին գնահատում. իրականացվում է յուրաքանչյուր տարի գնահատվող կառույցի աշխատակիցներից ձևավորվող աշխատանքային խմբի կողմից՝ Հանձնաժողովի կողմից ներկայացված հարցաթերթիկի և նախորդ տարվա ընթացքում ներկայացված առողջացման ծրագրի իրականացման պլանի կատարողականի հիման վրա: Այս գործընթացը կրում է ամենամյա բնույթ և նպատակ է հետապնդում իրականացնել պետական և համայնքային կառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում և բացահայտված անհամապատասխանությունների պարագայում դրանց առողջացմանն ուղղված միջոցառումներ: Այս գործընթացի մասնակիցներն, ըստ էության, գնահատվող մարմիններն են, ինչպես նաև Հանձնաժողովը՝ գործընթացին մեթոդական և մասնագիտական աջակցության տրամադրման և առողջացման ծրագրերի մշակման փուլերում:

2) կամերալ գնահատում. իրականացվում է Հանձնաժողովի կողմից տարեկան ներքին գնահատման արդյունքների արժանահավատության ապահովման նպատակով: Կամերալ գնահատումները իրականացվում են ընտրանքային սկզբունքով, ինչպես նաև համակցվում են հանրային հարցումների արդյունքների հետ: Օրինակ՝ Հանձնաժողովը, ստանալով ներքին գնահատումների արդյունքները, դրանք համեմատում է հանրային հարցումների արդյունքների հետ և անհամապատասխանությունների բացահայտման պարագայում կոնկրետ գերատեսչություններում կոնկրետ ցուցիչների ստուգում նախաձեռնում: Կամերալ գնահատումները ևս կրում են ամենամյա պարբերական բնույթ:

3) արտաքին ոլորտային գնահատում. այս գործունեության առաջնային հետազոտության մեթոդը ոլորտի օրենսդրական, ինստիտուցիոնալ և կազմակերպչական շրջանակների և պրակտիկայի վերլուծությունն է (օրինակ՝ առկա համապատասխան միջազգային և ազգային զեկույցներ): Բացի այդ՝ ոլորտային ընդհանուր նպատակներն ու առանձնահատկությունները բացահայտելու, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի ընդհանուր ոլորտները (գործընթացները) և կոռուպցիոն ռիսկերն ու կոռուպցիոն ռիսկի գործոնները այս

ուլորտներում (գործընթացներում) որոշելու համար Հանձնաժողովի կողմից մշակվում է հարցաթերթ՝ թիրախային իրավասությունների շահագրգիռ կողմերի համար: Այս փուլում, որպես տեղեկատվության հավաքագրման մեթոդ, կիրառվում են նաև փորձագիտական հարցազրույցները: Գնահատման արդյունքների հիման վրա մշակվում է զեկույց՝ համապարփակ ներկայացնելով ոլորտում առկա խնդիրները և դրանց լուծման առաջարկները (օրինակ՝ կրթություն, առողջապահություն և այլն): Նմանատիպ գնահատումների միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս գնահատումները ծավալուն գործընթացներ են և մեկ ոլորտի գնահատումը կարող է տևել 6-12 ամիս, հետևաբար առաջարկվում է որոշակի ցուցանիշների հիման վրա ոլորտներին տալ առաջնահերթություն և նախատեսել տարեկան մեկ ոլորտային գնահատման իրականացում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոռուպցիոն ռիսկերի գնահատման բոլոր գործիքները սերտորեն փոխկապակցված են և փոխլրացնող, քանի որ այդ գործիքները տարբեր առավելություններ են ունենում, երբ համակցվում են այլ գործիքների համար կիրառվող տվյալների այլ աղբյուրների հետ: Այս առումով առաջարկվում է երկարաժամկետ հատվածում կիրառել բոլոր այդ գործիքները՝ քաղաքականության կոնկրետ համատեքստում կոռուպցիոն ռիսկերի գնահատման կուռ համակարգ ձևավորելու համար:

Հայեցակարգով առաջարկվող կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրման և զարգացման տեսլականը, ենթադրում է՝

1) պետական և համայնքային մարմինների, ինչպես նաև պետական մասնակցությամբ ձեռնարկությունների վկայագրում: Միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է միջազգային վկայագրում նախատեսել հակակոռուպցիոն համակարգի մարմինների, ինչպես նաև վերահսկողական գործառույթ իրականացնող մարմինների համար:

2) կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրում նաև մասնավոր ոլորտում, ինչը գործարար միջավայրի առողջացման և բարելավման նպատակ է հետապնդում:

3) իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության ինստիտուտի ներդրում: Ի թիվս այլ գործոնների, անկատար օրենսդրության կիրառումը գործնականում կարող է մեծացնել կոռուպցիոն դրսևորումների առաջացման հնարավորությունը: Հանրային գործառույթներ, պաշտոնական լիազորություններ, պարտականություններ սահմանելիս, կարգավորումները կարող են հնարավորություններ ստեղծել դրանց նպատակային նշանակությունը մեկնաբանելու և կոռուպցիայի համար հնարավորություններ ստեղծելու համար, հետևաբար օրենսդրության մեջ կոռուպցիոն ռիսկի գործոնների գնահատումը

կարևոր գործիք է, որն ուղղված է գործնականում օրենսդրության հնարավոր թույլ և խոցելի կետերը բացահայտելուն և վերացնելուն:

Հայեցակարգում շեշտադրվում է նաև կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործիքի համար քաղաքական կամքի որոշակի մակարդակի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես գործընթացի հաջողության և արդյունավետության նախապայման: Կարևորելով նշվածը՝ Հանձնաժողովը ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված 2023 թվականի հունվարի 11-ի գրությամբ առաջարկել է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում սահմանել, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման հայեցակարգը հաստատվում է ՀՀ կառավարության կողմից՝ Հանձնաժողովի ներկայացմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել պետության հանձնառությունը գործընթացի իրականացման համար:

Անդրադառնալով պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը, հարկ է նշել, որ դրանք հանդիսանում են պետությունների՝ որպես տնտեսական դերակատարների, իրենց գործառույթն իրականացնելու հիմնական խողովակը: Այս կազմակերպությունների միջոցով ստացվող օգուտները տնտեսական, քաղաքական և սոցիալական են: Նույնն են նաև վնասները, երբ տեղի է ունենում սխալ կառավարում կամ չարաշահում:

Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները խոցելի են որպես քաղաքական ֆինանսավորման, հովանավորչության և որպես կուսակցությունների հարստացման ուղիներ օգտագործելու համար: Կորպորատիվ կառավարման և սեփականության հետ կապված պայմանավորվածությունները կարող են այդ կազմակերպություններին ենթարկել շահագործման և խաթարել բարեվարքության պահպանմանն ուղղված կազմակերպությունների ջանքերը: ՏՀԶԿ մասնակից երկրների մեծ մասը պետական մասնակցությամբ կազմակերպություններին ենթարկում է շահերի բախման կանոնների, իսկ բոլոր երկրները՝ զգայուն տեղեկատվության հետ աշխատելու կանոններին:

Այս համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ անհրաժեշտ է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի մաս դարձնել նաև պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները, քանի որ դրանք, թեև փաստացի հանրային ծառայության համակարգի մեջ ներառված չեն, սակայն վերջիններիս գործունեությունը ևս հանրության մոտ ձևավորում է պետական համակարգի նկատմամբ համապատասխան վերաբերմունք:

Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրմանն առնչվող հարցերը **դուրս են մնացել ՀՀ օրենսդրական և ռազմավարական կարգավորումների դաշտից**: Հարցին անդրադարձ չի կատարվում նաև 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշմամբ հաստատված ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ: Այս համատեքստում Հանձնաժողովն ընդգծում է, որ առաջիկա տարիների հակակոռուպցիոն քաղաքականության և գործողությունների ծրագրի մշակման գործընթացում **պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրման հարցը ուշադրության կենտրոնում է պահելու**, ինչպես նաև առաջարկելու է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում համապատասխան կարգավորումների ամրագրում՝ Հանձնաժողովին լիազորությունների վերապահման նպատակով:

Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակումը նախատեսված է «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական հատվածում» ԵՄ Թվինինգ ծրագրի 4-րդ բաղադրիչի շրջանակում: Ծրագիրը մեկնարկել է 2022 թվականի հոկտեմբերին և նպատակ ունի խթանել Հայաստանի պետական հատվածում բարեվարքության տարածումը և կոռուպցիայի կանխարգելումը: Որպես հատուկ նպատակ՝ ծրագիրն ուղղված է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կրթական ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը, կոռուպցիայի կանխարգելման միջավայրի ստեղծմանը և ինստիտուցիոնալ կարողությունների ուժեղացմանը⁵:

Ծրագրի 4.1-ին ենթաբաղադրիչի շրջանակում նախատեսվում է մշակել պետական մասնակցությամբ ձեռնարկություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը և դրա հիման վրա ԵՄ փորձագետների և Հանձնաժողովի որակավորված անձնակազմի համագործակցությամբ փորձնական գնահատում իրականացնել առնվազն երեք պետական մասնակցությամբ կազմակերպությունում:

2023 թվականի փետրվարին ծրագրի փորձագետների կողմից Հանձնաժողովին է ներկայացվել մեթոդաբանության նախագիծը, որի վերաբերյալ Հանձնաժողովը մի շարք առաջարկներ է ներկայացրել փորձագետներին: Մեթոդաբանության լրամշակման փուլին կհաջորդի փորձնական գնահատումը երեք կազմակերպություններում (նախատեսվում է իրականացնել հունիս ամսին): Գործընթացը ենթադրելու է ինչպես օրենսդրական փոփոխությունների, այնպես էլ

⁵ Տե՛ս՝ <http://cpcarmenia.am/hy/news/item/2022/10/04/2022-10-04/>

մեթոդաբանության շուրջ միջգերատեսչական և հանրային քննարկումների, հանրային իրազեկման այլ միջոցառումների կազմակերպում:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման գործող նորմատիվ և ինստիտուցիոնալ համակարգն իր զարգացման պոտենցիալով կարող է գնահատվել արդյունավետ, եթե նշված գործընթացների համատեքստում առավելագույն կարևորություն է տրվի Հանձնաժողովի ռեսուրսների վերագնահատմանը և դրանց համապատասխանեցմանը նոր գործառույթին, ինչպես նաև Հանձնաժողովի կարողությունների զարգացմանը: Բացի այդ, նշված գործընթացները ենթադրում են նաև օրենսդրական փոփոխություններ՝ Հանձնաժողովին այդ գործառույթները վերապահելու, համապատասխան կառուցակարգերի և ընթացակարգերի օրենսդրական ամրագրումը և Հանձնաժողովի կողմից այդ գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Ընդհանուր օրենսդրության փոփոխություններով պայմանավորված՝ Հանձնաժողովի գործառույթների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների, ներառյալ՝ մարդկային, միջև առաջանում է անհամապատասխանություն:



VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը

«Կառավարության 2019 թվականի N 1332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության, դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի Հավելված 1-ում ամրագրվել է հակակոռուպցիոն կրթության տարածման կարևորությունը⁶՝ հակակոռուպցիոն ռազմավարության խնդիրներում հատկապես մատնանշելով հանրային կրթության և իրազեկման միջոցով կոռուպցիայի նկատմամբ ժխտողական վերաբերմունքի սերմանումը:

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված «Հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման, կոռուպցիայի դեմ պայքարի և արդյունքում կոռուպցիայի աստիճանական նվազեցման և հաղթահարման համար վճռորոշ ելակետային ու հիմնարար 3 ուղղություններից մեկը սահմանվել է **հակակոռուպցիոն կրթությունը և իրազեկումը:**

Այս առումով հակակոռուպցիոն ռազմավարությամբ առաջարկվել է շարունակական քայլեր ձեռնարկել հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթության տրամադրման հարցում: Ընդ որում, կառուցակարգային հարցերի լուծման նպատակով առաջարկվել է հակակոռուպցիոն կրթության իրականացման գործառույթը վերապահել Հանձնաժողովին՝ վերջինիս համար սահմանելով կրթական ծրագրերի, ուղեցույցների, պարբերական խորհրդատվական զեկույցների մշակման և հրապարակման պարտականություն:

Հաջորդիվ ստեղծվել են ինստիտուցիոնալ հիմքեր, որոնց արդյունքում ևս հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման և իրականացման համակարգումը վերապահվել է Հանձնաժողովին: «Կոռուպցիայի կանխարգելման

⁶ Տե՛ս՝ «ՀՀ կառավարության 2019թ. N 1332-Ն որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարության» Հավելված [N 1-ի 55-րդ կետի 8-րդ ենթակետ և 68-րդ](#)

հանձնաժողովի մասին» օրենքով⁷ Հանձնաժողովին վերապահված է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրագույն ծրագրերի և միջոցառումների իրականացում:

Հանձնաժողովը, որպես վերոգրյալի հետևանք, ՀՀ-ում կոռուպցիայի դեմ անհանդուրժողականության և անընդունելիության կայուն հասարակական վերաբերմունքի ձևավորումը սահմանել է որպես կոռուպցիան արմատախիլ անելու ինստիտուցիոնալ գործիք, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդելի ներդրում:

Նշված համատեքստում Հանձնաժողովը հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղություններով 2022 թվականին իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ վերապատրաստումներ, իրազեկման արշավներ, կնքվել են համագործակցության հուշագրեր և այլն:

Այսպիսով՝

1. ՄԱԿ-ի GRACE նախաձեռնության հետ համագործակցության շրջանակում IACA-ի և UNODC-ի կազմակերպած «Միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոց ուսանողների և երիտասարդների համար» մեկշաբաթյա վերապատրաստման առցանց ծրագրին մասնակցելու համար հրավիրվել են նաև հայ երիտասարդները: Հրավերը Հանձնաժողովի կողմից տարածվել է հայաստանյան բոլոր բուհերի^{8,9,10} և ԿԳՄՍ նախարարության շրջանում, որի արդյունքում 8 հայ երիտասարդներ հնարավորություն են ստացել մասնակցել վերապատրաստմանը:

Կարելի է ասել, որ Միավորված ազգերի կազմակերպության թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը (UNODC) և միջազգային հակակոռուպցիոն Ակադեմիան (IACA) միավորել է ուժերը՝ Արևելյան Եվրոպայի ուսանողների և երիտասարդների համար առաջին միջազգային հակակոռուպցիոն ամառային դպրոցի կազմակերպման համար:

Ամառային դպրոցի նպատակն է եղել ուսանողների և երիտասարդների ազնվության, էթիկայի և հակակոռուպցիոն արժեքների ու սկզբունքների իրազեկվածության բարձրացումը, ինչը կնպաստեր էթիկական արժեքների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նրանց շրջանում մտածելակերպի փոփոխությանը:

⁷ Տե՛ս՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» [ՀՀ օրենքի](#) 24-րդ հոդվածի 16-րդ կետ:

⁸ Տե՛ս՝

https://brusov.am/hy/announcement/mijazgayin_hakakorupcion_amarayin_dproci_masnacutyun_hraver/#sthash.1mhCHq5L.dpbs

⁹ Տե՛ս՝ <https://shsu.am/international-anti-corruption-summer-school-for-students-and-young-people/>

¹⁰ Տե՛ս՝ <https://www.amedu.am/index.php/am/events/view/531>

Ամառային դպրոցի առցանց ծրագիրը նախատեսված էր այն երիտասարդների համար, ովքեր ցանկանում էին և կարող էին իրենց համայնքում դառնալ փոփոխությունների առաջնորդներ: Ծրագիրը նախատեսում էր մասնակիցներին իրազեկել «կոռուպցիա» բացասական երևույթի վերաբերյալ և ընկալելի դարձնել դրա բացասական ազդեցությունը հասարակության վրա:

Մասնակիցներն ընտրվել են նաև նրանց լեզվական հմտությունների հաշվառմամբ, քանի որ դպրոցը անգլալեզու էր:

Ամառային դպրոցն անց է կացվել ինտերակտիվ ձևով՝ ներառելով 7 առարկայական նիստեր: Դասախոսությունները վարել են միջազգային ճանաչում ունեցող պրոֆեսորներ, ովքեր օգտագործել են հակակոռուպցիոն ոլորտում իրենց գիտելիքներն ու փորձը:

Դասընթացի ավարտին մասնակիցները պարգևատրվել են մասնակցության վկայագրերով:

2. Հանձնաժողովը մեծապես կարևորում է երիտասարդ սերնդի հետ ակտիվ երկխոսությունն ու համագործակցությունը և պատրաստակամություն հայտնում իրականացնելու համատեղ ծրագրեր:

2022 թվականին Հանձնաժողովի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի, միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը սկիզբ է դրել երկու կառույցների արդյունավետ փոխգործակցությանը:

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել կազմակերպելու և համատեղ իրականացնելու երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիայի կանխարգելմանը և գիտակից քաղաքացիների դաստիարակմանը: Նախատեսվում է կազմակերպել նաև Հանձնաժողովի ներկայացուցիչների հանդիպումներ Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողների և դասախոսական կազմի հետ, դասախոսություններ՝ Հանձնաժողովի գործունեության ոլորտին վերաբերող հարցերի շուրջ:

Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողները հնարավորություն կունենան այցելելու Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներ և ընդգրկվելու Հանձնաժողովի կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումներում:

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը սկիզբ է դրել նշված կառույցների հետ արդյունավետ փոխգործակցությանը:

Ստորագրված հուշագրով կողմերը համագործակցության պայմանավորվածություն են ձեռք բերել երկկողմանի հետաքրքրություն

ներկայացնող՝ իրավաբանական, ուսումնակրթական բնույթի ծրագրերի իրականացման, գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով տարբեր հարցերի քննարկման և լուծման, Կառավարման ակադեմիայի մագիստրանտների պրակտիկայի կազմակերպման, կողմերի գործունեությանն առնչվող հանրամատչելի նյութերի հրատարակման, նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման և համագործակցության ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող այլ ուղղություններով:

*8.2 Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ
նախատեսվող կրթական ծրագրերի իրականացման
նախապատրաստություն*

Չնայած բոլոր ջանքերին, կոռուպցիայի կանխարգելման համար անհրաժեշտ է ոչ միայն համակարգային նոր մեխանիզմների ներդրում, այլ նաև այդ մեխանիզմների գործարկումն ապահովող միջավայր, որտեղ կոռուպցիայի նկատմամբ առկա է զգայուն և դիմագրավող միջավայր:

Կրթական միջոցառումների և հանրային իրազեկման հիմնական նպատակը հասարակության գիտակցության մեջ կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մշակույթի ստեղծումն ու ամրապնդումն է:

Միաժամանակ, կարևորելով հակակոռուպցիոն կրթության արմատավորումը դեռևս դպրոցական տարիներից, ինչպես նաև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս «Հասարակագիտություն» առարկայի շրջանակներում դասավանդվում են կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող այնպիսի թեմաներ, որոնք ոչ միայն, ըստ էության, հնացած են և չեն արտացոլում կառավարության որդեգրած մոտեցումները կոռուպցիայի դեմ պայքարում, այլև անհրաժեշտ և բավարար միջոց չեն կոռուպցիայի նկատմամբ կատարյալ անհանդուրժողականության ձևավորման և հակակոռուպցիոն վարքագիծ ուսանելու նպատակի իրագործման համար, Հանձնաժողովը նախատեսում է մշակել և իրականացնել լայնածավալ կրթական և հանրային իրազեկման աշխատանքներ:

Հանձնաժողովը թիրախավորում է հակակոռուպցիոն կրթությունը հետևյալ մակարդակներում՝

Հանրակրթություն

- ավարտական բարձր դասարանների աշակերտների համար կոռուպցիայի կանխարգելման թեմաներով առարկայական ծրագրի մշակում և ներդնում.

- կոռուպցիայի կանխարգելման թեմաներով ուսուցիչների վերապատրաստում.

- ծնողների և ուսուցիչների համար կոռուպցիայի կանխարգելման կարևորության վերաբերյալ քննարկումների և սեմինարների կազմակերպում.

Մասնագիտական/բուհական կրթություն

- կոռուպցիայի կանխարգելման թեմաներով առարկայական ծրագրերի մշակում և ներդնում.

- ավարտական կուրսերի ուսանողների համար վարքագծի կանոնների և մասնագիտական պատասխանատվության վերաբերյալ (կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն) առարկայական ծրագրի մշակում և ներդնում.

Շարունակական կրթություն/վերապատրաստումներ

- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների պահպանման հայեցակարգերի հանրայնացման ծրագրերի մշակում և ներդնում.

- ՀՀ ամբողջ տարածքում շահերի բախման, անհամատեղելիության պահանջների պահպանման հայեցակարգերի շուրջ հանրային քննարկումների կազմակերպում.

- հանրային ծառայողների շրջանում վարքագծի կանոնների շուրջ վերապատրաստումների շարունակական իրականացում.

- հայտարարագրերի լրացման ուղեցույցների մշակում և նշված ուղղությամբ հանրային ծառայողների վերապատրաստումների իրականացում.

- բարեվարքության, բարեվարքության ուսումնասիրության գործընթացում քաղաքացիների մասնակցության կարևորության վերաբերյալ տեղեկատվական թերթիկների և հոլովակների կիրառում:

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կրթական ծրագրերն իրականացվում են ԵՄ Թվինինգ ծրագրի համագործակցության շրջանակներում: 2022 թվականի հոկտեմբերի 4-ին տեղի է ունեցել Եվրոպական միության «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» Թվինինգ ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) պաշտոնական բացման միջոցառումը: Ծրագիրը բաղկացած է 4 բաղադրիչներից, որոնցից

յուրաքանչյուրն ունի իր ենթաբաղադրիչները՝ համապատասխան գործողություններով և վերջնարդյունքներով: Բաղադրիչ 1-ի գործողություններն ուղղված են հակակոռուպցիոն կրթական և իրազեկման բարձրացման ծրագրերի մշակմանը և դրանց իրականացման աջակցման ոլորտում Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը: Մասնավորապես, բաղադրիչ 1-ի ենթաբաղադրիչները ենթադրում են՝

1.1 բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման համար գործող ենթակառուցվածքի ստեղծում.

1.2 բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ հանրակրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում.

1.3 բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ բարձրագույն կրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում.

1.4 հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի վերաբերյալ մասնագիտական զարգացման համակարգի ստեղծում և բարեվարքության վերապատրաստման ծրագրերի նյութերի մշակում, հաստատում և հրապարակում:

Գործողություն 1.1

Բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման համար գործող ենթակառուցվածքի ստեղծում

Նշված գործողության արդյունքում 2022 թվականին իրականացվել է՝

- Հանձնաժողովի տեսանկյունից թիրախային խմբերի վերապատրաստման կարիքների վերլուծություն.
- առկա նյութերի և իրականացվող վերապատրաստումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում .
- Քաղաքացիական ծառայության գրասենյակի և Պետական կառավարման ակադեմիայի ներկայացուցիչների և փորձագետների միջև հանդիպումներ.
- հարմարեցված առաջարկների մշակում (վերապատրաստման միջոցառումներ, ուսումնական նյութեր, ձեռնարկներ և այլն).
- մշակված հայեցակարգերի և նյութերի հիման վրա վերապատրաստման ծրագրերի նախագծերի մշակում/հանրային իրազեկվածության բարձրացում:

Սույն գործողության շրջանակներում դեռևս ընթացքի մեջ են քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով թվային հարթակի ստեղծման և գործարկման աշխատանքները, ինչը նպատակ է հետապնդում մշակել և ստեղծել ժամանակակից, օգտագործողի համար հարմար և տվյալների պաշտպանությանը համապատասխան ուսուցման էլեկտրոնային հարթակ, որն առանձնահատուկ նշանակություն կունենա ուսուցման բովանդակությունը նպատակային կերպով փոխանցելու կարողության տեսանկյունից: Ուսուցման հարթակի բազմակողմանի և գտնվելու վայրից անկախ օգտագործումը հնարավոր կլինի նաև շարժական սարքերում:

Գործողություն 1.2

Բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ հանրակրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում

Գործողություն 1.2-ի շրջանակներում առկա խնդիրներն են՝

Ստեղծել հանրակրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրեր, անհրաժեշտ գրականություն, դասավանդողի ուղեցույցներ և այլ ուսումնաօժանդակ պարագաներ (պաստառներ, խաղեր, տեսանյութեր և այլն):

Այլ կերպ ասած՝

- մշակել համապատասխան դասավանդման ծրագիր.
- մշակել համապատասխան դասավանդման նյութեր.
- առկա նյութերի տեղայնացման նպատակով մանկավարժների շրջանում կազմակերպել վերապատրաստումներ.
- վերապատրաստումների և կրթության կազմակերպիչների առաջարկությունների հիման վրա կատարել անհրաժեշտ վերանայումներ.
- իրականացնել ուսուցիչների վերապատրաստումներ.
- իրականացնել ծնողների վերապատրաստումներ.
- համագործակցել ԿԳՄՍ նախարարության և ուսուցիչներին վերապատրաստող կազմակերպությունների հետ:

1.2 գործողության աշխատանքները գործարկվել են 2023 թվականից:

Հանձնաժողովի կողմից նախատեսվում է ուսուցիչների համար կազմակերպել ուղղորդիչ միջոցառումներ, ինչպես նաև մշակել և տպագրել ուղղորդիչ մեթոդաբանական ձեռնարկ, ինչը կօգնի ուսուցիչներին թեմայի դասավանդման ընթացքում, ինչպես նաև թույլ կտա արդյունավետորեն կիրառել նախանշված մեթոդաբանությունը և, որպես հետևանք, բարձրացնել դասավանդման արդյունավետությունը:

Գործողություն 1.3

Բարեվարքության կրթության ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ բարձրագույն կրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում

Նշված գործողության արդյունքում իրականացվել է՝

- Հանձնաժողովի տեսանկյունից թիրախային խմբերի վերապատրաստման կարիքների վերլուծություն.
- բուհերում առկա նյութերի և կրթության/վերապատրաստման հաշվառում.
- քննարկում հայաստանյան բուհերի և շահագրգիռ կառույցների հետ:

Ծրագրի իրականացման շրջանակում կազմակերպված քննարկմանը մասնակցել են Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայ-ռուսական համալսարանի, Պետական կառավարման ակադեմիայի, Ոստիկանության կրթահամալիրի, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ կրթական ծրագրեր իրականացրած՝ քաղաքացիական հասարակությունը ներկայացնող՝ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և Իրավաբանների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչները:

ԵՄ Թվինինգ ծրագրի փորձագետները ներկայացրել են կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ Գերմանիայում կիրառվող կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությանը ներկայացվող որոշ մանրամասներ:

Հաշվի առնելով, որ այս ձևաչափով քննարկում տեղի է ունեցել առաջին անգամ, և այն, որպես նպատակ, ենթադրում է հետագա համագործակցություն, որոշվել է կարծիքների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակել կրթական ծրագրի բովանդակություն, իսկ դրա տեղայնացումը ենթադրվում է ակադեմիական ազատության շրջանակում՝

պահպանելով այս ուղղությամբ պետության ստանձնած միջազգային պարտավորություններն ու ռազմավարական ուղղությունները:

Քննարկման արդյունքների հիման վրա փորձագետները ներկայացրել են դիտարկումներ և առաջարկություններ: Մասնավորապես՝

- բուհերում դեռևս չկան կոռուպցիայի կանխարգելման թեմայով պարտադիր մոդուլներ.

- կոռուպցիայի կանխարգելումը դասավանդվում է գոյություն ունեցող մոդուլների շրջանակներում (ստվերային տնտեսություն, փողերի լվացում).

- ընդունվել է պարտադիր մոդուլի համար ներկայացված բովանդակությունը: Առաջարկվել է անհատական ուսումնական ծրագրերի համար մշակել հատուկ մոդուլներ.

- հաջորդ առաքելության ժամանակ հետաքրքրված դասախոսների փոքր խմբի հետ քննարկվելու է փորձագետների կողմից մշակված մոդուլի բովանդակությունը և անհրաժեշտ հմտությունները (2023թ).

- հաջորդ առաքելության ժամանակ հետաքրքրված դասախոսների փոքր խմբի հետ պետք է մշակվի նաև ներկայացվող թեմաների ուսումնական նյութը: Այնուհետև այս նյութը կփորձարկվի և կշտկվի «Պրոֆեսորների վերապատրաստման» դասընթացի ժամանակ (2023թ):

Գործողություն 1.4

Հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի վերաբերյալ մասնագիտական զարգացման համակարգի ստեղծում և բարեվարքության վերապատրաստման ծրագրերի նյութերի մշակում, հաստատում և հրապարակում:

1.4 գործողության արդյունքում նախատեսված է՝

- բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային ծառայողների համար մշակել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և նյութեր.

- «բարեվարքություն և կոռուպցիայի կանխարգելում» թեմայով մշակել վերապատրաստողների վերապատրաստման (ToT) հայեցակարգ.

- կազմել ToT ծրագրի և նյութերի նախագիծը.

- վերապատրաստել վերապատրաստողներ բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթացների համար.

- ToT ծրագրի արդյունքում որակավորված վերապատրաստողների օգնությամբ անցկացնել բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ վերապատրաստումներ հանրային ծառայողների համար:

Գործողության շրջանակում 2022 թվականին իրականացվել են քննարկումներ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության թեմաներով դասընթացներ իրականացնող ՀԿ-ների ներկայացուցիչների և փորձագետների հետ, որի ընթացքում վերհանված խնդիրների հիման վրա փորձագետներն առաջարկել են՝

- մշակել դասընթաց, որը կենտրոնացած է ոչ այնքան գիտելիքի, որքան կազմակերպություններում փորձի վրա.

- դասընթացը պետք է ընթանա ինդուկտիվ ձևաչափով՝ դեպքի նկարագրում և միայն այնքան տեսություն, որքան անհրաժեշտ է տվյալ դեպքը լուծելու համար: (Մոտեցումը բխում է նեյրոդիդակտիկայի արդյունքներից):

- դեպքերը պետք է համապատասխանեն այն կազմակերպության մշակույթին, որտեղ դրանք դիտարկվում են:

Հանձնաժողովն առաջարկել է վերապատրաստումների հետևյալ թեմաները՝

- «Կոռուպցիայի կանխարգելում»
- «Շահերի բախումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»
- «Անհամատեղելիության պահանջները՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»
- «Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»
- «Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»
- «Բարեվարքության համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»:

Գործողության շրջանակում Հանձնաժողովի 12 աշխատակից ընտրվել է որպես վերապատրաստողների վերապատրաստող և ToT վերապատրաստումներն իրականացվելու են 2023 թվականից սկսած:

Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի գործում մեծապես կարևորվում է Եվրոպական Միության դերն ու որդեգրած արժեքահամակարգը: Հայաստանի համար կարևոր է համակարգային փոփոխությունների իրականացումը, որը միտված է լրացնելու կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ բոլոր անկատար կողմերը:

Քաղաքականությունն արդյունավետ կազմակերպելու համար չափազանց կարևոր է կառավարման հիմնանար սկզբունքների ամրագրումը: Հանձնաժողովի համար իրապես կարևոր է, որ Հայաստանը միջազգային վարկանիշային ցանկերում էլ ավելի առաջանցիկ դիրքեր զբաղեցնի: Այս ուղղությամբ Հանձնաժողովի կողմից իրականացվում է ամենօրյա հետևողական աշխատանք, և Հանձնաժողովը ցանկանում է մեր երկիրը տեսնել այն հանգրվանում, որտեղ ՀՀ քաղաքացիների համար ավելի բարեվարք դառնալու վճռականությունը կլինի հիմնարար սկզբունք:

ԵՄ Թվինինիզ ծրագիրը՝ իր 4 բաղադրիչներով, չափազանց կարևոր և սպասված ծրագիր է Հանձնաժողովի համար: Կառույցի ստեղծման օրվանից կատարվել են նախապատրաստական մի շարք աշխատանքներ՝ այն պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Ծրագրի շրջանակներում 2022 թվականին ընդհանուր փոխըմբռնման, հատկապես հայեցակարգային ըմբռնման միջոցով հիմք է դրվել մի կողմից թեմաների կառուցվածքի մշակման, մյուս կողմից՝ բովանդակային առումով հետագա զարգացման համար:

Ակնկալվում է ծրագրի ավարտին ունենալ քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով գործող էլեկտրոնային ուսուցման թվային հարթակ, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար նախատեսվող դասընթացների ծրագրեր, մշակված առարկայական ծրագիր՝ նախատեսված հանրակրթական համակարգի համար, իսկ վերջինիս շրջանակներում՝ ուսուցիչների վերապատրաստման ծրագիր, բարձրագույն կրթական համակարգում մեկ կիսամյակի պարտադիր ներդրված բարեվարքության դասընթաց/ծրագիր՝ առնվազն 1 ԲՈՒՀ-ում, վերջինիս շրջանակներում վերապատրաստված դասախոսներ, կրթական տարբեր մակարդակների համար մշակված ուսումնառժանդակ նյութեր, հանրային ծառայողների համար մշակված մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և նյութեր:

8.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

Կոռուպցիայի կանխարգելմանը վերաբերող թեմաները հանրային շրջանակներում առավել տարածելու, ինչպես նաև Հանձնաժողովի գործառույթները լավագույնս լուսաբանելու նպատակով www.cpcarmenia.am պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվում են Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր:

Մասնավորապես, 2022 թվականին www.cpcarmenia.am կայքում տեղադրվել է շուրջ 140 հրապարակում: Հանձնաժողովի անդամների և ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել են Հանձնաժողովի գործառույթներից բխող մոտ հինգ տասնյակ հարցազրույցներ, որոնք վերաբերել են թվային տեխնոլոգիաների ինտեգրմանը, բարեվարքության ուսումնասիրության հայաստանյան փորձին, վարքագծի տիպային կանոնագրքին, Հանձնաժողով ներկայացվող տարեկան հայտարարագրերի առանձնահատկություններին, հակակոռուպցիոն կրթական ծրագրերին, պաշտոնատար անձանց ստացած նվերների հաշվառմանը, իրականացրած բարեվարքության ուսումնասիրություններին և այլն:


Հանձնաժողովի գործունեությունը միջազգային հարթակում ևս հասանելի դարձնելու նպատակով թարգմանվել և կայքէջում տեղադրվել են նաև անգլալեզու նյութեր: Առաջիկայում նախատեսվում է գործարկել Հանձնաժողովի նոր կայքէջը, որը կունենա ֆունկցիոնալ ավելի լայն հնարավորություններ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել կայքէջի, ինչպես նաև սոցիալական էջերի թարմացման հաճախականությանն ու տեղադրված տեղեկատվության արդիականությանը:

Հանձնաժողովի յուրօրյան ալիքում տեղադրվում են Հանձնաժողովի անդամների հարցազրույցները, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող այլ տեսանյութեր:

Հանձնաժողովի կայքէջի, սոցցանցերի, թարգմանված հրապարակումների, ինչպես նաև թեմատիկ տեսանյութերի թվային պատկերը ներկայացված է ստորև՝

2022 թվականին Հանձնաժողովի կողմից կատարված հրապարակումների թիվը



2022 թվականին Հանձնաժողովի կողմից իրականացվել են իրազեկման միջոցառումներ, կազմակերպվել տարբեր աշխատաժողովներ:

Մասնավորապես՝

➤ կազմակերպվել է «Բարեվարքության հարցերով կազմակերպիչները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործընկեր» խորագրով պետական կառավարման համակարգի մարմինների՝ ավելի քան 60՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչների մասնակցությամբ աշխատաժողով:

Մեծապես կարևորելով պետական կառավարման համակարգի մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների դերը մեր երկրում՝ Հանձնաժողովը լիահույս է, որ այսպիսի աշխատաժողովները ոչ միայն բարեվարքության կազմակերպիչների բազմաթիվ հարցերի կպատասխանեն, այլև կդառնան հետագա համագործակցության հրաշալի սկիզբ:

Նշված աշխատաժողովով հիմք է դրվել Հանձնաժողովի և բարեվարքության հարցերով կազմակերպիչների հետագա փոխգործակցության համար՝ միաժամանակ ազդարարելով, որ Հանձնաժողովը բարեվարքության հարցերով կազմակերպիչներին ընկալում է որպես մեր երկրի համար, թերևս ամենամեծ չարիքի՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործում մեծագույն վստահելի գործընկեր և հույս ունի, որ համատեղ ջանքեր ներդնելու շնորհիվ կկարողանանք Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել ինչպես հանրային ծառայողի նկատմամբ քաղաքացիների վստահությունն ու համակրանքը, այնպես էլ քայլ առ քայլ կանխարգելիչ գործողություններով կհասնենք կոռուպցիան առավելագույնս վերացնելու՝ մեր համընդհանուր նպատակին:

Աշխատաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել Հանձնաժողովի գործառույթներին և դերակատարությանը, հանրային ծառայողների վարքագծի

տիպային կանոններին (նպատակը, կառուցվածքը, կապը բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության հետ), ինչպես նաև հայտարարագրման համակարգին:

Աշխատաժողովը միջոց է հանդիսացել նաև լսելի դարձնելու բարեվարքության հարցերով կազմակերպիչներին հուզող խնդիրները, որոնք հիմնականում առնչվել են վարքագծի կանոններին, հայտարարագրման համակարգին և Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող այլ թեմաների:

Աշխատաժողովն իրականացվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ.

➤ իրականացվել է «Բարեվարքությունը և կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով բարձր մակարդակի աշխատաժողով, որին մասնակցել են Հանձնաժողովի անդամները, ԵԽ կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների (ԳՐԵԿՈ) գործադիր քարտուղարը (առցանց), ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաներ և միջազգային փորձագետներ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, կառավարման համակարգի բարեվարքության հարցերով կազմակերպիչներ:

Ծրագիրը կազմակերպվել է ԵՄ/ԵԽ գործընկերություն հանուն լավ կառավարման II ծրագրի շրջանակում.

➤ կազմակերպվել է աշխատանքային քննարկում Հայաստանում գործող դրամաշնորհային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մասնակցությամբ: Քննարկմանը մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, միջազգային կառույցների ու մեր երկրում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման առանցքը եղել է դոնոր գործընկերների հետ կանոնավոր աշխատանքի համակարգումը և հաջորդիվ իրականացվելիք աշխատանքների պլանավորման ներկայացումը: Հանձնաժողովը ներկայացրել է դոնոր կազմակերպությունների համագործակցությամբ նախորդիվ իրականացված աշխատանքները, անդրադարձել Հանձնաժողովի առաջիկա անելիքներին ու առաջնահերթ խնդիրներին: Ծավալված քննարկման ընթացքում հանդիպման մասնակիցները ներկայացրեցրել են իրենց առաջարկները:

Հանդիպման ավարտին հստակեցվել են դրամաշնորհային ծրագրեր իրականացնող գործընկերների հետ համագործակցության ձևաչափերը և պայմանավորվածություն է ձեռք բերվել նմանատիպ հանդիպումներին շարունակական բնույթ հաղորդելու ուղղությամբ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները պատրաստակամություն են հայտնել հետագայում ևս գործակցել Հանձնաժողովի հետ և մատնանշել առաջնահերթության որոշ ուղղություններ, որոնք վերաբերել են կոռուպցիայի կանխարգելման թեմայով միասնական կրթական ծրագրերի իրականացմանը, կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը:

➤ հոկտեմբերի 13-14-ին Հանձնաժողովի, Ս4 նորվեգական հակակոռուպցիոն ռեսուրս-կենտրոնի և Հայաստանում Շվեյցարիայի դեսպանության հետ համատեղ տեղի է ունեցել «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացում» խորագրով աշխատանքային աշխատաժողով, որին մասնակցել են շուրջ 51 ներկայացուցիչներ՝ ՀՀ պետական կառավարման մարմիններից, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպություններից: Աշխատաժողովի ընթացքում դասախոսությունների միջոցով ներկայացվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման միջազգային փորձը և ՀՀ-ում համակարգի ներդրմանն առնչվող հարցեր:

Աշխատաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ թեմաներին՝

➤ «Հայաստանում կոռուպցիայի ներկա մակարդակի և այն չափելու համար օգտագործվող գործիքների վերաբերյալ ընդհանուր ակնարկ»:

➤ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացի վերաբերյալ միջազգային ստանդարտների և փորձի ներկայացում»:

➤ «Հայաստանում կոռուպցիոն ռիսկերի գնահատման հարցում Հանձնաժողովի մանդատի և դերի քննարկում»¹¹:

➤ առաջին անգամ Հայաստանում իրականացվել է «Հանրային հատվածի հաշվետվողականության շրջանակային գնահատում» խորագրով հետազոտություն: Հարցումը վերաբերել է ստորև ներկայացված երեք ուղղություններին՝

1) կադրերի հավաքագրում և կառավարում, աշխատանքի արդյունավետության գնահատում, աշխատանքի արդյունավետության հետ կապված պարզևատրումներ:

2) կոռուպցիայի ընկալում, սոցիալական նորմեր, հաշվետվողականություն և թափանցիկություն, բողոքների հասցեագրման մեխանիզմներ:

¹¹ Տե՛ս՝ <https://www.youtube.com/watch?v=ddlWHxgXWoc>

3) գնումներ, ֆինանսական կառավարում և ծրագրերի իրականացում:

Հանձնաժողովին և մյուս պետական մարմիններին ՀՀ պետական կառավարման համակարգում կոռուպցիայի պատճառները, օրինաչափություններն ու հետևանքները համակողմանիորեն գնահատելու գործընթացում օժանդակելու նպատակով Հանձնաժողովի և Համաշխարհային բանկի համագործակցությամբ իրականացվել է հանրային ծառայողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցախույզ: Հարցմանը մասնակցել է 3078 հանրային ծառայող ՀՀ 50 պետական գերատեսչություններից:

Հարցման անցկացման նպատակը և թիրախային խումբը

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգում առաջին անգամ անցկացվել է հետազոտություն, որի նպատակն է եղել պարզել, թե ինչպիսի ընկալումներ կան կոռուպցիայի, դրանց պատճառների և հետևանքների վերաբերյալ: Այսօրինակ հարցման նպատակն է եղել պարզել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում բարեվարքության ոիսկեր պարունակող գործոնները, կատարվող աշխատանքի հաշվետվողականության թույլ և ուժեղ կողմերը և աշխատանքի արդյունավետության վրա ազդող հանգամանքները: Հարցման թիրախային խումբ են ընտրվել ՀՀ կառավարությանը ենթակա մարմինների քաղաքացիական ծառայողները և ընտրված համայնքների համայնքային ծառայողները:

Մասնակիցների ընդգրկվածությունը

Յուրաքանչյուր պետական գերատեսչության մասով մասնակցության թիրախային շեմը կազմել է նվազագույնը 30%: Սակայն Հանձնաժողովը խիստ կարևորում է հետազայում առավել ընդգրկուն հարցման անցկացումը՝ ավելի մեծ հարցվողների թվով:

Հարցվողներից անկաշկանդ և իրականությանը համապատասխան պատասխաններ ստանալու համար կիրառված մեխանիզմները կամ գործիքները

Հարցումն իրականացվել է միջազգային հետազոտությունների էթիկական և գաղտնիության ստանդարտներին համապատասխան: Հարցման շրջանակներում ստացված տվյալները համապատասխանում են Համաշխարհային բանկի՝ անձնական տվյալների պաշտպանության քաղաքականությանը: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից տրված պատասխաններն ամբողջությամբ գաղտնի են: Համաձայն գործընկերների

երաշխիքների՝ հետազոտության արդյունքում ձեռք բերված ամբողջական պատկերը չի կարող կիրառվել անհատական պատասխանների տեսքով և դրանք հասանելի և օգտագործելի են խիստ սահմանափակ թվով մարդկանց շրջանակի կողմից:

Ի՞նչ կրա հարցման մասնակցությունը հանրային ծառայողին

Հարցախույզի արդյունքում ձևավորվող պատկերը Հանձնաժողովի համար կծառայի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում նախատեսվող բարեվարքությանը միտված վերապատրաստումների օրակարգերի ձևավորմանը: Պատկերավոր ասած՝ Հանձնաժողովի համար ընդհանուր ուղղություններով տեսանելի կլինեն առկա այն խնդիրները, որոնք այս կամ այն կերպ խոչընդոտում են քաղաքացիներին՝ հնարավոր կոռուպցիոն երևույթներից զերծ, բարձրորակ և արդյունավետ ծառայությունների մատուցմանը:

Հարցախույզի միջոցով Հանձնաժողովը որոշակի քարտեզագրում է կատարել հետագա գործողությունները թիրախավորված իրականացման համար:

Հայաստանի կառավարության և հանրության համար նմանարիպ հարցումների անցկացման կարևորությունը

Ինչպես նշվեց վերևում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում կոռուպցիոն երևույթների ընկալման ուղղությամբ համանման հարցում անցկացվել է առաջին անգամ:

Այստեղ կարևոր է առանձնացնել պետական կառավարման համակարգի բարեվարքության հարցերով կազմակերպիչների դերակատարությունը: Ինչպես հայտնի է, այս ինստիտուտը գտնվում է կայացման փուլում, և տվյալ գործընթացում Հանձնաժողովի և Համաշխարհային բանկի կողմից պատվիրակվել է տեղերում հարցախույզի անցկացմանը նպաստելու բավականին մեծ դերակատարություն. այս քայլով փորձ է արվել ընդգծել նրանց կարևոր դերն ու նշանակությունը տվյալ պետական ինստիտուտում:

Ի դեպ, Հանձնաժողովի և Համաշխարհային բանկի կողմից մշակվել է «Հաճախ տրվող հարցեր» ձևաչափ, որն աներկբա օգտակար է եղել ինչպես հարցախույզի մասնակիցներին, այնպես էլ գործընթացի կազմակերպիչներին:

Ակնկալվում է, որ հարցումը կօգնի և տեղեկատվություն կապահովի ՀՀ կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների հետագա պլանավորման համար: Այս աշխատանքի նպատակն է օգնել Հանձնաժողովին և ՀՀ կառավարությանը բացահայտել բարեվարքության ռիսկերը պայմանավորող առավել խորքային գործոնները, տեսնել հաշվետվողականության թույլ համակարգերի ազդեցությունն աշխատանքի արդյունավետության վրա և ծրագրել

հանրային հատվածում բարեվարքության թույլ աշխատակարգերը հաղթահարող ու հակակշռող բարեփոխումներ:

Հարցումն անց է կացվել 2022թ. ապրիլի 19-ին Հանձնաժողովի և Համաշխարհային Բանկի կառավարման գլոբալ պրակտիկայի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի¹² շրջանակներում:

Հարցումը հանդիսացել է Համաշխարհային Բանկի՝ Հանրային ծառայողների գլոբալ հետազոտության (GSPS) նախաձեռնության մաս, որի նպատակն ամբողջ աշխարհում պետական հաստատությունների հանրային ծառայողներից հետազոտական տվյալներ ստանալն է:

2022 թվականի դեկտեմբերի 7-ին, հարցմանը մասնակցած բոլոր գերատեսչություններին ուղարկվել է պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում կոռուպցիոն դրսևորումների և դրանց ընկալումների վերաբերյալ հարցախույզի արդյունքները՝ առաջարկություններ և դիտողություններ ներկայացնելու նպատակով: Հանձնաժողովի կողմից իրականացվել են նաև կարծիքի հավաքագրման աշխատանքներ, կազմվել է տեղեկանք և փոխանցվել Համաշխարհային բանկ:

➤ Հանձնաժողովն իրականացրել է «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման հանդիպումներ ուսումնական հաստատությունների ուսուցիչների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների շրջանում: Իրազեկման հանդիպումներ են իրականացվել ՀՀ Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում: Հանդիպումների նպատակն է եղել ՀՀ-ում իրականացված հակակոռուպցիոն բարեփոխումների վերաբերյալ իրազեկումը և Հանձնաժողովի գործառույթների ներկայացումը՝ որպես կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մարմին:

Իրազեկման հանդիպումներին ներգրավվել են ՀՀ մարզերի 33 ուսումնական հաստատություններից 131 մանկավարժներ և ծնողներ, իսկ Երևանում՝ 6 ուսումնական հաստատություններից՝ 141 մասնակիցներ:

Ուսուցիչների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների շրջանում իրազեկման հանդիպումների ընթացքում ներկայացվել են «կոռուպցիա» հասկացությունը, դրա դեմ պայքարի միջոցները, հակակոռուպցիոն բարեփոխումները, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը, միջազգային հակակոռուպցիոն կրթական ծրագրերը:

Մասնակիցներն իրազեկվել են, որ կոռուպցիային առնչվող թեմաներն ավելի արդյունավետ դասավանդելու համար առաջիկայում մշակվելու են ուղեցույցներ, ուսումնաօժանդակ տարբեր նյութեր:

¹²Տե՛ս՝ https://drive.google.com/file/d/1QJWk0coUgKxKeV7PoAJGU_xCRqBqgT/view

Հանդիպումների ընթացքում հավաքագրվել են մասնակիցների կողմից բարձրաձայնված մի շարք առաջարկներ և մտահոգություններ, ինչպիսիք են՝

- կոռուպցիայի դեմ պայքարում պատժիչ գործիքները թույլ են, և դրա դեմ պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ են պատժիչ մեթոդների/գործիքների ուժեղացում.

- հանրության վստահության ցածր մակարդակով է պայմանավորված կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ իրազեկման գրեթե բացակայությունը.

- տեսանելի չեն հակակոռուպցիոն պայքարի արդյունքները, առկա է պաշտպանվածության պակաս.

- կրթական ծրագրերի համար անհրաժեշտ են ուսումնասովանադակ նյութեր.

- երեխաներին փոքր տարիքից կրթելու համար ավելի արդյունավետ կլինի համացանցային խաղերի ստեղծումը.

- աշխատավարձերի ցածր լինելու հանգամանքը ևս նպաստում է կոռուպցիոն գործարքներին հակվածությանը.

- ուսուցիչների ատեստավորման համակարգը ևս իր մեջ որոշակի ռիսկեր է պարունակում և արդյունավետ չէ.

➤ ՀՀ մարզեր կատարած այցերի շրջանակներում «Հակակոռուպցիոն քաղաքականություն և բարեվարքություն» թեմայով իրազեկման հանդիպումներ են իրականացվել նաև խոշորացված համայնքների համայնքային ծառայողների և մարզպետարանների աշխատակազմերի ներկայացուցիչների հետ: Հակակոռուպցիոն իրազեկման հանդիպումների նպատակն էր համայնքային ծառայողներին և մարզպետարանների քաղաքացիական ծառայողներին (իրավաբանական, կադրերի կառավարման, ֆինանսական ստորաբաժանումների ղեկավարներ, բարեվարքության կազմակերպիչներ) տրամադրել հետևյալ ուղղություններով գիտելիքներ (տեղեկատվություն)՝

- ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականություն (ՀՀ կառավարության հակակառուպցիոն ռազմավարություն և դրա իրականացման 2019-2022թթ գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2021-2026 թթ գործունեության ծրագիր).

- կոռուպցիայի դեմ պայքարի նորաստեղծ ինստիտուցիոնալ համակարգ.

- բարեվարքության համակարգի ներդրման, բարեվարքության համակարգի բաղադրիչների, բարեվարքության կազմակերպիչների դերը և գործառույթները.

- կոռուպցիայի դեմ պայքարի գործում մինչ օրս իրականացված մեծածավալ աշխատանքներ և իրականացվող ծրագրեր:

Հանդիպումների ընթացքում ծավալված քննարկումները վերաբերել են հետևյալ թեմաներին՝

- ՀՀ կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները (ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարություն և 2019-2022թ. գործողությունների ծրագիր, ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր)։

- ՀՀ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը (ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի գույքի բռնագրավման վարչություն, հակակոռուպցիոն մասնագիտացված դատարան, էթիկայի հանձնաժողովներ)։

- Հանձնաժողովի իրավասությունները (բարեվարքության ստուգում, հայտարարագրերի ներկայացում, հանրային ծառայողների բարեվարքության համակարգի ներդրում, հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում, մամուլի մոնիթորինգ), ինչպես նաև ԿԿՀ կայքէջ, Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ և այլն։

- հանրային ծառայողների բարեվարքության համակարգի տարրերը (շահերի բախում, նվերների արգելք, անհամատեղելիության պահանջներ և այլ սահմանափակումներ, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, բարեվարքության կազմակերպիչների գործառույթները)։

- դատավորների, դատախազների և հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների բարեվարքության ստուգման գործընթացը և ԿԿՀ կողմից անձի բարեվարքության վերաբերյալ եզրակացության իրավաբանական ազդեցությունը։

- կոռուպցիայի չափման միջազգային գործիքները, այդ թվում՝ կոռուպցիայի ընկալման համաթիվ (CPI), կոռուպցիայի համաշխարհային բարոմետր և այլն։

- Հայաստանի Հանրապետությունում ներդրված էլեկտրոնային կառավարման գործիքները (e-gov.am, e-draft.am, e-request.am, e-payment.am), որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս դյուրին կերպով առնչվել պետական մարմինների հետ։

- կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ազդարարելու (հայտնելու) ինստիտուտը և ազդարարման էլեկտրոնային գործիքից օգտվելու եղանակները (գաղտնի և բաց ազդարարում, ներքին և արտաքին ազդարարում)։

- ԱՄՆ ՄՁԳ «Հայաստանի Բարեվարքություն» ծրագրի առաքելությունը, բաղադրիչները և աջակցությունը Հանձնաժողովին։

Հանդիպումների արդյունքում հանձնաժողովը կատարել է մի շարք արձանագրումներ, որոնք էապես կարող են նպաստել հետագա գործունեության արդյունավետ իրականացմանը: Դրանք են՝

- թեև բարեվարքության կազմակերպիչները պաշտոնապես նշանակված են, սակայն նրանք փաստացի չեն իրականացնում բարեվարքության կազմակերպչի գործառույթներ: Ավելին, իրենց նշանակման օրվանից մինչ օրս չի քննարկվել որևէ հարց կամ դեպք համայնքային ծառայողի բարեվարքության վերաբերյալ, որպես բարեվարքության կազմակերպիչ չեն տրվել խորհրդատվություններ.

- բարեվարքության կազմակերպիչներին նշանակելիս տվյալ աշխատակցի պաշտոնի անձնագրում կատարվել են փոփոխություններ, որի արդյունքում ավելացվել են բարեվարքության կազմակերպչի իրավասությունները: Այդպիսով, բարեվարքության կազմակերպչի գործառույթներից բացի վերջիններս համայնքապետարանի կամ մարզպետարանի աշխատակազմում ունեն նաև իրենց հիմնական գործառույթները, ինչը երկու կողմից էլ բարդացնում է աշխատանքը.

- բարեվարքության կազմակերպիչների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներն ամբողջական չեն, վերջիններիս պաշտոնի անձնագրում նախատեսված չէ մասնագիտացում, սահմանված չեն կրթության պարտադիր չափանիշներ: Մասնակիցները կարծիք հայտնեցին, որ նպատակահարմար է սահմանել նկարագիր կամ պահանջների համախումբ, որին հանրային ծառայողը պետք է համապատասխանի՝ նշված գործառույթներն իրականացնելու համար.

- արձանագրվեց բարեվարքության կազմակերպիչների գործունեության արդյունավետությանը նպաստող մեթոդական ուղեցույցի անհրաժեշտությունը.

- առաջարկվեց հայտարարատու անձանց շրջանում իրականացնել հայտարարագրման համակարգի վերաբերյալ իրազեկումներ՝ փաստելով, որ համայնքային ծառայողներ հանդիսացող հայտարարատու անձինք հայտարարգրերի լրացման ընթացքում ունենում են մի շարք դժվարություններ և այլն:

Մարզային այցերի և իրազեկման արշավների արդյունքում Հանձնաժողովն իր հետագա գործունեության ընթացքում ուշադրության կենտրոնում կպահի լուծում ակնկալող որոշ խնդիրներ:

Մասնավորապես՝

- մշակել բարեվարքության կազմակերպչի լիազորությունների իրականացման վերաբերյալ մեթոդական ուղեցույց, որը կօգնի նրանց

ամբողջական ընկալելու բարեվարքության համակարգի նպատակը, խնդիրները, ինչպես նաև բարեվարքության կազմակերպչի գործառույթները.

- կազմակերպել վերապատրաստման դասընթացներ բարեվարքության կազմակերպիչների համար՝ բարեվարքության համակարգի, բարեվարքության կազմակերպիչների գործառույթների վերաբերյալ, իրականացնել վերապատրաստումներ նոր աշխատակիցների համար, ովքեր հետագայում կարող են գիտելիքները փոխանցել իրենց գործընկերներին.

- նախաձեռնել քննարկումներ՝ ուղղված բարեվարքության կազմակերպիչների կարգավիճակը հստակեցնելուն, ինչպես նաև նրանց գործունեության անկախության օրենսդրական երաշխիքներ սահմանելուն.

- ձևավորել երկխոսության մշակույթ կոռուպցիայի կանխարգելման իրավասու մարմինների և մարզերում քաղաքացիական և համայնքային ծառայողների միջև.

- հակակոռուպցիոն մարզային հանդիպումները համայնքային և քաղաքացիական ծառայողների համար իրականացնել սահմանված պարբերականությամբ՝ առնվազն տարեկան մեկ անգամ և այլն:·

Հանդիպումների արդյունքում Հանձնաժողովը բարեվարքության կազմակերպիչների վերապատրաստումների և դասընթացների վերաբերյալ սահմանել է ուղենիշներ, որոնք օգտակար կլինեն հետագա իրազեկման արշավների ընթացքում: Մասնավորապես՝

- բարեվարքության կազմակերպիչների վերապատրաստումների և դասընթացների ընթացքում ներառել բարեվարքության վերաբերյալ գործերի ուսումնասիրություններ և վարժություններ.

- դասընթացներում ներառել ինտերակտիվ խաղեր, մասնակիցներին առաջարկել լուծել այլընտրանքային ելքեր ենթադրող այնպիսի խնդիրներ, որոնց կարող են հանդիպել իրենց գործառույթների իրականացման ընթացքում.

- առաջադրել էթիկայի հարցերի վերաբերյալ գործնական առաջադրանքներ՝ մշակված տարբեր թիրախային խմբերի համար.

- ստեղծել էլեկտրոնային ուսուցման հարթակ, որը կարող է ներառել հանրության մեջ կոռուպցիայի և շահերի բախման կանխարգելման դասընթացներ՝ բաղկացած մոդուլներից և կարճ տեսանյութերից՝ յուրաքանչյուր մոդուլից հետո առաջարկվող թեստով՝ գնահատելու մասնակիցների գիտելիքները:

- դասընթացի սկզբից և հետո տրվող հարցաթերթիկների միջոցով իրականացնել դասընթացի ազդեցության գնահատում և այլն:

• Ծրագիրն իրականացվել է Հանձնաժողովի նախաձեռնությամբ և ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի աջակցությամբ.

➤ կազմակերպվել է մի խումբ ուսանողների ճանաչողական այց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ նպատակ ունենալով այս կերպ ևս երիտասարդներին ծանոթացնել մեր երկրում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականությանը և ծրագրերին: Այս նպատակով Հանձնաժողովում հյուրընկալվել են Վանաձորի, Ալավերդու բուհերի և քոլեջների, Բերդի պետական բազմագործառույթային քոլեջի, Պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի տեխնոլոգիական քոլեջի մանկավարժներ և ուսանողներ:

Մինչև Հանձնաժողովի բուն գործառույթներին ծանոթանալը՝ ուսանողները շրջել են աշխատասենյակներում, ծանոթացել կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պայմաններին և աշխատանքների կազմակերպման ընթացքին:

Ուսանողներն անհատական գործնական գրույց-քննարկման ընթացքում ներկայացրել են իրենց պատկերացումներն ու ընկալումները «կոռուպցիա» երևույթի, դրա դեմ պայքարի կարևորության և իրենց հնարավոր մասնակցության մասին: Այնուհետև երիտասարդներին ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված այն ինստիտուտները, որոնք կոչված են կոռուպցիան կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար: Խոսվել է Հանձնաժողովի գործունեության շրջանակի՝ կառուցվածքի, գործառույթների և ստորաբաժանումների լիազորությունների մասին: Անդրադարձ է կատարվել հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց շրջանակին, հայտարարագրերի միջոցով պաշտոն զբաղեցնող անձի նյութական միջոցների թափանցիկությանը, պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ուսումնասիրության գործընթացին:

Ե՛վ ուսանողներին, և՛ մանկավարժներին հետաքրքրել է հանրային պաշտոն զբաղեցնող և հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց նյութական արժեքների թափանցիկությանը և հաշվետվողականությանը միտված հայտարարագրման համակարգը, դրանից օգտվելու ձևերը, բարեվարքության ուսումնասիրությունների և կրթական ծրագրերի տարածման ուղղությամբ տարվող աշխատանքները.

➤ անց է կացվել է կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն: Հետազոտության հիմնական նպատակն է եղել ստանալ հնարավորինս համապարփակ տեղեկություն ՀՀ բնակիչների շրջանում

կոռուպցիայի վերաբերյալ ընկալումների և վարքագծի դրսևորումների վերաբերյալ: Ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ հարցերը՝

- կոռուպցիայի հասարակական ընկալումը ՀՀ-ում.
- կոռուպցիոն իրավիճակներում անհատական վարքագիծը և փորձառությունը.
- հակակոռուպցիոն գործունեության և դրա մեխանիզմների վերաբերյալ ընդհանուր տեղեկացվածությունը.
- հակակոռուպցիոն անհատական վարքագիծն ու գործողությունները:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ քաղաքացիների մեծամասնությունը չի տարբերակում կոռուպցիոն դրսևորումները ոչ կոռուպցիոն դրսևորումներից:

Վեր հանված խնդիրները լուծելու, հանրության և հանրային ծառայողների շրջանում Հանձնաժողովի գործունեությունն ավելի տեսանելի դարձնելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով 2022 թվականին ընթացքում իրականացված իրազեկման արշավների պահանջարկը և արդյունքները, առաջիկայում նախատեսվում է՝

1. իրականացնել իրազեկման միջոցառումներ մանկավարժների և դպրոցականների ծնողների շրջանում.
2. իրականացնել իրազեկման միջոցառումներ հանրային ծառայողների շրջանում.
3. իրականացնել վերապատրաստումներ ԶԼՄ ներկայացուցիչների հետ՝ ԿԿՀ գործունեության և ՀՀ-ում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման թեմաներով.
4. ստեղծել կոռուպցիայի կանխարգելման թեմաներով տեղեկատվական ֆիլմեր կամ սոցիալական հոլովակներ.
5. կազմակերպել Հանձնաժողովի մամուլի ասուլիսներ:

Ծրագիրն իրականացվել է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող Հայաստանի բարեվարքության ծրագրի շրջանակներում :

Կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովի աշխատակիցները 2022 թվականին մասնակցել են մի շարք դասընթացների, այդ թվում ԲՀՀ-ի կողմից կազմակերպված «Ապօրինի գույքի նույնականացում», IRZ-ի կողմից կազմակերպված «Կրթական ծրագրերի կազմման առանձնահատկությունները», «Հանրային գնումների գործընթացի կոռուպցիոն

ռիսկերը» թեմաներով վերապատրաստումներին և այլն: Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման նպատակով իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն:

«Հակակոռուպցիոն կրթություն և երիտասարդության հզորացման համաշխարհային ռեսուրսը»¹³ միջազգային փորձի լավագույն հարթակ է, որի հետ ձևավորվել է համագործակցային միջավայր և պատրաստակամություն՝ աջակցելու Հայաստանում կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերի կազմմանը և արդիականացմանը:

Հանձնաժողովի կողմից զգալի աշխատանքներ են տարվել հակակոռուպցիոն կրթության գործում միջազգային մեծ հեղինակություն ունեցող Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի (International Anti-Corruption Academy(IACA)) հետ համագործակցության զարգացման ուղղությամբ: 2022 թվականի մարտի 29-ին ստորագրված համագործակցության հուշագրով¹⁴ ամրագրվել է Հանձնաժողովի և IACA հետ համագործակցությունը, որը նոր խթան է հանդիսացել երկու կառույցների համագործակցության համար:

¹³ Տե՛ս՝ [Global Resource for Anti-Corruption Education and Youth Empowerment](#)

¹⁴ Տե՛ս՝ <https://drive.google.com/file/d/1xbPDP7ZlwqVsnALvAUylj7d400bpf413/view>



IX. ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ,
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՄԵԴԻԱ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ


*9.1 Հանձնաժողովի ուսումնասիրած դիմում-գրությունները և
մամուլի հրապարակումները*

Հանձնաժողովը իր լիազորությունների շրջանակներում 2022 թվականին շարունակել է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների ու մամուլի հրապարակումների ուսումնասիրությունները և վերջիններիս հիմքով՝ վարույթների հարուցումը/հրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընդհանուր 44 դիմում/գրություն և 11 մամուլի հրապարակում՝ վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և այլ սահմանափակումների վերաբերյալ: Հանձնաժողովին հասցեագրված դիմումներից 33-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 4-ը՝ շահերի բախմանը, 3-ը՝ վարքագծի կանոններին, 1-ը՝ այլ սահմանափակումներին, 1-ը՝ նվերների ընդունմանը: Նշված դեպքերի առնչությամբ Հանձնաժողովը դիմումատուներին տրամադրել է պարզաբանում:

Հանձնաժողովի ուսումնասիրած մամուլի հրապարակումներից անհամատեղելիության պահանջներին վերաբերել են 5-ը, 3 հրապարակում վերաբերել է շահերի բախմանը, 2-ը՝ այլ սահմանափակումներին, 1-ը՝ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի:

2022 թվականին ուսումնասիրված դիմումներ/հրապարակումներ



Դիմումներ անհամատեղելիության պահանջների վերաբերյալ

Հատկանշական է, որ հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջներին առնչվող՝ Հանձնաժողով հասցեագրված դիմումների զգալի մասը վերաբերել է համայնքի ավագանու անդամի պաշտոնի՝ այլ պաշտոնների հետ համատեղելիությանը, ինչը պայմանավորված է 2021 թվականի դեկտեմբերին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով: Հանձնաժողովի գնահատմամբ մտահոգիչ է համայնքներում ավագանու անդամի պաշտոն զբաղեցնող անձանց՝ օրենքի իմաստով անհամատեղելի պաշտոնների հավակնելու և համաժամանակյա պաշտոնավարման միտումը: Այդուհանդերձ, Հանձնաժողովն ուշադրության կենտրոնում է պահում հանրային, այդ թվում՝ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման հարցը: Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ ստացված դիմումներից մի քանիսն առնչվել են ստեղծագործական, գիտական, հետազոտական աշխատանքներին և դրանց մեկնաբանմանը, հաճախ ստացվող հարցումներից է եղել նաև հասարակական կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և հանրային/քաղաքացիական ծառայության համատեղելիությանը հարցը: Վերջինիս առնչությամբ Հանձնաժողովը պարզաբանել է, որ օրենսդրությամբ ոչ առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու արգելք հանրային ծառայողների համար նախատեսված չէ, իսկ հասարակական կազմակերպությունը հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն: Ասվածից բացառություն են կազմում միայն այն դեպքերը, որք նման աշխատանքը հանրային ծառայողի կողմից իրականացվում է վճարովի հիմունքներով:

Միաժամանակ, նման դեպքերում Հանձնաժողովը դիմումատուներին հիշեցնում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները

գերակա են նրանց կողմից իրականացվող՝ թույլատրելի այլ աշխատանքի/ների նկատմամբ:

Դիմումներ վարքագծի կանոնների վերաբերյալ

Հանձնաժողովին հասցեագրվող դիմումների ծանրակշիռ մասն ամեն տարի վերաբերում է անհամատեղելիության պահանջներին: Այդուհանդերձ, հաշվետու տարում ուսումնասիրվել են վարքագծի կանոններին վերաբերելի դիմումներ՝ ներկայացված իրավիճակներում վարքագծի խախտման առկայությունը գնահատելու և վարքագծի կոնկրետ կանոնի պարզաբանման բովանդակությամբ:

1. Ստացված դիմումներից մեկում Հանձնաժողովի դիրքորոշումն է հայցվել պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից մարմնի աշխատակցի նկատմամբ ծառայողական քննությունների ընթացակարգերի ենթադրյալ խախտումների և քննությունների ընթացքում խտրական և ոչ օբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման կապակցությամբ: Վարքագծի կանոնի խախտումը դիմումը ստանալու պահին գնահատել հնարավոր չի եղել՝ Տիպային կանոնների և Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի, ինչպես նաև վարքագծի ոլորտային կանոնագրքերի հաստատված չլինելու հանգամանքով պայմանավորված, իսկ ծառայողական քննությունների ընթացակարգերի պահպանումը կամ դրանց հետևելը Հանձնաժողովի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից դուրս է: Այնուամենայնիվ, նման դիմումները և վարքագծի կանոններին առնչվող խնդիրները պահվում են ուշադրության կենտրոնում՝ համապատասխան կանոնագրքերում հասցեագրելու նպատակով:

2. Մեկ այլ դեպքում դիմումատուն Հանձնաժողովի դիրքորոշումն է հայցել քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձի դրսևորած վարքագծի առնչությամբ: Հաշվի առնելով, որ քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները և դրանց խախտման համար կիրառվող պատասխանատվությունը սահմանված են/կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, և վերջիններիս նկատմամբ կիրառվում են ՀՀ փոխվարչապետի կողմից հաստատված վարքագծի կանոնները, Հանձնաժողովը դիմումատուին ուղղորդել է ներկայացված իրավիճակում դրսևորված վարքագիծը քննարկելիս առաջնորդվել «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համապատասխան հոդվածների կարգավորումներով:

Դիմումներ շահերի բախման վերաբերյալ

1. Արդյո՞ք հանրային ծառայողը կարող է վարձակալության պայմանագիր կնքել այն ընկերության հետ, որում ունի բաժնեմաս (հանձնված է հավատարմագրային կառավարման):


Դիմումի քննության ընթացքում պարզվել է, որ նշված պայմանագրի կնքումը չի առնչվում անձի պաշտոնական լիազորությունների իրականացմանը և

պայմանագիրը կնքելիս հանրային ծառայողը հանդես է գալու որպես ֆիզիկական անձ, իսկ օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումները վերաբերելի են բացառապես անձի պաշտոնական լիազորությունների շրջանակում որոշման ընդունմանը կամ գործողության կատարմանը: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ նշված իրավիճակը չի կարող դիտարկվել իբրև շահերի բախման իրավիճակ:

2. Շահերի բախման վերաբերյալ մեկ այլ դիմում հիմք է հանդիսացել Հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման: Վերջինս վերաբերել է մարզպետի պաշտոն զբաղեցնող անձի կողմից՝ իր հետ փոխկապակցված անձին կոլեգիալ մարմնում պաշտոնի նշանակմանը:

Ստացված դիմումների վերլուծությունը թույլ է տալիս ձևավորել որոշակի վիճակագրություն՝ հիմնական խախտումների և դրանց միտումների շուրջ:


2022 թվականին ուսումնասիրված դիմումների վիճակագրություն



Ուսումնասիրված մամուլի հրապարակումներ

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում օրական կտրվածքով իրականացվել է ավելի քան 20 էլեկտրոնային մամուլի ուսումնասիրություն, որի հիման վրա կազմվել են մամուլի մոնիթորինգի ամփոփ տեղեկանքներ: Կազմված տեղեկանքների վիճակագրությունը ներկայացված է ստորև՝

2022 թվականին իրականացված մամուլի մոնիթորինգի հիման վրա կազմված տեղեկանքներ



Տեղեկանքների հիման վրա համապատասխան վարչություններն իրականացրել են իրենց գործառույթներով պայմանավորված գործողություններ, այդ թվում՝ վարույթների հարուցում:

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի առնչությամբ կարող է հարուցել վարույթ լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Լրատվամիջոցների հրապարակումները կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքի առերևույթ խախտման հատկանիշներ: Բերված գործառույթի շրջանակներում Հանձնաժողովը 2022 թվականի ընթացքում շարունակել է մեդիա մոնիթորինգի/մշտադիտարկման իրականացումը:

Ինչպես նախորդ տարիներին, հաշվետու տարում նույնպես շահերի բախմանն առնչվող հրապարակումները հիմնված են եղել պետական գնումների գործընթացում պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձանց/ընկերությունների մասնակցության դեպքերի վրա: Ուսումնասիրված հրապարակումներից երկուսը վերաբերել են հնարավոր հովանավորչության դեպքերի՝ հանրային իշխանության մարմիններում միմյանց նկատմամբ անմիջական վերադասությամբ/ենթակայությամբ աշխատանքի, ևս երկու հրապարակում վերաբերել է Ազգային ժողովի պատգամավորների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ վերջիններիս մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը դադարեցված է եղել:

պաշտոնավարման պահին, ուստի անհամատեղելիության պահանջի խախտման դեպքով վարույթ հարուցելու հիմքերը բացակայել են:

Այդուհանդերձ, հաշվետու տարում ուսումնասիրված հրապարակումներից մեկը հիմք է հանդիսացել վարույթի հարուցման՝ համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ՝ միաժամանակ անհամատեղելիության պահանջների խախտման և շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովին են հասցեագրվել ևս 79 դիմում/գրություններ, որոնցում բարձրացված հարցերի բովանդակությամբ պայմանավորված՝ մարմնի կողմից, մասնավորապես, իրականացվել են իրավասու մարմիններ վերահասցեագրելու գործողությունները.

Քաղաքացիների կողմից հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովին հասցեագրված թվով երկու դիմում-բողոքների հիման վրա հարուցվել են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված՝ համապատասխան վարույթներ, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման, մյուսը շահերի բախման առերևույթ դեպքի հիմքով:

Հանձնաժողովին քաղաքացիների կողմից հասցեագրված թվով 11 դիմում-բողոքներ, որոնցով բարձրացված հարցերը վերաբերել են կոնկրետ դատական գործերով կայացված դատական ակտերի առնչությամբ դատավորների կողմից դատավարական և նյութական իրավունքի նորմերի առերևույթ խախտումներին, Հանձնաժողովի կողմից վերահասցեագրվել են Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, իսկ այլ մարմինների իրավասություններին վերաբերող հարցեր պարունակող քաղաքացիների թվով 3 դիմումներ վերահասցեագրվել են իրավասու այլ պետական մարմիններ, իսկ 1-ը՝ տեղական ինքնակառավարման մարմին: Միաժամանակ, թվով 2 դիմումներ ներկայացվել են Մարդու իրավունքների պաշտպանին:

Հանձնաժողովին հասցեագրված հանցագործության առերևույթ հատկանիշներ պարունակող քաղաքացիների թվով 13 դիմում-բողոքներ ներկայացվել են Գլխավոր դատախազություն:

Հանձնաժողովի կողմից դիմում-բողոքները իրավասու այլ մարմիններ վերահասցեագրվելու պարագայում այդ մասին ծանուցվել են բոլոր դիմումատու անձինք՝ միաժամանակ վերջիններիս է ներկայացվել նաև գրավոր հիմնավորում դիմումով ներկայացված հարցերը՝ Հանձնաժողովին վերապահված գործառույթների շրջանակից դուրս լինելու վերաբերյալ: Հանձնաժողովին հասցեագրված մյուս դիմում/գրությունները հիմնականում կրել են հարցումների բնույթ, որոնցում, մասնավորապես, բարձրացվել են հայտարարագրման

գործընթացը կանոնակարգող կոնկրետ իրավանորմերի բովանդակության պարզաբանման հարցեր, որոնց կապակցությամբ Հանձնաժողովի կողմից ներկայացվել են գրավոր պարզաբանումներ՝ ներկայացված կոնկրետ դեպքերում կիրառման ենթակա իրավանորմերի վերաբերյալ:

Մասնավորապես, հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձը՝ Հանձնաժողովին հասցեագրված իր դիմումով բարձրացրել էր հարց այն մասին, արդյո՞ք պաշտոնատար անձի հարսանեկան արարողությունը «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ նվերների ընդունման համար թույլատրելի միջոցառում է համարվում, արդյո՞ք պաշտոնատար անձի կողմից հարսանեկան արարողության ժամանակ ստացված նվերները, որպես եկամուտ, հայտարարագրման ենթակա տվյալներ են: Նշված հարցերի կապակցությամբ Հանձնաժողովը պարզաբանել էր, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կանոնակարգումներով ամրագրված նվերների ընդունման համար թույլատրելի միջոցառումների դեպքերն ընդգրկում են պետական կամ պաշտոնական այցերը կամ միջոցառումները, ինչպես նաև հրապարակային միջոցառումները, որոնք նույնական չեն հարսանեկան արարողության հետ, քանի որ հարսանեկան արարողությունը բացառապես անձնական բնույթի միջոցառում է: Տվյալ պարագայում պաշտոնատար անձի կողմից հարսանեկան արարողության ժամանակ ստացված նվերները ենթակա են հայտարարագրման որպես գույք և որպես եկամուտ: Մասնավորապես, չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ (դրան համարժեք արտարժույթ) կամ ավելի բարձր արժեք ունենալու դեպքում նվերը հայտարարագրվում է որպես թանկարժեք գույք՝ գույքի հայտարարագրում, իսկ մնացած դեպքերում, բացառությամբ 200 000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը չգերազանցող նվերի, հայտարարագրվում է որպես եկամուտ՝ եկամուտների հայտարարագրում:

Մեկ այլ դեպքում, դիմումատուն հարց է բարձրացվել արդյո՞ք կրում է տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն այն պարագայում, երբ վերջինս աշխատանքից ազատման հրամանը վիճարկվում է դատական կարգով:

Նշված հարցի առնչությամբ Հանձնաժողովն անդրադարձել է դատական պրակտիկային՝ մասնավորապես վկայակոչելով օրինական ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատարանի 2020 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՎԴ/4738/05/19 վճիռը, որով քննարման առարկա է հանդիսացել պաշտոնից ազատման հրամանի կասեցման հարցը՝ դատական կարգով վիճարկվելու պարագայում: Նշված դատական ակտով ՀՀ վարչական դատարանը եզրահանգման է եկել, որ անկախ պաշտոնից ազատման մասին հրամանի

դատական կարգով վիճարկման հանգամանքից, հայտարարատու անձը պարտավոր է ներկայացնել պաշտոնական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր: Նշվածից հետևում է, որ կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր ազատման հրամանի վիճարկումը չի կարող դիտարկվել որպես պաշտոնավարման շարունակություն: Այս առումով Հանձնաժողովը նշել է նաև, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագիր ներկայացնելու ժամկետների կանոնակարգումների համաձայն՝ հայտարարատու անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը: Նշվածից հետևում է, որ պաշտոնից ազատումից հետո, երբ փաստացի դադարեցրել է անձի պաշտոնավարումը, դիմումատուն տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չի կրում:

Մեկ այլ դեպքում, դիմումատուն, խնդրել է պարզաբանել, արդյո՞ք քաղաքացիական ծառայող հանդիսացող անձը կարող է դառնալ խնամատար ծնող: Հանձնաժողովը, հանրային ծառայության մասին օրենսդրության և ընտանեկան օրենսդրության վերաբերելի իրավակարգավորումները համակարգային առումով վերլուծելով, դիմումատուին պարզաբանել է, որ խնամատար ընտանիքում երեխայի խնամքը և դաստիարակությունը իրականացվում են երեխայի խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու մասին պայմանագրի հիման վրա, որի շրջանակներում խնամատար ծնողը օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է վարձատրություն (եկամուտ): Նշվածով պայմանավորված՝ Հանձնաժողովը եզրահանգել է, որ խնամատարության պայմանագրով նախատեսված խնամատար ծնող հանդիսանալու հանգամանքը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելի է հանրային (քաղաքացիական) ծառայության պաշտոնի հետ:

Լրագրողի կողմից ներկայացված դիմումով բարձացվել է հարցը, թե ինչու՞ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրված առևտրային կազմակերպությունների ղեկավար կազմի ներկայացուցիչները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չեն ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրեր, եթե նշված պաշտոնյաների կողմից հայտարարագիր չներկայացնելը օրենսդրական բացի հետևանք է, ապա Հանձնաժողովն ի՞նչ քայլեր է իրականացնում այդ ուղղությամբ:

Դիմումին ներկայացված պատասխանում Հանձնաժողովը ներկայացրել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգավորումները հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակի վերաբերյալ՝ նշելով, որ դիմումում վկայակոչված անձանց վրա չեն տարածվում

«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվող իրավադրույթները, և հետևաբար կիրառելի չեն նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունները: Պատասխան գրությամբ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ հայտարարատու պաշտոնները սահմանվել են՝ ելնելով պաշտոնեական լիազորությունների շրջանակից և կոռուպցիոն ռիսկերից, ըստ այդմ՝ պաշտոնների ցանկը աստիճանաբար ընդլայնման միտում կարող է ունենալ: Հանձնաժողովը միաժամանակ իր գրությամբ նշել է, որ հիմք ընդունելով նաև դիմումով բարձրացված հարցերը՝ հիմնավոր է համարում հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկի ընդլայնման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները՝ մատնանշված և համանման կարգավիճակ ունեցող կազմակերպությունների պաշտոնների առնչությամբ:

Նշվածին համապատասխան, հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը հանդես է եկել հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկի ընդլայնման կապակցությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածում օրենսդրական փոփոխություն իրականացնելու նախաձեռնության առաջարկությամբ: 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-540-Ն օրենքը: Նշված օրենքը, մասնավորապես, լրացվել է նոր դրույթով, որի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են համարվում նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Հանձնաժողովի պահանջով ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Հարկ է նշել, որ նշված իրավակարգավորումը ուժի մեջ կմտնի 2024 թվականի հունվարի 1-ից:



Ճ. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

Հանձնաժողովին վերապահված լիազորությունների իրականացման առավել արդյունավետ կանոնակարգումներ ապահովելու նպատակով միջազգային գործընկերների աջակցությամբ 2021 թվականի ընթացքում մշակված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծի փաթեթը (այսուհետ՝ նաև Նախագծերի փաթեթ) հաշվետու տարվա ընթացքում Արդարադատության նախարարության կողմից e-draft.am հարթակում ներկայացվել է հանրային քննարկման:

Նախագծերի փաթեթով կարգավորվում են Հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնության, գործող իրավակարգավորումների իրավական որոշակիության ապահովման, օրենսդրական բացերի վերացմանն ուղղված, հայտարարագրերի վերլուծության և բարելավարքության ուսումնասիրության գործընթացի իրականացման առանձին կառուցակարգերի որոշակիացման, ինչպես նաև նոր կառուցակարգերի ներդրման և մի շարք այլ էական հարցեր:

Նախագծերի փաթեթը շրջանառվել և կարծիքի է ներկայացվել շահագրգիռ մարմիններին: Միաժամանակ, կարևորելով Նախագծերի փաթեթում տեղ գտած հարցերի շուրջ մասնագիտական քննարկումների իրականացումը՝ օրենսդրական գործընթացին հանրային մասնակցության և դրա թափանցիկության ապահովման տեսանկյունից, Հանձնաժողովի կողմից կազմակերպվել և 2022 թվականի հոկտեմբերի 12-ին իրականացվել է հանրային քննարկում մասնագիտական հանրույթի շրջանակում:

Նախագծերի փաթեթի շրջանառության արդյունքում շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները սահմանված կարգով ուսումնասիրվել և ամփոփվել են համապատասխան ամփոփաթերթում: Արդյունքում, մի շարք դրույթներ լրամշակվեն են, և նախագծերի լրամշակված փաթեթը ամփոփաթերթի հետ միասին ներկայացվել է Արդարադատության նախարարություն:

Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը լիարժեք իրականացնելու նպատակով Հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա՝ որպես անհետաձգելի համարվող օրենքի նախագիծ 2022 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-456-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 2022 թվականի դեկտեմբերի 17-ին:

ՀՕ-456-Ն օրենքի ընդունման հիմնավորմամբ սահմանվել է, որ 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-1-Ն օրենքի 27-րդ հոդվածում օրենսդրական փոփոխությամբ առաջարկվող կարգավորման նպատակն է եղել սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի, մասնավորապես 7-9-րդ մասերի և դրանց հիման վրա 11-րդ մասի կիրառելիությամբ վեր հանված իրավական որոշակիության հետ կապված խնդիրների պատճառով, նշված դրույթները կիրառելու արդյունքում կուսակցությունների համար հնարավոր ոչ իրավաչափ հետևանքների կանխարգելումը: Այս առումով, ՀՕ-456-Ն օրենքով նախատեսվել է ապահովել 2022 թվականի համար կուսակցություններին պետական նպատակային ֆինանսավորման տրամադրումը՝ առանց սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված պայմանների ապահովման:

Սույն փոփոխությունների իրականացումից հետո Հանձնաժողովը նախատեսում է ներկայացնել ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին նոր օրենսդրական փաթեթ, որով, հիմնվելով 2022 թվականի ընթացքում արդեն իրականացված կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքների վրա՝ կապահովվի օրենսդրական բացերի շտկման միջոցով Հանձնաժողովի լիազորությունների առավել արդյունավետ իրականացումը: Արդյունքում, ակնկալվում է, որ 2023 թվականին ներկայացվելիք կուսակցությունների տարեկան հաշվետվություններին օրենքով ներկայացվող պահանջները լինեն կանխատեսելի, բխեն իրավական որոշակիության սկզբունքից և ապահովեն օրենքով հետապնդվող բուն նպատակի իրականացումը:

➤ 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունվել են 8 իրավական ակտեր: Իրավական ակտերից 6-ը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն են՝

● «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 01-Ն որոշումը.

- «Առողիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշումը.

- «Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշումը.

- «Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշումը.

- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հուլիսի 29-ի N 05-Ն որոշումը.

- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 1-ի N 03-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 06-Ն որոշումը:

- 2022 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունվել են նաև 2 ներքին (լոկալ) իրավական ակտեր՝

- «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N 02-Լ որոշումը.

- «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 31-ի N 03-Լ որոշումը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով՝ կարծիքի են ներկայացվել այլ պետական մարմինների կողմից շրջանառվող մի շարք օրենսդրական նախագծերի փաթեթներ, որոնք ուսումնասիրվել են Հանձնաժողովի կողմից: Այս առումով, Հանձնաժողովը գրավոր դիրքորոշումներ և առաջարկություններ է ներկայացրել մի շարք օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ: Մասնավորապես՝

- 1) «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող լրացումներին զուգահեռ Հանձնաժողովի կողմից

առաջարկվել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում Հանձնաժողովի լիազորություններին վերաբերող իրավանորմում՝ 37-րդ հոդվածի 7-րդ մասում նույնպես կատարել լրացումներ: Այդ կապակցությամբ մշակվել և Արդատարարության նախարարությանն է ներկայացվել լրացում նախատեսող նախագիծը՝ համապատասխան հիմնավորումներով:

Նախագծով, մասնավորապես, առաջարկվել է սահմանել հետևյալ իրավակարգավորումները՝

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներով սահմանված կարգով վարչական վարույթը կասեցվելու կամ երկարաձգվելու դեպքում կասեցման կամ երկարաձգման ժամկետները չհաշվարկել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված վարչական տույժ նշանակելու ժամկետի մեջ:

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը կարող է կասեցվել կամ երկարաձգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով, ինչպես նաև առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանող օրենքներով նախատեսված դեպքերում և ժամկետներով»:

2) «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ առաջարկությունը՝

- «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-48-Ն օրենքով նախատեսված փոփոխություններով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքը խմբագրվել է և վերնագրվել «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» վերտառությամբ օրենքով, որով պետական հիմնարկների կարգավիճակը սահմանող իրավակարգավորումներ այլևս առկա չեն:

Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ սույն փոփոխությունից հետո պետական հիմնարկներ այլևս չեն գործում, ուստի նաև առարկայազուրկ է Կառավարությանը լիազորել սահմանելու պետական կառավարման համակարգի մարմինների կազմում գործող՝ ծրագրեր իրականացնող պետական հիմնարկի օրինակելի կանոնադրության ձևը:

3) ««Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի N 654-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ ներկայացվել են հետևյալ դիտարկումները.

- «Նախագծի 2-րդ կետով օգտագործվող հիմնական հասկացությունների շարքում սահմանված են տեղեկություն հայցող և տրամադրող մարմինների հասկացությունները, համաձայն որոնց ընդլայնվել է տեղեկություն հայցող և տրամադրող մարմինների շրջանակը, որոնց մեջ Հանձնաժողովը ևս ներառված է:

Մինչդեռ, Նախագծով նախատեսված դրույթների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տեղեկություն հայցելու պարագայում Նախագծով սահմանվում են այնպիսի պահանջներ, որոնց բավարարումն անհնար է Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթի իրավազորության շրջանակներում, մասնավորապես Նախագծի 10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տեղեկություն հայցողի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի) հարցումը ձևակերպվում է տպագիր և պետք է պարունակի քրեական վարույթը նախաձեռնող կամ օպերատիվ հաշվառման գործը կազմող մարմնի անվանումը, քրեական վարույթը նախաձեռնելու կամ կազմելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, գործի համարը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածը, որով նախաձեռնվել է քրեական վարույթը:

Նշված պայմաններին բավարարող հայցում ներկայացնելը Հանձնաժողովի կողմից գործնականում անհնար է, համապատասխան անհրաժեշտ տեղեկատվությանը օբյեկտիվորեն չտիրապետելու հիմնավորմամբ:

- Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է բյուրոյի տվյալների պահոց հասկացությունը, համաձայն որի՝ բյուրոյի տվյալների պահոցը բյուրոյի գործունեության ընթացքում Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (այսուհետև՝ Ինտերպոլ) և դրա անդամ պետությունների իրավապահ մարմինների, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում հանցագործությունների մասին կուտակված տեղեկությունների դասակարգված ամբողջությունն է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ Հանձնաժողովը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով սահմանված պետական կառավարման մարմինների համակարգում ընգրկված չէ և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի իմաստով հանդիսանում է ինքնավար պետական մարմին:

- Նախագծի 3-րդ կետով սահմանված է տեղեկության տրամադրման նպատակը, այն է՝ քրեական վարույթ իրականացնող մարմիններին աջակցելը՝ քրեական վարույթում և օպերատիվ հաշվառման գործում ներգրավված անձանց հետախուզելու, նույնականացնելու, ինչպես նաև միջազգային բնույթի հանցագործությունները կանխելու, նախականելու, հայտնաբերելու և բացահայտելու համար, մինչդեռ օրենքով Հանձնաժողովին հանցավորության դեմ պայքարի անմիջական գործառույթ վերապահված չէ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում ենք վերանայել Հանձնաժողովի՝ Նախագծով սահմանված սուբյեկտների ցանկում ներառելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը և Հանձնաժողովի կողմից գործնականում նշված կարգի կիրառման հնարավորությունը»:

4) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ դիտարկումները՝

- Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ սահմանվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումներից հետևում է, որ վերացվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի պարտադիր ներկայությամբ վարչական իրավախախտման արձանագրության կազմման օրենսդրական պահանջը:

Հաշվի առնելով այն, որ արձանագրության կազմմանը ներկայացվող օրենսդրական պահանջները վերաբերելի են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու իրավասություն ունեցող բոլոր մարմինների կողմից իրականացվող վարչարարությանը, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արտահայտված՝ Սահմանադրության 50-րդ հոդվածով ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակային բացահայտմանը:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության՝ «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում են մարդու և քաղաքացու պատշաճ վարչարարության իրավունքի մաս կազմող՝ վարչական մարմինների կողմից անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, տվյալ անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելուց առաջ անձի լսված լինելու իրավունքը»: Նշվածի կապակցությամբ Սահմանադրական դատարանը փաստել է նաև, որ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության տարր

հանդիսացող՝ անձի լաված լինելու իրավունքի կոնկրետացումն օրենսդրությունում ենթադրում է այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանում, ըստ այդմ՝ մատնանշել է օրենքի նորմերում բովանդակվող իրավակարգավորիչ այնպիսի միջոցների, ձևերի առկայությունը և դրանց գործադրման հնարավորությունը, որոնք կերաշխավորեն սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը:

Վերոնշյալի համատեքստում նշենք, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի մասնակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման օրենսդրի պահանջն ինքնանպատակ չէ, այլ կոչված է երաշխավորելու արձանագրության կազմման ժամանակ անձի՝ ում վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, արձանագրության բովանդակության առթիվ բացատրություններ և դիտողություններ, ինչպես նաև վերաբերելի նյութեր ներկայացնելու իրավունքը:

Նշվածից բացի, նախատեսվող կարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ արձանագրությունը կարող է կազմվել նաև վարչական իրավախախտում կատարած անձի ներկայությամբ՝ միաժամանակ նախատեսված չեն դեպքերը, որոնց պարագայում վարչական մարմինները պարտավոր են ապահովել անձանց ներկայությամբ արձանագրությունների կազմումը: Նշվածով պայմանավորված՝ Նախագծով նախատեսվող իրավակարգավորումը մեկնաբանվում է այնպես, որ վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ կազմել արձանագրությունը, թե ոչ, թողնվում է վարչական մարմինների հայեցողությանը, ինչը ևս իրավաչափ չէ՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ Նախագծով սահմանված չեն վարչական մարմնի կողմից նման հայեցողություն դրսևորելու հիմքերը:

Վարչական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքների իրացման պատշաճ կառուցակարգերի ապահովման համատեքստում, նշենք, որ այլ է իրավիճակն էլեկտրոնային համակարգերում առկա փաստական տվյալների հիման վրա ինքնաշխատ կերպով հայտնաբերվող խախտումների պարագայում, որտեղ արձանագրությունները կարող են կազմվել ոչ թղթային տարբերակով: Նշված դեպքում անձինք հնարավորություն ունեն համակարգի միջոցով ապահովել իրենց մասնակցությունը էլեկտրոնային եղանակով ձևավորվող արձանագրությունների կազմմանը:

● Նախագծով նախատեսվում է ներդնել վարչական գործերի քննության գրավոր ընթացակարգ, որին առնչվող կանոնակարգումներից հետևում

է, որ վարչական մարմնի կողմից գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվելու դեպքում վարչական պատասխանատվության ենթարկվող անձի լաված լինելու իրավունքն ապահովվում է վարույթի հարուցման մասին ծանուցմամբ: Ընդ որում, նախատեսվող կարգավորումներով ծանուցագրին ներկայացվող պահանջ է սահմանվում, ինչպես վարչական վարույթի վերաբերյալ նյութերը վարչական վարույթի մասնակցին ներկայացնելու, այնպես էլ վերջինիս իրավունքների և պարտականությունների մասին, անհրաժեշտ նյութեր ներկայացնելու, դրանց ներկայացման ժամկետների և սահմանված ժամկետում չներկայացնելու հետևանքների մասին գրավոր պարզաբանում ներկայացնելու առումով:

Տվյալ պարագայում պարտադիր է դառնում Նախագծով նախատեսվող պահանջների պահպանմամբ վարույթի մասնակիցներին ծանուցել վարույթի հարուցման մասին, ինչը, բովանդակային առումով վարչական մարմնի կողմից իրականացվող գործողություն է, որով ըստ էության սահմանվում է գործի քննության ընթացակարգը, վարույթի մասնակցին են ներկայացվում գործի քննության համար էական նշանակություն ունեցող նյութերը, ամրագրվում է վերջինիս կողմից բացատրությունների, ապացույցների և այլ անհրաժեշտ նյութերի ներկայացման ժամկետներ, դրանք չներկայացնելու իրավական հետևանքներ: Նշված հանգամանքները հաշվի առնելով, առաջարկվում է վարույթի հարուցման մասին ծանուցագրի փոխարեն սահմանել վարույթի հարուցման մասին որոշմամբ վերը նշված գործողություններն իրականացնելու կարգավորում:

Այսպես, Նախագծով նախատեսված վարույթի հարուցելու մասին ծանուցագրով, մասնավորապես, լուծվում է վարույթի ընթացքի վերաբերյալ այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք են գործի քննությունը գրավոր, թե բանավոր ընթացակարգով իրականացնելը, վարույթում քննարկվող հարցերի շրջանակը, ինչը յուրաքանչյուր դեպքում գտնում ենք, որ կարելի է սահմանել գործի քննությունն իրականացնող մարմնի որոշմամբ, (վարչական դատավարությունում, օրինակ, վարույթ ընդունելու մասին որոշմամբ է լուծվում գործը գրավոր ընթացակարգով քննելու հարցը (<< վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդված), Միաժամանակ կարելի է սահմանել հստակ ժամկետ սկսած վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման օրվանից վարույթի մասնակցին վարույթի հարուցելու մասին ծանուցելու (առաջարկվող տարբերակում նաև՝ վարույթի հարուցելու որոշում կայացելու) համար, ինչ իր հերթին ընթացակարգային առումով կորոշակիացնի վարչական մարմնիների գործողությունները, մասնավորապես գործի քննությունը բանավոր,

թե գրավոր ընթացակարգով իրականացնելու հարցում եզրահանգման գալու հարցում:

Նախագծով սահմանվում է, որ վարույթի մասնակցի միջնորդությունները, բացատրությունները, ապացույցները և այլ անհրաժեշտ նյութերը կարող են ներկայացվել վարչական գործի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացնելու վերաբերյալ ծանուցվելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, մինչդեռ, նշված ժամկետից դուրս ներկայացված դիրքորոշումները և(կամ) առարկությունները թողնվում են առանց քննարկման:

- Նշենք նաև, որ Նախագծով նախատեսված՝ բացատրությունների ապացույցների և անհրաժեշտ նյութերի ներկայացման մեկաբաթյա ժամկետի սահմանմամբ, իրավաչափ չէ դրանք սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու պարագայում առանց քննության թողնելու օրենսդրական կարգավորումներ սահմանելը, ինչը, գտնում ենք, որ չի ապահովում Սահմանադրությամբ երաշխավորված անձանց պատշաճ վարչարարության իրավունքը: Նշվածն առարկայական է դառնում՝ մասնավորապես հաշվի առնելով այն, որ վարույթի մասնակցի դիրքորոշումները, ներկայացվող ապացույցները կարող են էական նշանակություն ունենալ գործի քննության և լուծման համար: Այս առումով պետք է հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ գործնականում չի բացառվում այն իրողությունը, որ սահմանված ժամկետում վարույթի մասնակցի կողմից անհրաժեշտ նյութեր չներկայացնելը հաճախ այլ մարմիններ, կազմակերպություններ կատարված հարցումների պատասխանների ուշացման հետևանք է:

5) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել է հետևյալ դիտարկումը՝

- Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է հետևյալ դրույթը.

«Քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու կամ արդարացման դատավճռի դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճիռը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան նշված որոշումներն ուժի մեջ մտնելուց վեց ամսվա ընթացքում»:

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Հաշվի առնելով այն, որ առաջարկվող փոփոխությամբ, ըստ էության, նպատակ է հետապնդվում հստակեցնել քրեական հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կամ օրինական ուժի մեջ մտած արդարացման դատավճիռը վարչական մարմնում ստանալու պահից վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետների հոսքի հաշվարկը, առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածում «դատավճիռը» բառից հետո ավելացնել «վարչական մարմնում» բառերը:

6) ««Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

- Նախագծի ընդունման հիմնավորմամբ հղում է կատարված, մասնավորապես, 2021 թվականի մարտի 1-ից ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին» (այսուհետ՝ ՀԸԳՀ), որի 1-ին հոդվածի (g) նպատակի, 41-րդ, 44-րդ, 50-րդ, 56-րդ, 65-րդ, 83-րդ, 90-րդ, 361-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել իր օրենսդրությունը մոտարկել Եվրոպական միության օրենսդրությանը, այն է՝ համապատասխանեցնել և ներդաշնակեցնել իր օրենսդրությունը ՀԸԳՀ-ի շրջանակներում նախատեսված Եվրոպական միության օրենսդրությանը:

Նախագծի հիմնավորմամբ վկայակոչված են ՀԸԳՀ 41-րդ, 44-րդ, 50-րդ, 56-րդ, 65-րդ, 83-րդ, 90-րդ, 361-րդ հոդվածները, որոնց համաձայն, Հայաստանի Հանրապետությունը պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկում Համաձայնագրի անբաժան մաս կազմող թիվ I, II, III, IV, V, VI, VII, ինչպես նաև XII Հավելվածներում նշված՝ Եվրոպական միության ակտերին ու միջազգային փաստաթղթերին՝ այդ Հավելվածների դրույթների համաձայն:

Վերոնշյալ Հավելվածներում սահմանված են կոնկրետ ոլորտներ, որոնք ընդգրկում են ճանապարհային փոխադրումներ, էլեկտրականություն, նավթ, շրջակա միջավայրի կառավարում և շրջակա միջավայրի ինտեգրում

քաղաքականության այլ ոլորտներ, բնության պաշտպանություն, էլեկտրոնային հաղորդակցության ցանցեր և ծառայություններ, ինչպես նաև այլ ոլորտներ:

Ինչպես Նախագծով առաջարկվող փոփոխությունների և լրացումների, այնպես էլ հիմնավորման բովանդակությունից պարզ է դառնում, որ Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացառապես բխում է ՀՀԳՀ 41-րդ, 44-րդ, 50-րդ, 56-րդ, 65-րդ, 83-րդ, 90-րդ, 361-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից՝ կոնկրետ ոլորտներում իր օրենսդրությունը մոտարկել Եվրոպական միության օրենսդրությանը: Մինչդեռ, Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող նոր լրացման համաձայն՝ «մոտարկում» հասկացությունը բնորոշվում է որպես միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում ներպետական օրենսդրության համապատասխանեցումը և ներդաշնակեցումը առանձին ոլորտներում տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված իրավական կարգավորումներին:

Տվյալ դեպքում, առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածում առաջարկվող Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 11-րդ կետը վերաշարադրել այնպիսի բովանդակությամբ, որի միջոցով «մոտարկում» հասկացությունը սահմանվի որպես ՀՀԳՀ շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխանեցում և ներդաշնակեցում Համաձայնագրով նախատեսված ոլորտներին առնչվող Եվրոպական միության օրենսդրությանը:

- ՀՀԳՀ թիվ XII Հավելվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է սահմանված ժամկետում աստիճանաբար մոտարկել իր օրենսդրությունը Եվրոպական միության հետևյալ օրենսդրությանը և միջազգային փաստաթղթերին, մասնավորապես, «Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին» 1995 թվականի հուլիսի 26-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) շրջանակներում և դրույթներին համապատասխան: Միաժամանակ, Հավելվածում մատնանշված են կոնվենցիայի կոնկրետ դրույթները, որոնք առնչվում են ձեռնարկությունների ղեկավարների քրեական պատասխանատվությանը, քրեական պատժամիջոցներին: Կոնվենցիայի արձանագրությամբ սահմանված է նաև «Ակտիվ կոռուպցիա» եզրույթը, որը նշանակում է դիտավորյալ գործողություն ցանկացած անձի կողմից, որն անմիջականորեն կամ միջնորդի միջոցով խոստանում է տալ կամ տալիս է ցանկացած տեսակի առավելություն որևէ պաշտոնատար անձի՝ իր կամ երրորդ կողմի համար, նրա պարտականությունների շրջանակում կամ գործառույթները կատարելիս իր պաշտոնական պարտականությունների խախտմամբ որևէ գործողություն կատարելու կամ կատարելուց զերծ մնալու դիմաց, ինչի հետևանքով վնաս է հասցվում կամ կարող է վնաս հասցվել Եվրոպական միության ֆինանսական շահերին: Կոնվենցիայի արձանագրությամբ սահմանված «Պասիվ

կոռուպցիա» եզրույթը նշանակում է դիտավորյալ գործողություն որևէ պաշտոնատար անձի կողմից, որն անմիջականորեն կամ միջնորդի միջոցով պահանջում կամ ստանում է ցանկացած տեսակի առավելություն՝ իր կամ երրորդ կողմի համար, կամ ընդունում է այդպիսի առավելության խոստում՝ իր պարտականությունների շրջանակում կամ գործառույթները կատարելիս իր պաշտոնական պարտականությունների խախտմամբ որևէ գործողություն կատարելու կամ կատարելուց զերծ մնալու դիմաց, ինչի հետևանքով վնաս է հասցվում կամ կարող է վնաս հասցվել Եվրոպական միության ֆինանսական շահերին:

Միաժամանակ, նույն արձանագրությամբ սահմանված «Շահերի բախում» հասկացությունը նշանակում է ցանկացած իրավիճակ, որը կարող է կասկածի տակ դնել անձնակազմի՝ «Միության ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառելի ֆինանսական կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 966/2012 կանոնակարգի (ԵՄ, Եվրատոմ) 57-րդ հոդվածում սահմանված պատճառներով անկողմնակալ և օբյեկտիվորեն գործելու կարողությունը և Խորհրդի ուժը կորցրած ճանաչող կանոնակարգ (ԵՄ, Եվրատոմ) թիվ 1605/2002:

Տվյալ պարագայում, կոռուպցիայի և շահերի բախման հասկացությունների վերոնշյալ սահմանումները բովանդակային առումով չեն համապատասխանում Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթից բխող իրավասություններին, այլ հիմնականում վերաբերում են փողերի լվացմանը, ակտիվ և պասիվ կոռուպցիայի արարքներին մասնակցելը և դրանք հրահրելը արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական պատժամիջոցներով պատժելի լինելուն:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովի կարծիքով, ՀԸԳՀ թիվ XII Հավելվածի դրույթները բովանդակային առումով վերաբերելի չեն Հանձնաժողովի գործառույթներին, հետևաբար նաև՝ Նախագծով սահմանված Եվրոպական միության օրենսդրության մոտարկում ապահովելը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը կարծիքի է ներկայացվել միայն ինքնավար մարմիններին, իսկ Նախագծի հիմնավորման մեջ նշված ՀԸԳՀ համապատասխան Հավելվածներով նշված են մի շարք ոլորտներ, որոնց օրենսդրությունն անհրաժեշտ է մոտարկել Եվրոպական միության օրենսդրությանը, առաջարկվում է քննարկել Նախագիծը շահագրգիռ այլ մարմինների կարծիքին ևս ներկայացնելու անհրաժեշտության հարցը:

7) «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների,

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծերի փաթեթի վերաբերյալ արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց կապակցությամբ ներկայացվել են հետևյալ առաջարկություններն ու դիտողությունները՝

- միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր ազդարարման համակարգման, վիճակագրության վարման պարտականությունը դնել համապատասխան գործառույթներ իրականացնելու մանդատ ունեցող մարմնի վրա: Միաժամանակ հաշվի առնել այն հանգամանքը, որ Հանձնաժողովի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջև նախագծերի փաթեթով առաջարկվող գործառույթները հստակ տարանջատված չեն, ինչպես նաև սահմանված չեն այդ գործառույթներն իրականացնելուն ուղղված համապատասխան կառուցակարգեր և մեխանիզմներ:

- կարգավորումներում հստակորեն սահմանել, որ Հանձնաժողովը և Գլխավոր դատախազությունն ունեն հասանելիություն ազդարարման հարթակի բացառապես առանձին հատվածներին՝ Հանձնաժողովը՝ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների վերաբերյալ հաղորդումների մասով, իսկ Գլխավոր դատախազությունը՝ կոռուպցիոն հանցագործություններին վերաբերելի մասով: Միևնույն ժամանակ, առաջարկվում է Նախագծով և հարակից՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքով նախատեսել անցումային դրույթներ այն նորմերի գործողության ժամկետների հետ կապված, որոնց իրագործումն անմիջականորեն կապված է միասնական էլեկտրոնային հարթակի վարման հասանելիության հետ.

- հաշվի առնելով, որ մասնավոր կազմակերպությունների շրջանում ազդարարման ինստիտուտի ներդրումը ենթադրում է էական փոփոխություններ, գործընթացը սահուն և անխոչընդոտ կերպով իրականացնելու համար առաջարկվում է այն քայլ առ քայլ կատարել՝ օրենսդրական ակտերում համապատասխան անցումային դրույթներ սահմանելով: Առաջարկվում է նաև հստակեցնել կազմակերպությունների վրա խնդրո առարկա օրենքի կարգավորման առարկան տարածելու մեխանիզմները:

Նախագծերի փաթեթում կիրառված մի շարք եզրույթների վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտարկումները՝

Նախագծի 4-րդ հոդվածով սահմանվող օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «էթիկայի կանոնների» բառերը անհրաժեշտ է փոխարինել «վարքագծի կանոնների» բառերով՝ ելնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի իրավակարգավորումներից: Նշված դիտարկումը վերաբերում է նաև «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և 13-րդ հոդվածի 1-ին մասում առկա «էթիկայի կանոնների» բառերին:

Նշվածի համատեքստում նշենք նաև, որ «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանվող «բարձրաստիճան պաշտոնատար անձանց» հասկացությունը ևս անհրաժեշտ է խմբագրել, ելնելով այն հանգամանքից, որ տվյալ հասկացությունը «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքներով այլևս չի կիրառվում:

- Նախագծի 7-րդ հոդվածով օրենքի նոր լրացվող 9.2-րդ հոդվածում «նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին» բառերը՝ ելնելով «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ներքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին հաղորդում ներկայացնելով: Եթե հաղորդումն ստացել է ազդարարի անմիջական ղեկավարը կամ նրա վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ կամ սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված անձը, ապա նա պարտավոր է հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին:

Հաշվի առնելով այն, որ ինքնավար մարմինների պարագայում համապատասխան մարմինն իր գործունեությունն իրականացնում է իրավազոր կազմով որոշումների ու եզրակացությունների ընդունմամբ, առաջարկվում է վերոնշյալ դրույթում «իրավասու մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «իրավասու մարմնի» բառերով:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք վերանայել նախագծերի փաթեթով նախատեսված կարգավորումները, ինչպես սահմանվող գործառույթների հստակեցման, նպատակահարմարության, այնպես էլ օրենսդրական եզրույթների միատեսակ կիրառությունն ապահովելու նպատակով:

- Առաջարկվում է վերանայել ազդարարման վարույթին վերաբերող օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված լիազորություններն իրականացնելու համար կարող է պահանջվել ավելի երկար ժամանակ, քան «Ազդարարման համակարգի մասին» օրենքով ազդարարման վարույթի համար առավելագույն ժամկետն է (30 օր): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված տեղեկություններն ու նյութերը պահանջելը և տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից ստանալը տևական գործընթաց է, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով տվյալ վարույթի առավելագույն ժամկետ սահմանվել է 90 օրը:

Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ ազդարարման վարույթ հարուցելու դեպքում Հանձնաժողովը նշված խախտումները հաստատելու կամ չհաստատելու համար անխուսափելիորեն (փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու համար) իրականացնելու է Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նույն գործողությունները, որոնք, ինչպես արդեն նշվեց, տևական գործընթացներ են, հետևաբար, ազդարարման վարույթի համար առավելագույն ժամկետ սահմանված 30 օրը գործնականում չի կարող բավարար լինել վարույթի ամբողջ ընթացքն ու ավարտն ապահովելու համար:

Թերևս, «Ազդարարման համակարգի մասին» մասին օրենքով սահմանված առավելագույն ժամկետը կարող է հաղթահարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված՝ վարույթի կասեցման կամ երկարաձգման վերաբերյալ իրավանորմերի կիրառմամբ (ընդ որում՝ նշված իրավակարգավումները հնարավոր է կիրառել տվյալ օրենքով նախատեսված հիմքերով և ժամկետների հաշվառմամբ), այնուամենայնիվ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված համապատասխան վարույթում առերևույթ խախտման (դեպքի) առնչությամբ անհրաժեշտ տվյալներ ստանալու Հանձնաժողովի իրավասություններն ազդարարման վարույթում կիրառելու իրավական հնավորությունները նախատեսված չեն «Ազդարարման համակարգի մասին» օրենքում: Մինչդեռ, խախտումների (դեպքի) բնույթով պայմանավորված՝ «Ազդարարման համակարգի մասին» օրենքով նախատեսված վարույթները նույնական են «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված համապատասխան վարույթների հետ, հետևաբար խնդրահարույց է

ազդարարման վարույթի առանձնահատկության շրջանակը, երբ տվյալ վարույթում քննվող իրավական հարցի լուծումը՝ խախտման (դեպքի) առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատված համարվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված եզրակացությամբ:

8) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ դիտարկումները՝

- Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 1.1-ին մասում «Կառավարությունը կարող է սահմանել եկամտային հարկի տարեկան հաշվարկի ներկայացման կարգ» պարբերությունը, ինչպես նաև 3-րդ հոդվածով լրացվող 147.1-ին հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորումները հստակեցնել՝ ելնելով Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, ըստ որի՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, մինչդեռ վերոնշվածներով սահմանվում են լիազորող նորմեր, որոնք բավարար չափով որոշակի չեն առ այն, որ վերոնշված լիազորող նորմերը հստակ չեն սահմանում կառավարության պարտականությունը սահմանելու նշված իրավակարգավորումները:

Միաժամանակ, նախագծով առաջարկվող հայտարարագրման համակարգի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման համակարգի համադրելիության և ընդհանուր նշանակության տեղեկատվությունը փոխադարձաբար օգտագործելու հնարավորությունների վերաբերյալ հայտնում ենք, որ ուսումնասիրելով նախագիծը՝ հնարավոր է հայտարարատու անձանց եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակում փոխգործելիության հարթակի միջոցով՝ հաշվի առնելով Նախագծով ներդրվող սոցիալական ծախսերի և «Հանրային ծառայության մասին» օրենքի 40.1-րդ հոդվածով սահմանված հայտարարագրման ենթակա ծախսերի շրջանակը:

- Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքը (այսուհետ՝ Հարկային օրենսգրք) լրացնել նոր՝ 156.1-ին հոդվածով, որը վերաբերում է ֆիզիկական անձի կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկ (այսուհետ՝ հայտարարագիր) ներկայացնելուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆիզիկական անձանց շրջանակի մեջ, ըստ Նախագծի, մտնում են նաև պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները, որոնք կարող են հանդիսանալ նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, Հանձնաժողովը մտահոգություն է հայտում, որ նշված սուբյեկտները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հայտարարագրում շփոթմունքի արդյունքում կարող են ներկայացնել, օրինակ, եկամուտ համարվող այնպիսի գործարքների վերաբերյալ տվյալներ (օրինակ՝ գույքի վաճառքից ստացված հասույթը, նվիրատվությունները և այլ), որոնք եկամուտ են համարվում միայն «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով, սակայն Հարկային օրենսգրքի իմաստով եկամուտներ չեն համարվում և չպետք է ներառվեն Նախագծով նախատեսվող հայտարարագրում:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է ֆիզիկական անձի կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկում հայտարարագրման ենթակա տվյալները սահմանելիս հաշվի առնել տվյալ հանգամանքը և համապատասխան գործիքակազմ սահմանել, որի միջոցով հնարավորինս հստակ կձևակերպվի համապատասխան տվյալի նկարագրությունը՝ Հարկային օրենսգրքի կանոնակարգումների համատեքստում եկամուտ հանդիսանալու առումով:

9) «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ ներկայացվում է հետևյալ առաջարկություններն ու դիտողությունները.

- «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետով հաստատվող Հավելված N 2-ի Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրով (այսուհետ՝ Միջոցառումների ծրագիր) Հանձնաժողովը հանդես է գալիս որպես հիմնական կատարող կամ համակատարող մի շարք միջոցառումների համար, որոնց կատարման համար նախկինում պատասխանատու չի եղել: Մասնավորապես 5-րդ

միջոցառման դեպքում Հանձնաժողովը հանդես է գալիս հիմնական կատարող, 37-րդ, 38-րդ, 39-րդ և 40-րդ կետերում՝ որպես համակատարող:

Այսպիսով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից՝ նշենք, որ Նախագծով սահմանվում են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումները՝ համապատասխան կատարողներով և համակատարողներով, ինչպես նաև վերստուգիչ ցուցիչներով, որոնք ընդգրկում են 2019-2022 թվականները, մինչդեռ վերոնշյալ միջոցառումների կատարման կամ համակատարման համար Հանձնաժողովին տրամադրվում է ոչ ավելին քան 6 ամիս ժամանակ: Բացի այդ, Նախագծով սահմանված է, որ համապատասխան իրավական ակտն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: Նշվածով պայմանավորված՝ գտնում ենք, որ իրատեսական չէ Նախագծով սահմանված միջոցառումներով նախատեսվող պարտավորությունների ստանձնումը և (կամ) կատարումը: Միաժամանակ նշենք նաև, որ նախատեսվող փոփոխությունները դուրս են Նախագծի կարգավորման առարկայի շրջանակից՝ հաշվի առնելով Նախագծով միջոցառումների ընդգրկման ժամանակահատվածը: Հետևաբար առաջարկվում է իրավական ակտը շարադրել նոր խմբագրությամբ, որի ուժի մեջ մտնելով հստակ կլինեն նախատեսվող փոփոխությունները, մասնավորապես՝ կոնկրետ միջոցառումների կատարման ժամանակահատվածը, դրանց վերաբերելի վերստուգիչ ցուցիչները, ինչպես նաև պատասխանատուները:

- «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» վերտառությամբ 1-ին բաժնի արդյունքային մոնիթորինգի ցուցիչ ենթաբաժնում սահմանվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթների թիվ՝ «հիմքային՝ 2019թ.՝ 0, 2022թ. առնվազն 200» նշումով:

Նշված՝ 2022 թվականին առնվազն 200 վարչական վարույթի վերաբերյալ վերստուգիչ ցուցիչը, գտնում ենք, որ իրատեսական չէ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարույթների հարուցման համար անհրաժեշտ են համապատասխան փաստական հիմքեր, միևնույն ժամանակ առերևույթ

խախտումները կապված են անձանց կողմից դրսևորած արարքներից (գործողություններից կամ անգործությունից), որոնք ունեն արտաքին դրսևումներ և ուղղակիորեն պայմանավորված չեն մարմնի կողմից իրականացվող գործողություններից: Ակնհատ է այն, որ կոնկրետ խախտումների առկայության դեպքում է միայն Հանձնաժողովն իրավասու իրացնել իր՝ կոնկրետ գործով վարույթ հարուցելու լիազորությունը: Ըստ այդմ՝ թվային առումով անկանխատեսելի է վարույթների քանակը, իսկ սահմանվող ցուցիչը՝ ոչ իրատեսական:

Ինչ վերաբերում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված գործերի քանակ, հիմքային 2019թ.-0 գործ, 2022թ.՝ 5 գործ» ցուցիչին, թեև այն նշված է փոքր թվով, ինչի իրականացումը գործնականում առավել կանխատեսելի է, այնուամենայնիվ, համապատասխան փաստական և իրավական հիմքերի առկայությունը, որոնց պարագայում Հանձնաժողովը պարտավոր է համապատասխան գործերը ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազություն, և ստույգ կանխատեսել հնարավոր չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կոռուպցիայի կանխարգելում (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական շահառուներ, տնտեսական մրցակցության պաշտպանություն)» վերտառությամբ 2.2-րդ բաժնի արդյունքային մոնիթորինգի ցուցիչ ենթաբաժնում նշված՝ «հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելու համար կիրառված պատասխանատվության միջոցները. հիմքային՝ 2020թ.-61, 2022թ.-30% աճ» ցուցիչը ևս կախված է Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների թվից, որոնց արդյունքում է կիրառվում պատասխանատվության միջոցներ, ուստի վերոնշյալ դիտարկումը վերաբերելի է նաև սույն ենթաբաժնին:

Նշված փաստարկներով պայմանավորված՝ խնդրում ենք վերանայել վերստուգիչ ցուցիչները՝ հաշվի առնելով այն, որ Նախագծի հիմնավորմամբ վերստուգիչ ցուցիչների հստակեցումն ըստ էության նպատակ է հետապնդում վերացնել ակնկալվող արդյունքի այդ ցուցանիշի միջև անհամապատասխանությունը:

Բացի այդ, անհասկանալի է նաև 1-ին բաժնում Հանձնաժողովին կատարող մարմին սահմանելը «ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով հարուցված քրեական վարույթների թիվը. հիմքային՝ 2020թ. 1232 գործ-2022թ.՝ աճ 20%-ով» բաժնում՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ ենթադրյալ կոռուպցիոն

հանցագործություններով քրեական վարույթների հարուցումը (ներառյալ՝ թիվը) դուրս է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից, ուստի առաջարկվում է միջոցառումների նշված բաժնում տարանջատել կատարող մարմինն:

- Միջոցառումների ծրագրի 5-րդ կետի համաձայն՝ «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում» վերտառությամբ միջոցառման շրջանակներում որպես հիմնական կատարող նշանակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մինչդեռ գործող կարգավորումներով Հանձնաժողովն այս մասով չի հանդիսանում պատասխանատու մարմին: Վերոնշյալի առնչությամբ հայտնում ենք.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը ինքնավար պետական մարմին է:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանվում է հանձնաժողովի գործառույթները, որոնց շրջանակում ներառված է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցության գործառույթը:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված են պետական կառավարման համակարգի մարմինները, որոնք են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ նախարարությունը մշակում և իրականացնում է իրեն վերապահված գործունեության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:

Վերոգրյալից հետևում է, որ ինքնավար մարմինները չեն հանդիսանում քաղաքականություն մշակող մարմիններ, հետևաբար նաև չեն կարող հանդես գալ քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացման պատասխանատու:

Միաժամանակ, Միջոցառումների ծրագրի 5-րդ կետով առաջարկվում է որպես 2020-2021 թվականների ակնկալվող արդյունք ավելացնել «Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս կարիքների գնահատման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակվում են վերապատրաստման ծրագրեր»: 2022 թվականին Հանձնաժողովը ներառել մինչ այժմ իր կատարմանը չենթադրող գործողության իրականացման մեջ՝ նշելով, որ 2021 թվականին անհրաժեշտ էր

իրականացնել որոշակի գործողություններ, առնվազն չի բխում Հանձնաժողովի շահերից և պարզապես անիրագործելի է, որով էլ պայմանավորված՝ առաջարկում ենք վերանայել և հանել Միջոցառումների ծրագրի 5-րդ կետով Հանձնաժողովին միջոցառման հիմնական կատարող մարմին նշելու առաջարկությունը, քանի որ իրատեսական չէ նաև, 2019-2022 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի ավարտին մի ամբողջ միջոցառման հիմնական կատարող նշանակել որևէ մարմին, սույն դեպքում՝ Հանձնաժողովին:

- Միջոցառումների ծրագրի 11-րդ կետում որպես 2022 թվականին ակնկալվող արդյունք նախատեսվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համակարգման իրավասությունները սահմանող օրենսդրական փաթեթի մշակում և ներկայացում Ազգային ժողով: Նույն միջոցառման շրջանակներում Հանձնաժողովի կողմից նախատեսվում է մշակել և ընդունել էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության ուղեցույցներ: Սույն միջոցառումների առնչությամբ հիմնական կատարողը եղել է Քաղաքացիական ծառայության գրասենյակը, փոփոխությունների արդյունքում հիմնական կատարողը Հանձնաժողովն է (համաձայնությամբ):

- Միջոցառումների ծրագրի 12-րդ կետի փոփոխություններով առաջարկվում է 2022 թվականին սահմանել պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով արդեն իսկ սահմանված է, որ Հանձնաժողովն ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնադիրքը): Ուստի առաջարկվում է միջոցառմամբ նշված «պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների վարքագծի կանոնները:» հասկացությունը բովանդակային համապատասխանեցնել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված հասկացությանը:

- Միջոցառումների ծրագրի 15-րդ կետում «Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում» վերտառությամբ միջոցառման շրջանակներում նշված է, որ քննարկվել է հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության և հակակոռուպցիոն

փորձաքննության համակարգերի ներդրման նպատակահարմարությունը՝ որպես լիազոր մարմին դիտարկելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Վերոնշյալի առնչությամբ հայտնում ենք.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարության սահմանած կարգով և դեպքերում օրենքի կամ Կառավարության որոշման նախագիծը մշակող պետական կառավարման մարմինը կազմակերպում է նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը:

Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-րդ կետով սահմանվում է, որ ԿԱԳ-ն ընդգրկում է գործարար միջավայրի և մրցակցության, հանրային ֆինանսների, սոցիալական, առողջապահության, շրջակա միջավայրի բնագավառները (ոլորտները): Հավելվածի 4-րդ կետում սահմանվում է ըստ ոլորտների ազդեցության գնահատում իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինները:

Սույն իրավակարգավորումներից հետևում է, որ ԿԱԳ իրականացնող մարմինները հանդիսանում են միայն պետական կառավարման համակարգի մարմինները, մինչդեռ Հանձնաժողովը չի հանդիսանում պետական կառավարման համակարգի մարմին, ուստի առաջարկվում է վերանայել վերոնշյալ միջոցառմամբ Հանձնաժողովին որպես լիազոր մարմին դիտարկելը՝ հաշվի առնելով գործող օրենսդրական կարգավորումները: Հանձնաժողովին այս բնագավառում լիազոր մարմին սահմանելու համար անհրաժեշտ է նշված նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան լրացումներ, հետևաբար այս փուլում առաջարկվում է հետաձգել նշված միջոցառման նախատեսումը:

- Հանձնաժողովին Միջոցառումների ծրագրի 37-րդ՝ «Հանրային իրազեկման արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում» վերտառությամբ միջոցառման համար առաջարկվում է նշել որպես համակատարող մարմին: Համաձայն այդ միջոցառման ծրագրի 2019-2020 թվականների ակնկալվող արդյունքների՝ «հաղորդակցման գործողությունները քարտեզագրվել են և գործողությունների ծրագիրը մշակվել է», իսկ 2021-2022 թվականների ակնկալվող արդյունքների՝ «Հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատվել է և իրականացվում է»: Այս գործողության շրջանակում ևս նախորդ տարիների համար նշված են գործողություններ, որոնք Հանձնաժողովի

կողմից չեն իրականացվել, սակայն, քանի որ հիմնական կատարող մարմինը տվյալ միջոցառման համար հանդիսանում է Արդարադատության նախարարությունը՝ Հանձնաժողովը դեմ չէ տվյալ գործողությունը կյանքի կոչելու մասով այսուհետ աջակցել Արդարադատության նախարարությանը:

- Միջոցառումների ծրագրի 38-րդ՝ ««Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում» վերտառությամբ միջոցառմանը վերաբերող որոշ աշխատանքներ Հանձնաժողովը նախկինում իրականացրել և այժմ էլ պլանավորում է իրականացնել, սակայն այդ աշխատանքները բավարար չեն հայաստանյան բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում առարկայի ներառման համար: Հաշվի առնելով, որ Հանձնաժողովը տվյալ գործողության կատարման համար ունի ընդամենը 6 ամիս, իսկ ուսումնական տարվա մեկնարկը նախատեսված է ընդամենը 2 ամսից, այդ գործողության ամբողջական կատարումը Հանձնաժողովի կողմից իրագործելի չէ, քանի որ բուհական համակարգում նոր առարկա/մոդուլ ավելացնելու համար բուհերի հետ այդ ուղղությամբ համագործակցությունն անհրաժեշտ է սկսել առնվազն 8 ամիս առաջ: Հանձնաժողովը պատրաստ է իր ներուժի չափով աջակցել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարությանը միջոցառման կատարման համար, մինչև ժամանակ, քանի որ գործողության ընթացքի և տվյալ պահին կատարման մակարդակի մասին տվյալներ չենք տիրապետում, ուստի և չենք ցանկանա լինել համակատարող տվյալ գործողության կյանքի կոչման համար:

- Միջոցառումների ծրագրի 39-րդ՝ «Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում» միջոցառման իրականացումը բխում է Հանրակրթական առարկայական չափորոշիչների փոփոխության բովանդակությունից: ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի NN 08-Լ-27-Լ հրամաններով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարվա առարկայական փորձնական չափորոշիչները և ծրագրերը, որոնք էլ փորձնական կարգով արդեն կիրառվում են հայաստանյան մի շարք դպրոցներում: Այնուամենայնիվ, հատկացվող ժամանակահատվածը այս գործողության իրականացման համար շատ սուղ է և անիրատեսական է լուրջ քայլեր իրականացնել մինչև Միջոցառումների ծրագրի ժամանակահատվածի ավարտը, քանի որ դասագրքերում փոփոխություններ կատարելը և չափորոշչային պահանջները փոփոխելը խիստ ժամանակատար և աշխատատար է: Նաև հաշվի առնելով, որ Հանձնաժողովը ամբողջովին չի տիրապետում մինչ այժմ այս

միջոցառման կատարմանն ուղղված իրականացված աշխատանքների բնույթին և մասշտաբներին, թերահավատորեն ենք մոտենում այն սահմանված ժամանակահատվածում սկսելուն և ավարտին հասցնելուն: Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Հանձնաժողովը պատրաստակամ է տրամադրել խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն ԿԳՄՍ նախարարությանը միջոցառման իրականացման համար:

- Միջոցառումների ծրագրի 40-րդ՝ «Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության թեմայով» վերտառությամբ միջոցառման շրջանակներում ըստ 2019 թվականի ակնկալվող արդյունքների՝ անհրաժեշտ էր մշակել իրազեկվածության բարձրացմանն ուղեցույցները, վերապատրաստման ծրագրերը, իսկ 2020-2022 թվականների համար նախատեսված էր անցկացնել իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ: 2022 թվականի հուլիսին Հանձնաժողովին այսպիսի պարտականության պատվիրակումը թույլ չի տալիս Հանձնաժողովին համապարփակ և անհրաժեշտ որակական մակարդակով իրականացնել գործողությունը:

- «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի Հավելված 3-ով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման և բնականոն գործունեության ապահովման համար նախատեսված ֆինանսավորումը և 2019-2022 թվականների համար բյուջեով հատկացված ֆինանսավորումը զգալիորեն տարբերվում են միմյանցից, որն առարկայական ներկայացվում է կից՝ «բյուջե 2019-2022» ֆայլում:

10) «Դատախազության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել են հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

- Նախագծի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ փոփոխվող Օրենքի 27-րդ հոդվածում ամրագրված դրույթով նախատեսվում է պետական շահերին վերաբերող քաղաքացիական կամ վարչական գործերով, որում դատախազությունը մասնակցություն չի ունեցել, օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի բողոքարկման իրավական հնարավորություն, գործով ներգրավված (դատավարության մասնակից) իրավասու մարմնի կողմից դատական ակտը չբողոքարկելու

արդյունքում: Տվյալ դրույթի կապակցությամբ նշենք, որ օրինական ուժի մտած, դատախազության գործով մասնակից չդարձած դատական ակտերի բողոքարկումը միայն Նախագծով սահմանելը նպատակահարմար չէ՝ նախևառաջ, հաշվի առնելով այն, որ քաղաքացիական կամ վարչական գործերով կայացած դատական ակտերի բողոքարկման կարգը և իրավասու սուբյեկտների շրջանակը դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերություններ են: Այսպես, գործող դատավարական նորմերի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են վերանայվել միայն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով, ինչը, սակայն, չի կարող նույնականացվել գործով դատավարության մասնակցի՝ տվյալ պարագայում իրավասու մարմնի կողմից դատական ակտը բողոքարկված չլինելու հետ: Հաշվի առնելով նման կարգավորում նախատեսելու կապակցությամբ՝ Նախագծի հիմնավորմամբ նախանշված նպատակը, որի համաձայն՝ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ գործով ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի վերակազմակերպման (այս պարագայում, գտնում ենք, որ խնդիրը կարող է լուծվել իրավահաջորդության կարգով), լուծարման, որևէ կերպ վերջինիս կարգավիճակի փոփոխման հետևանքով դատական ակտերն առանց բողոքարկման թողնելու հնարավոր դեպքերը, գտնում ենք, որ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան դրույթ սահմանել քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերում՝ որպես պետական շահերի պաշտպանության հարցերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման առանձին հիմքեր:

- Միաժամանակ, առաջարկվել է Նախագծով անդրադառնալ նաև դատախազին ներկայացվող անհամատեղելիության և այլ սահմանափակումներ սահմանող պահանջներին՝ Օրենքի գործող 49-րդ հոդվածում լրացում կատարելով՝ նպատակ ունենալով որոշակիացնել արդեն իսկ սահմանված իրավանորմերի պահանջների կիրառելիության բովանդակային սահմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատախազը հանրային պաշտոն զբաղեցնող անձ է, իսկ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիությունը և այլ սահմանափակումները սահմանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, տարընկալումներից, ոչ միատեսակ կիրառելիությունից խուսափելու նպատակով առավել նպատակահարմար է գործող հոդվածում հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված համապատասխան կարգավորումներին՝ միաժամանակ դատախազության օրենքում նախատեսելով դատախազին առնչվող առանձնահատկություններ: Նշվածի համատեքստում, մասնավորապես, առաջարկում է ամրագրել դրույթ առ այն, որ դատախազի նկատմամբ կիրառելի են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար

ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգավորումները:

11) ««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», ««Հինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտարկումներն ու առաջարկությունները.

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մասով.

- Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր բովանդակությամբ, որի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսում է հետևյալ իրավակարգավորումը. «Հայաստանի Հանրապետության տարածքում ռազմական դրություն հայտարարվելու դեպքում հեռուստատեսությամբ հեռարձարկվող և համացանցի միջոցով տարածվող բովանդակության (կոնտենտի) սահմանափակում՝ ապահովելով բացառապես ռազմահայրենասիրական բովանդակությամբ հեռուստաֆիլմերի ու հաղորդաշարերի ցուցադրումը և տեղեկատվության տարածումը.» (ընդգծումը մերն է): Տվյալ դրույթի վերաբերյալ նշենք, որ նախատեսված իրավակարգավորումները՝ կապված բացառապես ռազմահայրենասիրական բովանդակությամբ հեռուստաֆիլմերի ու հաղորդաշարերի ցուցադրման և տեղեկատվության տարածման ապահովման հետ, խնդրահարույց է, քանի որ նման կերպով կոնտենտի սահմանափակման միակ այլընտրանքը դառնում է բացառապես ռազմահայրենասիրական բովանդակությամբ հեռուստաֆիլմերի ու հաղորդաշարերի ցուցադրումը և տեղեկատվության տարածումը: Նշվածի պարագայում ստացվում է, որ կոնտենտը կարող է սահմանափակվել նաև լրատվական բովանդակությամբ հաղորդաշարերի ցուցադրումը տեղեկատվության տարածման մասով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ընդգծված հատվածը հանել, կամ վերաշարադրել այնպես, որ Կառավարության համապատասխան որոշմամբ կամ փոխվարչապետի որոշմամբ կարգավորվի կոնտենտի սահմանափակման բովանդակային շրջանակը:

- Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 8-րդ հոդված շարադրել նոր բովանդակությամբ, որի 2-րդ մասը նախատեսում է, որ «սույն հոդվածի առաջին մասի 19-րդ կետում հիշատակված միջոցառումները կարող են

իրականացվել նաև նախքան ռազմական դրություն հայտարարելը՝ դրանց անմիջականորեն սպառնացող իրական վտանգի առկայության դեպքում», իսկ վկայակոչված 19-րդ կետը նախատեսում է՝ «բնակչության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտպանական, պետության ու տնտեսության կենսագործունեության համար հատուկ նշանակություն ունեցող օբյեկտների, նյութական և մշակութային արժեքների տարահանում առավել անվտանգ տարածքներ»: Այս առումով նշենք, որ նման կարգավորմամբ սահմանված չեն ինչպես են կարգավորվելու նշված գործողությունը կատարվելու հետ կապված իրավահարաբերությունները նախքան ռազմական դրություն հայտարարելը:

- Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքի 8-րդ հոդված շարադրել նոր բովանդակությամբ, որի 4-րդ մասը նախատեսում է. «Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը»: Հաշվի առնելով այն, որ նշված կարգավորումը ռազմական դրության ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման չեղարկելուն է ուղղված, ստացվում է որ Ազգային ժողովը կամ ստիպված է լինելու ընդունել միջոցառումների իրականացումը ամբողջությամբ, կամ չեղարկելու է ամբողջությամբ: Նման կարգավորումը համարում ենք ոչ արդյունավետ և գտնում ենք, որ Ազգային ժողովը պետք է ունենա իրավասություն չեղարկելու ոչ միայն նախատեսված միջոցառումները ամբողջությամբ, այլ նաև չեղարկելու դրանց մի մասը: Հետևաբար, առաջարկում են կարգավորել հետևյալ կերպ՝ «... չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը կամ դրանց մի մասը»:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մասով.

12) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է 20-րդ հոդվածի 3-րդ մասում կատարել լրացում՝ «ծառայության» բառից հետո լրացնել «և զորահավաքային զորակոչին» բառերով: Նման կերպ լրացում կատարելուց հետո կստանանք հետևյալ պատկերը. «3. Սույն հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայության և զորահավաքային զորակոչին մասնակցելու պարտականության խախտումը քաղաքացիների համար հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության: «Զորակոչին» բառը կրկնվում է, հետևաբար

առաջարկում ենք «կամ զորահավաքային զորակոչին» բառերը լրացնել «զորակոչին» բառից հանել: Բացի դա փոփոխությամբ ստացվում է, որ օրենքով սահմանված պատասխանատվություն կարող է առաջանալ միաժամանակ երկու պայմանների առկայության դեպքում, այն է՝ 1. պարտադիր զինվորական ծառայության մասնակցելու պարտականության խախտում և 2. զորահավաքային զորակոչին մասնակցելու պարտավորության խախտում: Քանի որ առաջարկվող փոփոխության նպատակը յուրաքանչյուր դեպքի համար առանձին պատասխանատվություն սահմանելն է, առաջարկում ենք «և» բառը փոխարինել «կամ»-ով:

13) Առողջապահության նախարարի «Էթիկայի հանձնաժողովի անդամների մրցութային ընտրության կարգը, էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը, գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատելու մասին» հրամանի նախագծի վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ և դիտարկումներ, մասնավորապես.

- Նախագծի հավելված 1-ի 8-րդ կետով սահմանված է հետևյալ կարգավորումը «Մրցութային ընտրությունը իրականացնող հանձնաժողովի կազմը ձևավորվում է, ինչպես նաև կազմից նախագահը և քարտուղարն ընտրվում են տեղեկատվական բազայից՝ մրցութային ընտրությունից առավելագույնը 24 ժամ առաջ՝ համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրությամբ»: Տվյալ կարգավորումից հետևում է, որ մրցութային ընտրությունն իրականացնող հանձնաժողովը պետք է ունենա նախագահ և քարտուղար, սակայն հանձնաժողովի կազմի վերաբերյալ կարգավորում առկա չէ, ուստի առաջարկվում է առանձին դրույթով սահմանել Մրցութային ընտրությունը իրականացնող հանձնաժողովի կազմը:

- Նախագծի հավելված 1-ի 24-րդ կետի համաձայն՝ եթե հավակնորդը և հանձնաժողովի անդամը փոխկապակցված անձինք են կամ առկա է շահերի բախում, ապա հանձնաժողովի տվյալ անդամը չի մասնակցում մրցութային ընտրությանը տվյալ հավակնորդի մասով իրականացվող փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգմանը և հարցազրույցին, ինչպես նաև քվեարկությանը՝ նախապես ստորագրելով շահերի բախման առկայության վերաբերյալ հայտարարագիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «փոխկապակցված անձ» և «շահերի բախում» հասկացությունները տարբեր օրենքներով տարբեր կերպ են սահմանվում, առաջարկվում է նշված կետով հստակ սահմանել, որ տվյալ դեպքում «փոխկապակցված անձ» և «շահերի բախում» հասկացությունները պետք է

հասկանալ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի իմաստով՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով:

- Նախագծի հավելված 2-ի 6-րդ կետով սահմանված է, որ Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով:

Առաջարկվում է անդրադառնալ նաև նիստերի դռնբաց կամ դռնփակ լինելու դեպքերին՝ սահմանել բացառություններ, կապված, օրինակ՝ պետական անվտանգությանը, անձնական կյանքին կամ օրենքով պաշտպանվող այլ իրավաչափ շահերին վնաս պատճառելու դեպքերի հետ:

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Էթիկայի հանձնաժողովի անդամը հանձնաժողովում իր պարտականություններն իրականացնելիս անկախ է և առաջնորդվում է Սահմանադրությամբ և օրենսդրությամբ:

Նախագծի հավելված 2-ի 21-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի անդամը՝ կատարում հանձնաժողովի նախագահի հանձնարարականները և ցուցումները:

Առաջարկվում է հստակեցնել կոնկրետ ինչ բնույթի հանձնարարականների և ցուցումների վերաբերյալ է սահմանված տվյալ կարգավորումը, եթե դրույթը վերաբերում է աշխատանքների կատարման վերաբերյալ կազմակերպչական աշխատանքներին, ապա անհրաժեշտ է նշվածն առանձին ամրագրել, որպեսզի չստեղծվի հակասություն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանձնաժողովի անդամի անկախության երաշխիքների իրավակարգավորման միջև:

- Նախագծով, ի թիվս այլ կարգավորումների, սահմանվում են մրցութային ընտրությունն իրականացվող հանձնաժողովի անդամների հավակնորդներին ներկայացվող պահանջներ՝ շահերի բախման իրավիճակների վերաբերյալ:

Մասնավորապես, Նախագծի Հավելված 1-ի 24-րդ կետի համաձայն՝ եթե հավակնորդը և հանձնաժողովի անդամը փոխկապակցված անձինք են կամ առկա է շահերի բախում, ապա հանձնաժողովի տվյալ անդամը չի մասնակցում մրցութային ընտրությանը տվյալ հավակնորդի մասով իրականացվող փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգմանը և հարցազրույցին, ինչպես նաև քվեարկությանը՝ նախապես ստորագրելով շահերի բախման վերաբերյալ հայտարարագիր, որի ձևը նույնպես սահմանվում է սույն նախագծով (Ձև 4):

Նախագծի շրջանակներում սահմանվող «շահերի բախում» և «փոխկապակցված անձ» հասկացությունները բխում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի ձևակերպումներից:

Սույն օրենքի 37-րդ հոդվածը սահմանել է էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգը, գործունեությանը ներկայացվող պահանջները: Համաձայն սույն հոդվածի 7-րդ մասի՝ լիազոր մարմնին շահերի բախման առկայության վերաբերյալ չհայտարարագրված տվյալներ հայտնի դառնալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, էթիկայի հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են: Այսինքն, սույն օրենքով կարգավորվում են ոչ միայն շահերի բախման իրավիճակների առկայության մասին հայտնելու, այլև հայտարարագիր չներկայացնելու դեպքերը:

Նկատի ունենալով, որ մրցութային ընտրությունն իրականացվող հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները սահմանվել են՝ հիմք ընդունելով վերոնշյալ օրենքով էթիկայի հանձնաժողովի գործունեությանը ներկայացվող պահանջները, առաջարկվում է Նախագծով ևս նախատեսել դրույթ՝ մրցութային հանձնաժողովի անդամի՝ շահերի հայտարարագիր չներկայացնելու/ շահերի բախման իրավիճակի մասին չհայտնելու դեպքերի կարգավորման վերաբերյալ:



XI. ԱՄՓՈՓՈՒՄ

2019 թվականի նոյեմբերին ձևավորված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կենտրոնական տեղ է զբաղեցնում կոռուպցիայի դեմ պայքարում ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ անհատական մակարդակներում: Հանձնաժողովը լայն մանդատ ունի երաշխավորելու պետական պաշտոն զնադեցնող անձանց բարեվարքությունը, կառավարելու հայտարարագրերի համակարգը, վերահսկելու և իրականացնելու պետական պաշտոնյաների վարքագծի կանոնները՝ ստուգելով որոշակի պաշտոնների թեկնածուների բարեվարքությունը, իրականացնելով կուսակցությունների ֆինանսա ական գործունեության վերահսկողություն, ինչպես նաև համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերի գնահատման պրակտիկայի միջոցով:

Չնայած դրան՝ ձևավորման պահից սկսած Հանձնաժողովում առկա է համապատասխան մարդկային ռեսուրսի բացակայության հետևանքով Հանձնաժողովի գործառույթների լիարժեք իրականացման խնդիր: Ռեսուրսի պակասը ունի երկու դրսևորում.

1. Հանձնաժողովի գործունեության ոլորտի առանձնահատկությունով պայմանավորված՝ համապատասխան փորձ ունեցող մասնագետների բացակայություն.

2. Թափուր հաստիքների լրացման դժվարություն՝ պայմանավորված քաղաքացիական ծառայության համակարգից բխող բարդություններով.

Հաստիքների համալրման, պաշտոնների անձնագրերում տրված ձևակերպումների, դրանցում առկա պահանջների հետ կապված բախումներ են լինում Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ, ինչը կարող ենք գնահատել որպես Հանձնաժողովի ինքնավարությանը խոչընդոտող հանգամանք: Չնայած Հանձնաժողովն ինքնավար մարմին է, աշխատակազմի ձևավորումը որոշակի կախվածություն ունի Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակից, քանի որ առանց գրասենյակի կողմից տրված թույլտվության Հանձնաժողովը, օրինակ, լիազորություն չունի պաշտոնի անձնագրերում որևէ փոփոխություն կատարելու: